

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ**



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017

ԵՐԵՎԱՆ 2018

Բովանդակություն

01

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ **16**

Կենտրոնական բանկի մասին 17

Կենտրոնական բանկի գործունեության ռազմավարական ուղղությունների ամփոփում 20

02

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ **24**

Դրամավարկային քաղաքականություն 25

03

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ **30**

Ֆինանսական համակարգի կայունություն, կարգավորում և վերահսկողություն 31

Վճարահաշվարկային համակարգ 36

Արժեթղթերի շուկա 39

04

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

40

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում 41

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում 44

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն 48

Համախառն միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը 51

05

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

52

Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ վարգացում 53

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն 66

06

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

72



ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
նախագահ

Ուղերձ

Հարգելի ընթերցող

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը, որտեղ ամփոփված են Կենտրոնական բանկի 2017 թ. գործունեության հիմնական ուղղությունները, մասնավորապես՝ գների և ֆինանսական կայունության ապահովման նպատակով իրականացված քաղաքականության արդյունքները:

2017 թվականին, պահպանվող ցածր գնաճային միջավայրի պայմաններում, Կենտրոնական բանկը շարունակել է իրականացնել խթանող դրամավարկային քաղաքականություն: Վերաֆինանսավորման տոկոսադրույքը տարեսկզբին նվազեցվել է 6.0 %-ի և մինչև տարեվերջ պահպանվել այդ մակարդակում: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի քաղաքականության տոկոսադրույքի ցածր մակարդակը շարունակել է փոխանցվել պետական պարտատոմսերի, դրամային ավանդների և վարկերի տոկոսադրույքներին՝ նպաստելով ներքին պահանջարկի աճին: Արդյունքում արձանագրվել է ներքին պահանջարկի ընդլայնում, իսկ գնաճը տարվերջին կազմել է 2.6%՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում:

Տնտեսական ակտիվության վերականգնումը, արտաքին հատվածից սպասվող եկամուտների կայունացումը և խթանող դրամավարկային քաղաքականությունը նպաստել են ֆինանսական համակարգի, այդ թվում՝ ֆինանսական միջնորդության ծավալների ու շրջանակների ընդլայնմանը: Բանկային համակարգն ապահովել է բոլոր հիմնական ցուցանիշների վգալի աճ: Հիմնական ֆինանսական ցուցանիշների աճով են տարին ամփոփել նաև վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերություններն ու ֆինանսական համակարգի մյուս մասնակիցները: Հատկանշական է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կուտակային միջոցների աճի արագացումը:

Ֆինանսական համակարգի կայունության խնդրի ներքո Կենտրոնական բանկը շարունակել է կարգավորման և վերահսկողության կատարելագործման աշխատանքները: Կարգավորման դաշտի փոփոխությունները հիմնականում ուղղված են եղել նոր Սահմանադրությանը դրա համապատասխանեցմանը, ինչպես նաև միջազգային լավագույն ստանդարտների փոփոխությունների տեղայնացմանը:

Ֆինանսական կայունության համատեքստում կարգավորման և վերահսկողության դաշտի միջոցառումները մակրոտնտեսական իրավիճակի բարելավմանը վուգահեռ նպաստել են ֆինանսական համակարգի կայունության ամրապնդմանը: Բանկային համակարգը շարունակել է ապահովել բավարար կապիտալի համարժեքություն և իրացվելիության բարձր մակարդակ: Վարկային պորտֆելի որակի բարելավումը իր դրական ազդեցությունն է ունեցել բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության վրա:

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտ պայմանների ապահովմանն է ուղղված Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ մշակված և փորձարկման փուլում գտնվող «Ֆինանսական կրթման ներմուծումը դպրոցներում» ծրագիրը:

Կենտրոնական բանկի առջև դրված խնդիրների իրականացման առումով մշտապես կարևորվում է նաև աշխատակիցների մասնագիտական որակների կատարելագործումը: Անձնակազմի շարունակական կրթության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը պարբերաբար ընդլայնում է համագործակցությունը միջազգային կառույցների, տարբեր երկրների կենտրոնական բանկերի և վերապատրաստման հեղինակավոր կենտրոնների հետ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

1993	Ակգային արժույթի ներդրում
1994	Դրամավարկային քաղաքականության ծրագրի մշակում
1996	ԿԲ և բանկային հիմնարար օրենքների ընդունում
1996-2001	Ակգային վճարահաշվարկային համակարգի ստեղծում և ներդրում
2002-2004	Ֆինանսական շուկայի մասնակիցների օրենսդրության դաշտի կատարելագործում և ենթակառուցվածքների ձևավորում
2005	Կենտրոնական բանկը՝ որպես մեգակարգավորիչ և ֆինանսական կայունության պատասխանատու
2006	Գնաճի նպատակադրում
2007	Սպառողների շահերի պաշտպանություն և ֆինանսական իրավեկում
2007-մինչ օրս	Ոչ բանկ ֆինանսական հատվածի վարգացում
2012-մինչ օրս	Ինստիտուցիոնալ բարեփոխումներ և ենթակառուցվածքային վարգացումներ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՈՒՐԴ



Արթուր ՋԱՎԱԴՅԱՆ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ



Ներսես ԵՐԻՑՅԱՆ
Նախագահի տեղակալ



Վախթանգ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Նախագահի տեղակալ





Օլեգ ԱՂԱՍՅԱՆ



Աշոտ ՄԿՐՏՉՅԱՆ



Արմենակ ԴԱՐԲԻՆՅԱՆ



Արթուր ՍՏԵՓԱՆՅԱՆ



Արկադի ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

www.cba.am

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԻՆՖԼՅԱՑԻԱ
2.6%

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ
6.0%

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ
5 ՏՐԼՆ 103 ՄԼՐԴ Դ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ/ՀՆԱ
91.4 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ
4 ՏՐԼՆ 364 ՄԼՐԴ Դ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԿՏԻՎՆԵՐ/ՀՆԱ
78.2 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ
18.6 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ
32.1 %

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՑՎԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇ
141.7%

ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ/ԾԱՎԱԼ
497.8 ՄԼՐԴ Դ

ՊԱՀՈՒՍՏԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ
$2. 314 ՄԼՐԴ

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

ՆՈՐՄԱՏԻՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ	ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
71	234

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
11 515

ՄՊԱՏԱԿՈՒԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
5 700 ՔԱՆԳ

334 ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ

ԱՆՁՆԱԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ
736 ՄԱՐԴ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
63

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ» ԵՐԿԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՑԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ
8

«ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՀԿ»-ՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆՑԱԾ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՀ-ԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
8

01

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Կենտրոնական բանկի մասին

Կենտրոնական բանկի գործունեության ռազմավարական ուղղությունների ամփոփում

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **2017**

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկի 2017 թվականի համար հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է: Իր հիմնական խնդիրն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը գների կայունության ապահովմանն ուղղված միջոցներ է ձեռնարկում, մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

Կենտրոնական բանկի առաքելությունն է՝

- լինել միջազգայնորեն ճանաչված՝ որպես անկախ, դինամիկ վարգացող, հեղինակավոր, թափանցիկ, գիտելիքին միտված, միջազգային ֆինանսական համակարգի վարգացման միտումները գնահատող արդյունավետ կառույց,
- մշտապես ունենալ տնտեսական միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու և տնտեսական գործընթացների վրա արդյունավետորեն ազդելու ինստիտուցիոնալ կարողություններ,
- աջակցել երկրի մակրոտնտեսական կայուն վարգացմանը՝ լինելով տնտեսական մարտահրավերներին դիմակայելու գործում ՀՀ Կառավարության կարևոր գործընկերը:

Կենտրոնական բանկի խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- գործուն վճարահաշվարկային համակարգի ստեղծումն ու կարգացումը,
- Հայաստանի Հանրապետության արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումը և կարգավորումը,
- փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կարգավորումը,
- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման ու պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության և վարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,
- ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Ռազմավարական ուղղություններ



Իր խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը՝

- իրականացնում է Կառավարության բանկային սպասարկումը,
- հանդիսանում է Կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն,
- լիցենզավորում է բանկերը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ անձանց, կազմակերպություններին ճանաչում է որպես ֆինանսական խումբ, կարգավորում և վերահսկում է դրանց գործունեությունը,
- որպես վերջին ատյանի վարկատու՝ վարկեր է տրամադրում բանկերին,
- կարգավորում և վերահսկում է վճարահաշվարկային համակարգի, այդ թվում՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների (որոնք բանկ չեն) գործունեությունը,
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները,
- իրականացնում է դրամավարկային և ֆինանսական համակարգի վիճակագրության հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը,
- իրականացնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ տեղեկությունների հավաքագրումը, համակարգումն ու վերլուծությունը, տեղեկությունների փոխանակումը և տրամադրումը ներպետական իրավասու մարմիններին և միջազգային կազմակերպություններին, իսկ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում՝ նաև այլ պետությունների իրավասու մարմիններին:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ինչպես ամրագրված է Կենտրոնական բանկի 2015-2017 թվականների ռազմավարությամբ, Կենտրոնական բանկն իր հիմնական նպատակն իրականացնելիս ձգտում է բարձր պահել իր՝ որպես անկախ կառույցի և Հայաստանի Հանրապետությունում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում գների և ֆինանսական կայունության երաշխավորի հեղինակությունը՝ առաջնորդվելով տնտեսության կայուն վարգացման ապահովման և միջազգային շուկաներին ինտեգրվելու հեռանկարով, ձգտելով ունենալ ֆինանսական ծառայությունների ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարում:

2017 թվականին Կենտրոնական բանկի ջանքերն ուղղվել են իր առջև դրված խնդիրների լուծման ապահովման համար միջազգային լավագույն փորձի ներդրմանն ու կիրառմանը ֆինանսական հատվածում՝ ապահովելով վերջինիս բավմապանեցումը (դիվերսիֆիկացում) և համաչափ վարգացումը:

Կենտրոնական բանկի համար 2017 թվականին առաջնային են համարվել հետևյալ խնդիրները:

Գների կայունության ապահովում: 2017 թվականին ՀՀ կենտրոնական բանկը, առաջնորդվելով գնաճի նպատակադրման ռազմավարության սկզբունքներով, իրականացրել է գների կայունության ապահովմանն ու գնաճի նպատակային թիրախի շրջանակներում հասարակության գնաճային սպասումների խարսխմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: 2015 թվականի երկրորդ կեսից իրականացված ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ներքո 2017 թ. սկզբից արդեն դրսևորվել են ներքին պահանջարկի և գնաճի ավելացման միտումներ: Այս իրավիճակում Կենտրոնական բանկը 2017 թվականի ընթացքում ևս պահպանել է **դրամավարկային քաղաքականության** խթանող ուղղվածությունը՝ նպաստելով համախառն

պահանջարկի աճին և գնաճի նպատակի իրագործմանը: Արդյունքում, 12-ամսյա գնաճն աստիճանաբար աճելով, ապրիլից արդեն մտել է դրական տիրույթ, իսկ տարեվերջին գտնվել տատանումների թույլատրելի միջակայքում՝ դեկտեմբերի վերջին կազմելով 2.6%:

Ֆինանսական կայունության ապահովում: Կենտրոնական բանկը 2017 թվականին շարունակել է ֆինանսական կայունության ամրապնդմանն ուղղված աշխատանքները, իրականացրել է կարգավորման դաշտի կատարելագործման և վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցառումներ:

2017 թվականին տնտեսական ակտիվության վերականգնման և արտաքին հատվածից ստացվող եկամուտների կայունացման հեռանկարների ներքո ֆինանսական հատվածի մասնակիցները ընդլայնել են ֆինանսական միջնորդության ծավալները: Ֆինանսական համակարգի ակտիվների ու ՀՆԱ հարաբերակցության և տնտեսությանը տրամադրված վարկերի ու ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշները տարեվերջին կազմել են համապատասխանաբար 91.4% և 49.8%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.5%-ը: Բանկային համակարգում արձանագրվել է բոլոր հաշվեկշռային ցուցանիշների կգալի աճ: Ֆինանսական համակարգի այլ մասնակիցները ևս ապահովել են հիմնական ցուցանիշների աճ:

ՀՀ կենտրոնական բանկի այլ խնդիրներ

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում: Հաշվետու տարում Կենտրոնական բանկը թողարկել է «Նոյյան տապան» հավաքորդական թղթադրամը, որը կոմպոզիտային հումքի վրա տպագրված առաջին ՀՀ թղթադրամն է:

Դրամանենգության դեմ պայքարի կազմակերպման նպատակով Կենտրոնական բանկի փորձագիտական լաբորատորիան վերապինվել է դրամանիշերի փորձաքննության համար անհրաժեշտ նոր տեխնիկայով:

Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների հանրայնացման և հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարման նպատակով Կենտրոնական բանկը 2017 թվականին թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների և նշանավոր իրադարձությունների հոբելյաններին:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի (այսուհետ՝ ՓԼ/ԱՖ) **կազմակերպում և կարգավորում:** Հաշվետու ժամանակահատվածում Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում իրականացվել են ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման աշխատանքներ: Մասնավորապես՝ քայլեր են ձեռնարկվել ՓԼ նախորդող հանցագործությունների մասով հարուցված քրեական գործերը և դատավճիռները, ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատելու, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ՓԼ/ԱՖ նպատակներով չարաշահման ռիսկը գնահատելու ուղղությամբ:

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն: Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով:

ՀՀ-ում հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակում 2017 թվականին մեկնարկել է 2-12-րդ դասարանների 4 առարկայական ծրագրերում ֆինանսական կրթության բաղադրիչի ներմուծման փորձարկումը: Ծրագրում ընդգրկվել է 13 դպրոց:

Միջազգային պահուստների կառավարում: ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է նվազագույն ռիսկերով ՀՀ միջազգային պահուստների կառավարման իր որդեգրած ռազմավարությունը, որն ուղղված է միջազգային պահուստների ապահովության, իրացվելիության ու կառավարման արդյունավետության բարձրացմանը:

2017 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել արտարժութային պահուստներին վերաբերող միջազգային բոլոր պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները մեղմելու կարողության առումով: Այսպես՝ 2017 թվականին ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ հինգ ամսվա և կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) սպասարկման շուրջ ութ տարվա ծածկույթ:

Ինստիտուցիոնալ վարգացում: Շարունակելով տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի վարգացման և բարելավման աշխատանքները՝ 2017 թվականին Կենտրոնական բանկը հատկապես շեշտադրել է ֆինանսաբանկային համակարգի կիբեռանվտանգության վարգացման խնդիրները:

Խորացվել են երկկողմ և բազմակողմ համագործակցությունները Կենտրոնական բանկի գործընկեր կառույցների և միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Դիլիջանի ՈւՀԿ) 2017 թվականին ունեցել է զգալի ձեռքբերումներ և հաջողություններ վարգացման երեք հիմնական ուղղություններով՝ **հետազոտությունների իրականացում, միջազգային համագործակցություն** և **սոցիալական պատասխանատվություն**:

Տարեվերջի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների մոտ 26%-ը (193 աշխատակից) աշխատում է Դիլիջանի ՈւՀԿ-ում:

02

ԳՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Դրամավարկային քաղաքականություն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ գործող օրենքի 4-րդ հոդվածի՝ **Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է**, որով Կենտրոնական բանկը նպաստում է երկարատև ժամանակահատվածում կայուն և բարձր տնտեսական աճի ձեռքբերմանը: Գների կայունությունն ապահովելու նպատակով Կենտրոնական բանկը սահմանում է միջնաժամկետ գնաճի նպատակային մակարդակ կամ գնաճի թիրախ, որի ընտրությունն իրականացվում է հասարակության սպասումների խարսխման և մակրոտնտեսական կայունության օպտիմալ ապահովման տեսանկյունից: Հայաստանի Հանրապետությունում գնաճի թիրախը ամրագրվում է Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության ծրագրերում, ՀՀ Կառավարության պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերում, պետական բյուջեի մասին ՀՀ օրենքներում և կայուն վարգացման ծրագրերում: Կենտրոնական բանկն օժտված է գործառնական անկախությամբ և ինքնուրույն է ընտրում իր կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության ռազմավարությունը, միջանկյալ և գործառնական նպատակները և դրամավարկային գործիքները:

ՀՀ կենտրոնական բանկը, գնաճի նպատակադրման ռազմավարության համատեքստում, որպես միջանկյալ նպատակ դիտարկում է գնաճը նպատակային ցուցանիշին վերադարձնելու ծրագրված ուղին, իսկ որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ շուկայական տոկոսադրույքը: Դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքը 7-օրյա ռեպո համաձայնագիրն է, որի տոկոսադրույքը (վերաֆինանսավորման տոկոսադրույք) սահմանվում է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ համաձայն նախապես սահմանված և հրապարակված ժամանակացույցի: Դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներն ուժի մեջ են մտնում սահմանմանը հաջորդող օրվանից:

Գնաճի նպատակադրման ռազմավարության ներքո էապես կարևորվում է Կենտրոնական բանկի հաղորդակցությունը հասարակության հետ, որի հիմնական ուղիներից մեկը գնաճի եռամսյակային հաշվետվությունների հրապարակումն է[1]: Գնաճի հաշվետվության առաջին բաժինը ներառում է ընթացիկ եռամսյակի դրամավարկային


1 Տե՛ս Կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն» պարբերականները (www.cba.am):

քաղաքականության ծրագիրը, իսկ երկրորդ բաժինը՝ նախորդ եռամսյակի գնաճի իրագործմանն ուղղված դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը:

Դրամավարկային քաղաքականության իրագործումը

Հիմնվելով ձևավորված մակրոտնտեսական իրավիճակի ու գնաճային վարգացումների վրա և հաշվի առնելով արտաքին ու ներքին տնտեսություններից ակնկալվող չափավոր գնաճային ազդեցությունները՝ **2017 թ. ընթացքում Կենտրոնական բանկը շարունակել է դեռևս 2015 թ. երկրորդ կեսից իրականացվող ընդլայնողական դրամավարկային քաղաքականությունը:** Կենտրոնական բանկը 0.25 տոկոսային կետով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը նաև փետրվարին, իսկ այնուհետև՝ մինչև տարեվերջ, պահպանել ցածր մակարդակի վրա: Կենտրոնական բանկը գնահատում էր, որ դրամա վարկային նման քաղաքականությունը, այնուամենայնիվ, բավարար խթանող է և նպաստում է կանխատեսվող հորիզոնում ներքին պահանջարկի աճին և գնաճի՝ իր նպատակային ցուցանիշի շուրջ կայունանալուն: Միևնույն ժամանակ, խթանող դրամավարկային պայմանների ներքո, տարվա ընթացքում շարունակվել են շուկայական տոկոսադրույքների նվազման միտումները:


Գծապատկեր 1. ՀՀ ֆինանսական շուկայի տոկոսադրույքները



Փաստացի գնաճային վարգացումների համաձայն՝ թե՛ ընդհանուր և թե՛ բնականոն գնաճը 2017 թ. աստիճանաբար ավելացել է: Դրամավարկային քաղաքականության անմիջական ազդեցության տեսանկյունից հատկանշական է **12-ամսյա բնականոն գնաճը**, որը նախորդ տարվա վերջի -1.8%-ից դեկտեմբերի վերջին հասել է 3.6%-ի: Դրան

մեծապես նպաստել են նախորդ 2 տարիներին Կենտրոնական բանկի իրականացրած խթանող դրամավարկային քաղաքականությունը, 2017 թ. սկզբից թե՛ արտաքին աշխարհում, թե՛ ՀՀ տնտեսությունում դիտված տնտեսական համեմատաբար բարձր ակտիվությունը: Սեզոնային գյուղմթերքների գների աճի տեմպերի դանդաղումը որոշ չափով չեզոքացրել է վերոնշյալ գործոնների ազդեցությունը, որի պարագայում **12-ամսյա գնաճի ցուցանիշը 2017 թ. վերջին կազմել է 2.6%՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում**:

Գծապատկեր 2. 2017 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճի ցուցանիշը գտնվել է տատանումների թույլատրելի միջակայքում



Ընդ որում, գնաճն արագ տեմպերով ավելացել է չորրորդ եռամսյակում, երբ պարենային ապրանքների միջազգային շուկաներում որոշ ապրանքների (կարագ, մսամթերք) գների կտրուկ բարձրացումն անդրադարձել էր այդ ապրանքների ներքին գների վրա: Միևնույն ժամանակ, եռամսյակի ընթացքում լրացուցիչ գնաճային սպասումներին նպաստել են ինչպես նշված ապրանքների գնաճը, այնպես էլ 2018 թ. սկզբին նախատեսվող հարկային և մաքսային փոփոխությունների հնարավոր ազդեցությունների ակնկալիքները:

Դրամավարկային քաղաքականության իրականացման գործընթացի բարելավում և կատարելագործում

Կենտրոնական բանկի կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի (ԿՔՎՀ) վարգացման ու կատարելագործման արդյունքը կանխատեսումների և քաղաքականության վերլուծության քանակական և որակական հատկանիշների բարելավումն է:

Այն օգնում է Կենտրոնական բանկի խորհրդին ճիշտ պատկերացում կազմելու առկա մակրոտնտեսական իրավիճակի մասին և կայացնելու հիմնավոր որոշումներ դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Կանխատեսման և քաղաքականության վերլուծության համակարգի բարելավման աշխատանքները երկարաժամկետ կտրվածքով բաժանվում են երկու շարունակական ուղղությունների.

- ՀՀ տնտեսության առանձնահատկությունների ներառում գործող համակարգում և վերջինիս տեխնիկական կատարելագործում,
- գործող համակարգի կատարելագործում՝ Դինամիկ ստոխաստիկ ընդհանուր հավասարակշռության (ԴՍԸՀ կամ DSGE) մոդելային համակարգին անցում կատարելու միջոցով:

Առաջին ուղղության շրջանակներում 2017 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Գնաճային սպասումների և քաղաքականության նկատմամբ վստահության վերլուծություն և արդյունքների ներառում ԿՔՎ համակարգում: Տարանջատվել են կարճաժամկետ և երկարաժամկետ գնաճային սպասումները, որոնք դիտարկվում են նաև որպես դրամավարկային քաղաքականության նկատմամբ վստահության բնութագրիչներ:
2. Արտաքին աշխարհի տնտեսական քաղաքականության վերլուծության բարելավման միջոցով արտաքին աշխարհի մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների մոդելի կատարելագործում:
3. Գնաճի հիմնական մոդելի տեխնիկական թարմացում՝ նոր ծրագրային հենքին անցնելու միջոցով, որը թույլ է տալիս բարձրացնել ներքին տվյալների և հաշվետվությունների որակը, ինչպես նաև հետագայում հիմք է ստեղծում աջակցող մոդելների տեխնիկական հենքի բարելավման համար:

Երկրորդ ուղղության շրջանակներում իրականացվել են.

1. ՀՀ տնտեսությանը բնորոշ դրամավարկային քաղաքականության ասիմետրիկ արձագանքների ուսումնասիրություն՝ ԴՍԸՀ մոդելի միջոցով: Հետազոտությունը կատարվել է ՀՀ կենտրոնական բանկի և Հարվարդի համալսարանի Դեյվիսի կենտրոնի համատեղ ծրագրով:
2. Իրական հատվածի վարքագծի ԴՍԸՀ 2 մոդելների կառուցման ավարտական փուլի աշխատանքներ. առաջինը՝ հետերոգեն ֆիրմաների պարագայում օպտիմալ դրամավարկային քաղաքականության ընտրության, երկրորդը՝ ներդրումների և կապիտալի կուտակման խնդիրների ուսումնասիրության ու հավասարակշիռ տնտեսական աճի մակարդակի բացահայտման նպատակով:

Վիճակագրություն

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ամրագրված խնդիրներն իրագործելու նպատակով Կենտրոնական բանկը հավաքագրում, ամփոփում և հրապարակում է դրամավարկային, ֆինանսական հատվածի և արտաքին հաշիվների վիճակագրությունը, որն օգտագործվում է Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության մշակման, ֆինանսական կայունության ապահովման, վճարահաշվարկային համակարգի վարգացման, ֆինանսական վերահսկողության և այլ գործառույթների իրականացման համար: Բացի վիճակագրության հավաքագրումից՝ Կենտրոնական բանկը տնտեսության տարբեր հատվածներում պարբերաբար իրականացնում է ընտրանքային հետազոտություններ և վիճակագրական հարցումներ, որոնց միջոցով լրացնում է այն տեղեկատվական բացը, որը հնարավոր չէ լրացնել պաշտոնական վիճակագրական աղբյուրներից, սակայն անհրաժեշտ է իր գործառնությունների արդյունավետ իրականացման համար: Կենտրոնական բանկի կողմից հավաքագրվող և հրապարակվող վիճակագրությունն օգտագործվում է նաև պետական գերատեսչությունների, ֆինանսական շուկայի մասնակիցների, միջազգային կազմակերպությունների, վանգվածային լրատվության միջոցների և հանրության կողմից:

2017 թվականին Կենտրոնական բանկը հանրությանը ժամանակին տրամադրել է արժանահավատ վիճակագրական տվյալներ, իրականացրել է հրապարակվող վիճակագրական տվյալների շրջանակների ընդլայնման և հասանելիության ապահովման, հավաքագրվող վիճակագրության մեթոդաբանության կատարելագործման ու միջազգային չափորոշիչներին դրանց համապատասխանեցման աշխատանքներ[2]:

Նոր տվյալների հավաքագրում և հաշվարկ

Արտաքին հաշիվների վիճակագրության վարգացման նպատակով Կենտրոնական բանկը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հետ համատեղ 2017 թվականին մշակել է ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին պարտքի հաշվառման հաշվետվական ձևը, որով ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, սկսած 2018 թվականի սկզբից, հավաքագրելու և Կենտրոնական բանկին է փոխանցելու տեղեկատվություն ՀՀ ոչ ֆինանսական կազմակերպությունների արտաքին պարտքի սպասարկման հետ կապված ներկա ու ապագա հոսքերի վերաբերյալ:

Կենտրոնական բանկի խնդիրների լուծման, մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման արդյունավետության և օպերատիվության բարձրացման նպատակով ներդրված, այսպես կոչված՝ «մեծ տվյալների» (Big Data) հավաքագրման և մշակման աշխատանքների շրջանակներում իրականացվել է հետազոտություն «Մեծ տվյալների կիրառումը ՀՀ կենտրոնական բանկում» թեմայով, որը հավանության է արժանացել «Իրվինգ Ֆիշեր» կոմիտեի կողմից և տպագրվել համապատասխան պարբերականում[3]:

2 ՀՀ կենտրոնական բանկը վիճակագրական տվյալները հրապարակում է ԿԲ տնային էջի «Վիճակագրություն» բաժնում (www.cba.am):

3 Տե՛ս “The use of Big Data in Central Bank of Armenia”, https://www.bis.org/ifc/publ/ifcb44.pdf:

03

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ֆինանսական համակարգի կայունություն, կարգավորում և վերահսկողություն

Վճարահաշվարկային համակարգ

Արժեթղթերի շուկա

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **2017**


ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2017 թվականին տնտեսական ակտիվության վերականգնման և արտաքին հատվածից ստացվող եկամուտների կայունացման հեռանկարների ներքո ֆինանսական հատվածի մասնակիցները ընդլայնել են ֆինանսական միջնորդության ծավալները: 2017 թվականին ֆինանսական համակարգի ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը և տնտեսությանը տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել են համապատասխանաբար 91.4% և 49.8%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակիցը բանկային համակարգն է, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 85.5%-ը (տե՛ս գծապատկեր 3):


Գծապատկեր 3. Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը

31.12. 2016 թ.



- **87.2 %** Բանկեր
- **8.6 %** Վարկային կազմակերպություններ
- **1.0 %** Ապահովագրական ընկերություններ
- **0.9 %** Ներդրումային ընկերություններ
- **1.4 %** Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ
- **0.9 %** Այլ ֆինանսական կազմակերպություններ

31.12. 2017 թ.




- **85.5 %** Բանկեր
- **9.3 %** Վարկային կազմակերպություններ
- **1.0 %** Ապահովագրական ընկերություններ
- **1.3 %** Ներդրումային ընկերություններ
- **2.1 %** Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ
- **0.9 %** Այլ ֆինանսական կազմակերպություններ


2017 թ. բանկային համակարգի ակտիվներն ավելացել են 9.2%-ով, ընդհանուր կապիտալը՝ 4.9%-ով, իսկ պարտավորությունները՝ 10.1%-ով: Տնտեսությանը տրամադրված վարկերն ավելացել են 8.5%-ով: Բանկային համակարգի վուտ շահույթը կազմել է 39.7 մլրդ դրամ (31.12.2016 թ. դրությամբ՝ 31.7 մլրդ դրամ), որի դեպքում ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1.0% և 6.0% (31.12.2016 թ. դրությամբ՝ 0.9% և 5.8%): Շահութաբերության աճին հիմնականում նպաստել է ակտիվների հնարավոր կորուստների պահուստին վուտ մասհանումների նվազումը:

Կենտրոնական բանկի կողմից վարվող խթանող դրամավարկային քաղաքականությունը, ֆինանսական կազմակերպությունների միջև մրցակցությունն ու բանկային համակարգում առկա իրացվելիությունը շարունակել են նպաստել առևտրային բանկերի կողմից տրամադրված միջոցների տոկոսադրույքների նվազմանը: Ընդ որում՝ առավել արտահայտված է եղել դրամային վարկերի տոկոսադրույքների նվազումը:

Գծապատկեր 4. Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույք



Գծապատկեր 5. Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույք



Բանկային համակարգի կայունությունը բնութագրող կապիտալի համարժեքության և իրացվելիության ցուցանիշները շարունակում են գտնվել պահանջվող նվազագույն սահմանաչափերից բարձր. մասնավորապես՝ ընդհանուր կապիտալի համարժեքությունը կազմել 18.6%, (նվազագույն նորմատիվային սահմանաչափը կազմում է 12.0%): Բանկային համակարգի իրացվելիությունը նույնպես շարունակում է պահպանվել բարձր մակարդակում. այն բոլոր բանկերով վգալի


գերակայնում է պահանջվող նորմատիվային նվազագույն սահմանաչափը՝ փաստելով բանկային համակարգի բարձր իրացվելիության մասին: 2017 թվականի վերջի դրությամբ առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 32.1% և 141.7% (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15.0% և 60.0%):

Տարվա ընթացքում բարելավվել է բանկերի վարկային պորտֆելի վերադարձելիությունը: Չաշխատող վարկերի («հսկվող», «ոչ ստանդարտ», «կասկածելի» ռիսկային դասեր) տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում տարվա ընթացքում նվազել է 1.2 տոկոսային կետով և կազմել 5.5%:

Աճել են նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հիմնական ցուցանիշները: Մասնավորապես՝ **վարկային կազմակերպությունների** ընդհանուր կապիտալը տարվա ընթացքում ավելացել է 41.4%-ով, պարտավորությունները՝ 3.5%-ով, ակտիվները՝ 21.1%-ով: **Ապահովագրական համակարգի** ընդհանուր կապիտալը նվազել է 1.1%-ով, պարտավորություններն ավելացել են 11.2%-ով, ակտիվները՝ 6.1%-ով: **Ներդրումային ընկերությունների** ընդհանուր կապիտալն ավելացել է 51.9%-ով, պարտավորությունները՝ 55.3%-ով, ակտիվները՝ 54.8%-ով: Ֆոնդի կառավարիչների կողմից կառավարվող պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներն ավելացել են 67.0%-ով և կազմել 105.6 մլրդ դրամ:

Տարեվերջի դրությամբ կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է մոտ 1.9%:

Գծապատկեր 6. Կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի շարժը



Ֆինանսական համակարգի կայունության ապահովման, ֆինանսական հաստատությունների գործունեության ռիսկայնության մակարդակի գնահատման, գործունեության իրավական դաշտի համապատասխանության, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի, ֆինանսական համակարգի սպառողների պաշտպանության և այլ նպատակներով 2017 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է իրականացնել իր վերահսկողական գործառույթները (փաստաթղթային և տեղերում):

Փաստաթղթային վերահսկողության միջոցով ֆինանսական կառույցներից ստացված հաշվետվությունների հիման վրա Կենտրոնական բանկն իրականացնում է վերջիններիս ֆինանսական գործունեության մշտադիտարկում, ֆինանսական վիճակի վերաբերյալ վերլուծություններ, բացահայտում է ռիսկերը, գնահատում գործունեության համապատասխանությունն իրավական դաշտին և, ըստ անհրաժեշտության, իրականացնում իր իրավասությունների ներքո վերահսկողական միջոցառումներ:

2017 թվականին շարունակվել են ֆինանսական կազմակերպությունների ռիսկերի բացահայտման, գործարար վարվելակերպի, հրապարակվող տեղեկատվության արժանահավատության և այլ վերահսկողական ստուգումները: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկն իրականացրել է 186 «տեղերում ստուգումներ»:

Վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները վերացվել են, և ձեռնարկվել են միջոցներ՝ ապագայում նույնանման խախտումները կանխելու նպատակով:

Ֆինանսական համակարգի վերահսկողության կատարելագործման շրջանակում իրականացվել են մի շարք գործողություններ, մասնավորապես.

- Ֆինանսական շուկաների վարգացումները հանգեցրել են կանոնների վրա հիմնված վերահսկողական մոդելից ռիսկերի վրա հիմնված և ապագային միտված վերահսկողական մոդելի ներդրմանը: 2017 թվականին ՀՀ կենտրոնական բանկում կատարվել են ռիսկերի վրա հիմնված վերահսկողության մոտեցման վարգացման և արմատավորման աշխատանքներ: Իրականացվող բարեփոխումների նպատակը վերահսկողական ռեսուրսների առավել օպտիմալ բաշխումն է և վերահսկողության գործընթացների արդյունավետության բարձրացումը:
- Ֆինանսական կայունության ապահովման և վարգացման համատեքստում 2017 թ. ՀՀ կենտրոնական բանկը մշակել և հերթական անգամ իրականացրել է ճգնաժամային իրավիճակի սիմուլյացիոն վարժություն: Վարժությանը մասնակցել են Կենտրոնական բանկի ղեկավար անձնակազմը, մի շարք ստորաբաժանումների աշխատակիցներ, ինչպես նաև Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի անձնակազմը: Վարժությունը կառուցված էր խաղարկային բանկի ենթադրական սնանկացման և դրա հետևանքով

երաշխավորված ավանդների հատուցման հետ կապված հարցերի շուրջ՝ նպատակ ունենալով բացահայտելու երաշխավորված ավանդների հատուցման գործընթացներում հնարավոր խնդիրները, դրանց լուծման ուղիները, տարբեր հաստատությունների համագործակցության ու հաղորդակցման խոչընդոտները: Նման վարժությունները նպաստում են նաև արտակարգ իրավիճակներում մասնակիցների գործելու պատրաստվածության մակարդակի բարձրացմանը:

Ֆինանսական համակարգի կարգավորման ոլորտում իրականացվել են մի շարք փոփոխություններ, մասնավորապես.

2017 թվականին փոփոխություններ ու լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Իրավական ակտերի մասին», «Բյուջետային համակարգի մասին», «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին», «Սպառողական կրեդիտավորման մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին», «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքներում և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Օրենքներում կատարված փոփոխությունների նպատակն է.

- առկա կարգավորման դաշտը համապատասխանեցնել նոր Սահմանադրությանը,
- պարզեցնել վերահսկող մարմինների միջև տեղեկատվության փոխանակման ընթացակարգը,
- լիարժեք դարձնել հիփոթեքային վարկավորման ոլորտում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը և բարելավել հիփոթեքային վարկի տրամադրման ու հետագա սպասարկման հետ կապված ընթացակարգերը,
- ներդնել Բասել 3 համաձայնագրով նախատեսված բանկային կարգավորման պահանջները,
- առավելագույնս համապատասխանեցնել ապահովագրական համակարգի կարգավորման և վերահսկողության դաշտը միջազգային ստանդարտներին (մասնավորապես՝ ԱՄՀ և ՀԲ FSAP առաքելության առաջարկություններին):

Վճարահաշվարկային համակարգ

2017 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի վարգացման, հուսալիության և անվտանգության բարձրացման, անկանխիկ վճարումների ծավալի ընդլայնման, վճարահաշվարկային համակարգերի ոլորտը կարգավորող իրավական ակտերի, ինչպես նաև պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ընթացակարգերի կատարելագործման աշխատանքները:

Արժեթղթերի հաշվարկային համակարգեր

Նպատակ ունենալով ապահովել ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիայի միջոցով պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ողջ ընթացակարգը՝ 2017 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ մշակվել են պետական պարտատոմսերի շրջանառությունը կարգավորող իրավական փաստաթղթեր, մշակվել և ներդրվել են համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունների ձևաչափեր, ինչպես նաև պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման վերջնահաշվարկի կանոններ: Կատարելագործվել են Գանձապետական պահառու համակարգի կիրառմամբ պետական պարտատոմսերի տեղաբաշխման հաշվարկների մեխանիզմները Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի միջոցով, այդ թվում՝ ներդրողներին նաև հնարավորություն է ընձեռվել պետական պարտատոմսերը ձեռք բերելու անկանխիկ եղանակով:

Վճարային գործիքներ և ենթակառուցվածք


2017 թվականից հնարավոր է դարձել հայաստանյան «Արքա» վճարային համակարգի չիպային քարտերի սպասարկումը Ռուսաստանի Դաշնությունում և ռուսաստանյան «Միր» համակարգի վճարային քարտերի սպասարկումը Հայաստանում:

Շարունակվել են նաև վճարային գործիքների սպասարկումը ապահովող ենթակառուցվածքի վերաբերյալ իրավական ակտերի կատարելագործման աշխատանքները: Մասնավորապես՝ փոփոխությունների արդյունքում հնարավոր է դարձել ավտոմատացված սարքավորումների միջոցով լայն շրջանակի բանկային ծառայությունների մատուցումը

շուրջօրյա ռեժիմով: Միևնույն ժամանակ խստացվել են բանկոմատների անվտանգությանը ներկայացվող պահանջները, ինչի արդյունքում նվազել է բանկոմատում առկա թղթադրամների հափշտակության հավանականությունը: Բացի այդ, բանկերի կողմից ծառայությունների մատուցման որակը բարելավելու նպատակով թույլատրվել է կարճ հաղորդագրության կամ էլեկտրոնային փոստի միջոցով մեկանգամյա ակտիվացման կոդի տրամադրումը քարտապանին՝ փակ ծրարով PIN կոդը տրամադրելու փոխարեն: 2017 թվականի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտեր են տրամադրել և սպասարկել ՀՀ տարածքում գործող 15 առևտրային բանկեր: Ընդ որում, բոլոր բանկերն էլ անդամակցում են «Արքա» քարտերով վճարումների միասնական համակարգին: Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը 1.7 մլն է:

2017 թվականին ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 1 տրլն 558.9 մլրդ դրամի գործառնություն: Քարտերով անկանխիկ վճարումների ծավալն ավելացել է 38.5%-ով և կազմել 298.3 մլրդ դրամ: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 145.6 մլրդ դրամ: Արդյունքում՝ քարտերով անկանխիկ վճարումների տեսակարար կշիռն ընդհանուր քարտային գործառնություններում նախորդ տարվա համեմատ աճել է 4.1 տոկոսային կետով և կազմել 19.1% (տե՛ս գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Հայաստանում վճարային քարտերով իրականացված գործառնություններ



Միջպետական համագործակցություն

2017 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի գծով համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների ազգային (կենտրոնական) բանկերի հետ: Մասնավորապես՝ Ազգային վճարային համակարգերի վարգացման աշխատանքային խումբը շարունակել է համակարգել վճարային քարտերի ազգային համակարգերի, ISO 20022 ստանդարտի ներդրման, ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման և ֆինանսական տեխնոլոգիաների վարգացման ոլորտներում իրականացվող համագործակցության աշխատանքները:

Արժեթղթերի շուկա

2017 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է կապիտալի շուկայի վարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ ակտիվների արժեթղթավորման, ինչպես նաև ապահովված հիփոթեքային պարտատոմսերի շուկայի վարգացման նպատակով ավարտին է հասցվել այդ ոլորտի օրենսդրության բարեփոխումների փաթեթի մշակումը, որը ներկայացվել է Ազգային ժողովի քննարկմանը:

Դրամական շուկայի նոր գործիքների ստեղծման նպատակով Ասիական վարգացման բանկի և Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի համագործակցությամբ Կենտրոնական բանկը 2017 թվականի ընթացքում նախաձեռնել է եռակողմ ռեպո գործիքի ներդրման աշխատանքներ: Ի տարբերություն ներկայումս կնքվող երկկողմ ռեպո գործիքի, եռակողմ ռեպոյի ներդրման դեպքում գործարքների հաշվարկների սպասարկումը և ռիսկերի կառավարումն իրականացվելու են երրորդ կողմ հանդիսացող գործակալի միջոցով: Դա թույլ կտա հնարավորինս վսպելու գործընկերների ռիսկը, ինչպես նաև ապատելու կողմերին գործարքի հետ կապված մի շարք գործառույթներից (գործակալի կողմից գործարքի առարկա արժեթղթերի՝ որպես ապահովության միջոցի շուկայական արժեքի գնահատում, ռեպոյի գումարի նկատմամբ դրանց համարժեքության ապահովում և այլն):

Իրականացվել են նաև պետական գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխման և հետգնման աճուրդների բարելավման միջոցառումներ: Մասնավորապես՝ 2017 թվականի ապրիլի 25-ից այդ աճուրդները կազմակերպում է ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիան՝ ժամանակակից տեխնոլոգիական լուծումներով օժտված Genium INET էլեկտրոնային առևտրային համակարգի միջոցով: Վերջինս հնարավոր է դարձրել առավել պարզ եղանակով հայտերի մուտքագրումը և միկրովայրկյանների ընթացքում գործարքների կնքումը: Համակարգն ապահովում է T+1 սկզբունքով վերջնահաշվարկի իրականացումը, ինչն իրացվելիության կառավարման տեսանկյունից լրացուցիչ առավելություն է ընձեռում առևտրի մասնակիցներին:

04

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպում և կարգավորում

Ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

Միջազգային պահուստների կառավարում

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **2017**

ԱՐԺՈՒՅԹԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ, ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ


Արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում

Ազգային արժույթի շրջանառության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կազմակերպում, կարգավորում և վերահսկում է կանխիկ ՀՀ դրամի շրջանառությունը՝ պահպանելով հարմարավետության, օպերատիվության, անընդհատության և հուսալիության սկզբունքները:


Կենտրոնական բանկն իր հաճախորդների դրամարկղային սպասարկումը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում իրականացրել է Երևանում գտնվող գլխավոր գրասենյակի դրամարկղի և տարածքային դրամարկղային կենտրոնների (այսուհետ՝ ՏԴԿ) միջոցով: Կանխիկի շրջանառության, բանկերի դրամարկղային սպասարկման անընդհատության ապահովման նպատակով օպտիմալացվել է ՏԴԿ-ների տեղաբաշխվածությունը: Տարվա ընթացքում դադարեցվել է Գորիսի ՏԴԿ-ի աշխատանքը, և գործարկվել է հանրապետության հարավային շրջանները սպասարկող նոր դրամարկղային կենտրոն Սիսիան քաղաքում՝ հագեցած թղթադրամների վերահաշվման ու տեսակավորման ժամանակակից սարքավորումներով:

2017 թվականին Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 12.8%-ով: ՏԴԿ-ների միջոցով ապահովվել է Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության 18.6%-ը: Ինչպես և նախորդ տարիներին, ՏԴԿ-ների միջոցով առավելապես իրականացվել են կանխիկ դրամի ելքագրման գործառնություններ. դրամարկղային ելքերը կազմել են ՏԴԿ-ների շրջանառության 81.1%-ը:

Գծապատկեր 8. Կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը 2017 թվականին



Գծապատկեր 9. Կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը 31.12.2017 թ. դրությամբ



2017 թվականի նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ է դրվել 500 դրամ անվանական արժեքով «Նոյյան տապան» հավաքորդական թղթադրամը: Այն Կենտրոնական բանկի կողմից թողարկված առաջին հավաքորդական թղթադրամն է և, միևնույն ժամանակ, առաջին ՀՀ թղթադրամը, որ տպագրված է կոմպոզիտային հումքի վրա: Վերջինս բամբակե թուղթ է՝ երկու կողմերից պատված պոլիէսթերի շերտով:



Այս հումքի հիմնական առավելությունն այն է, որ ապահովում է թղթադրամների ավելի մեծ դիմացկունություն ու երկարակեցություն շրջանառությունում: Հաշվի առնելով բարձրորակ կոմպոզիտային հումքի առավելությունները՝ նախատեսվում է այն օգտագործել նաև ՀՀ թղթադրամների հաջորդ շարքի տպագրության ժամանակ:

Դրամանենգության դեմ պայքարի կազմակերպման նպատակով Կենտրոնական բանկի փորձագիտական լաբորատորիան վերապինվել է դրամանիշերի փորձաքննության համար անհրաժեշտ նոր տեխնիկայով: Համագործակցելով ՀՀ իրավապահ մարմինների հետ՝ իրականացվել են Կենտրոնական բանկի կողմից հայտնաբերված կեղծ դրամանիշերի կեղծման եղանակների, պատրաստման ձևերի և դրանց խմբավորման վերաբերյալ վերլուծական աշխատանքներ:

Կենտրոնական բանկը 2017 թվականին, ինչպես և նախորդ տարիներին, Հայաստանի ազգային, պատմական, մշակութային, հոգևոր արժեքների հանրայնացման և հավաքորդների դրամագիտական պահանջարկի բավարարման նպատակով թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված հուշադրամներ՝ նվիրված հայ անվանի անհատների և նշանավոր իրադարձությունների հոբելյաններին: Շրջանառության մեջ են դրվել «Ալեքսանդր Մանթաշյան-175», «Համո Բեկնազարյան-125», «Հայոց բանակի կազմավորման 25-ամյակ», «Շուշիի ազատագրման 25-ամյակ», «Հայաստան-ԱՄՀ/ՀԲ անդամակցության հոբելյան», «ՀԱՊ-25 և ՀԱՊԿ-15», «Հովհաննես Այվազովսկի-200», «Նոյյան տապան», «Վենետիկի Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակ» հուշադրամները: Բացի այդ, Կենտրոնական բանկը մասնակցել է «Աշխարհի լաբիրինթոսները» միջազգային դրամագիտական ծրագրին, որի շրջանակներում թողարկվել են երկու նոր արծաթե հուշադրամներ:

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

2017 թվականին շարունակվել են փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում միջազգային լավագույն փորձին համապատասխանող ռազմավարական և գործառնական վերլուծությունների, հնարավոր կասկածներ պարունակող ապդակների հետ կապված կանխարգելիչ միջոցառումների իրականացման, օրենսդրության ներդրման, ներպետական և միջազգային համագործակցության ամրապնդման աշխատանքները:

Ռազմավարական և գործառնական վերլուծություններ

Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (այսուհետ՝ ՖԴԿ) ռազմավարական վերլուծությունների նպատակը ՓԼ/ԱՖ ռիսկերի բացահայտումն է և այդ ռիսկերին համարժեք միջոցառումների կազմակերպումը:

Հաշվետու ժամանակահատվածում Միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում վերսկսվել են ՓԼ/ԱՖ ռիսկերի ազգային գնահատման աշխատանքները: Մասնավորապես՝ քայլեր են ձեռնարկվել ՓԼ նախորդող հանցագործությունների մասով հարուցված քրեական գործերը և դատավճիռները, ՓԼ/ԱՖ ռիսկերը գնահատելու, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ՓԼ/ԱՖ նպատակներով չարաշահման ռիսկը գնահատելու ուղղությամբ:

Անշարժ գույքի ոլորտում առկա ՓԼ ռիսկերի, ինչպես նաև այլ խնդիրների շտկման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ ՖԴԿ-ի կողմից դեռևս 2016 թվականին մշակվել էր օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով նախատեսվում է սահմանափակել կանխիկ եղանակով անշարժ գույքի առուվաճառքի գործարքները: Փաթեթով առաջարկվող կարգավորումների առնչությամբ 2017 թվականին կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ իրավաբան գիտնականների հետ: Անհրաժեշտ փոփոխություններից հետո նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ Կառավարության կողմից և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

Բացի ռազմավարական վերլուծություններից, ՓԼ/ԱՖ հնարավոր դեպքերի բացահայտման նպատակով կատարվել են գործառնական վերլուծություններ. հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են հաշվետվություն տրամադրող անձանցից ստացված 280 կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվությունների վերլուծություններ: Ստացված կասկածելի գործարքների և գործարար հարաբերությունների մասին հաշվետվությունները վերաբերել են փողերի լվացմանը և դրան նախորդող հանցագործությունների հետ կապված կասկածներին: Վերլուծություններում հաճախակի հանդիպող սխեմաներից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Խարդախության տարատեսակ սխեմաներ, այդ թվում՝
  - քարտապանների վստահությունը չարաշահելու հետևանքով քարտային տվյալների ձեռքբերումներ, վիրտուալ POS տերմինալների միջոցով գողացված քարտային տվյալների օգտագործմամբ ապօրինի գործարքներ,
  - վանգվածային մարքեթինգի տարբեր մոդելների կիրառմամբ հանցավոր ճանապարհով ստացված միջոցների օրինականացման սխեմաներ:
- ՀՀ-ից դուրս՝ այլ երկրների տարածքներում անհայտ, հնարավոր է՝ հանցավոր գործունեության հետևանքով ձևավորված ֆինանսական միջոցների տարանցիկ փոխանցումներ ՀՀ բանկային համակարգի միջոցով,
- հնարավոր հարկային պարտավորություններից խուսափելու, ապօրինի ձեռնարկատիրություն իրականացնելու, տնտեսական գործունեության ծավալները թաքցնելու միտում պարունակող ֆինանսական գործարքներ,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված տիպաբանություններով նկարագրված սխեմաներին համապատասխանող այլ դեպքեր:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված վերլուծությունների արդյունքներով ՓԼ/ԱՖ վարկածների առաջադրմամբ համապատասխան տեղեկացումներ են ուղարկվել ինչպես իրավապահ, այնպես էլ օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմիններին: ՓԼ վարկածով իրավապահ մարմիններին տրամադրված տեղեկացումների, ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված, իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվության, հարուցված քրեական գործերի և մեղադրական դատավճիռների վերաբերյալ 2016-2017 թթ. վիճակագրությունը ներկայացված է աղյուսակում:

	2016 թ.	2017 թ.
ՖԴԿ-ի կողմից տեղեկացումներ իրավապահ մարմիններին	34	37
ՖԴԿ-ի կողմից իրավապահ մարմիններից խնդրարկված տեղեկատվություն	11	5
Իրավապահ մարմինների կողմից ՖԴԿ-ից խնդրարկված տեղեկատվություն	36	58
Հարուցված քրեական գործեր	5	2
Կայացված մեղադրական դատավճիռներ	0	4

Հաշվետու ժամանակահատվածում կայացված դատավճիռներում փողերի լվացմանը նախորդել են գողության, խարդախության, կեղծ վճարային փաստաթղթերի պատրաստման, իրացման և հարկերից խուսափման հանցագործությունները: Հարկ է նշել, որ 1 դատավճիռ կայացվել է միայն ՓԼ հանցակազմով:

Կանխարգելիչ միջոցառումներ

ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտում իրականացվող կանխարգելիչ միջոցառումներն առանցքային նշանակություն ունեն ՓԼ/ԱՖ ռիսկերը բացահայտելու, գնահատելու և վսպելու համար: Այդպիսիք են հաշվետվություն տրամադրող անձանց տրվող հանձնարարականները (ծանուցումներ)՝ ուղղված ռազմավարական և գործառնական վերլուծությունների արդյունքում բացահայտված ՓԼ/ԱՖ ռիսկերի վսպմանը:

Հաշվետվություն տրամադրող անձանց 2017 թ. տրվել են 30 հանձնարարականներ (ծանուցումներ), որոնք վերաբերել են ՓԼ/ԱՖ բարձր ռիսկայնություն ունեցող դեպքերին և դրանց առնչությամբ ձեռնարկման ենթակա կանխարգելիչ միջոցառումներին: Մասնավորապես՝ վերոնշյալ դեպքերը վերաբերել են.

- խարդախության սխեմաներին,
- բարձր ռիսկային գոտիներից ստացումներին կամ փոխանցումներին,
- կանխիկով իրականացվող գործարքներին և գործարար հարաբերություններին,
- «միջնորդավորված/տարանցիկ» փոխանցումներում առկա ռիսկերին:

Վերը նշվածից բացի, հաշվետվություն տրամադրող անձանց տրամադրվել է նաև հետադարձ կապ՝ ստացված ապդակների վերլուծության ընթացքի և արդյունքների վերաբերյալ իրավեկելու նպատակով:

Միջպգային ահաբեկչական վտանգի ընդլայնմամբ պայմանավորված՝ ԱՖ ռիսկերի վսպման նպատակով միջպգային համագործակցության շրջանակներում շարունակվել են ահաբեկչության հնարավոր ֆինանսավորման աղբյուրների, ուղղությունների, սխեմաների, ներգրավված անձանց բացահայտման միջոցառումները:

Մասնավորապես՝ այդ միջոցառումների շրջանակներում հաշվետվություն տրամադրող անձանց հանձնարարվել է ամբողջական տեղեկատվություն հավաքել ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային համարվող տարածքներ և հակառակ ուղղությամբ իրականացվող ֆինանսական գործառնությունների վերաբերյալ: Հավաքված տեղեկատվությունը պարբերաբար վերլուծվում է ինչպես հաշվետու անձանց, այնպես էլ ՖԴԿ-ի կողմից: Ըստ ՖԴԿ ուսումնասիրության արդյունքների՝ հաշվետվություն տրամադրող անձանց տրվել են ԱՖ տեսանկյունից բարձր ռիսկային համարվող տարածքներ և հակառակ ուղղությամբ կատարվող փոխանցումների առնչությամբ լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու և հնարավորինս մանրամասն տեղեկատվություն ձեռք բերելու, իսկ չստացվելու դեպքում՝ գործարքները մերժելու վերաբերյալ հանձնարարականներ:

ԱՖ հնարավոր ռիսկերի արդյունավետ վսպման նպատակով հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործողությունները՝ ուղղված միջազգային կառույցների կողմից կիրառվող սահմանափակումների վերաբերյալ պահանջների կատարմանը: Այսպես՝ ՖԴԿ կայքում հրապարակվել և հաշվետվություն տրամադրող անձանց իրավեկվել է.

- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ միջոցների սառեցման պահանջ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում, ներառյալ՝ 1267/1989/2253 բանաձևերով՝ ԻԼԻՊ-ի (ԴԱԵՇ) և Ալ Քաիդայի, 1988՝ Թալիբանի և 1718՝ Հյուսիսային Կորեայի հետ կապված անձանց ցանկերում կատարված թարմացումների վերաբերյալ,
- ՖԱԹՖ-ի՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի համակարգում ռազմավարական բացեր ունեցող երկրների, ինչպես նաև ռազմավարական բացեր ունեցող, սակայն դրանց վերացման նպատակով ՖԱԹՖ-ի հետ համատեղ գործողությունների ծրագիր մշակած երկրների վերաբերյալ:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում պահպանվել է ԱՖ ռիսկի շատ ցածր մակարդակը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական ոլորտում սպառողների շահերի պաշտպանություն

Կենտրոնական բանկի կողմից ֆինանսական համակարգում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումն իրականացվել է ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների արդար վարվելակերպի, համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ապահովման և ֆինանսական կրթման միջոցով:

Կարգավորման դաշտի վարգացումներ

Երաշխավորների հետ հաղորդակցումն ակտիվացնելու նպատակով 2017 թվականին ֆինանսական կազմակերպությունների համար սահմանվել են մի շարք պահանջներ: Այսուհետ երաշխավորները մինչև պայմանագիր կնքելը կտեղեկացվեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին, կստանան պայմանագրի իրենց օրինակը, կծանուցվեն պարտավորությունների և պայմանագրի էական պայմանների փոփոխությունների մասին:

Ապահովագրական ծառայություններից օգտվողների շահերի պաշտպանության աստիճանը բարձրացնելու նպատակով տեղեկատվության բացահայտման, թափանցիկության և հաղորդակցման մի շարք պահանջներ են նախատեսվել ապահովագրական ընկերությունների ու միջնորդների համար: Նախագծով սահմանվել են ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (բանկոմատներ, վճարային տերմինալներ և այլն) միջոցով մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության պահանջներ:

Նվազագույն պահանջներ են սահմանվել նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից սոցիալական ցանցերի միջոցով հրապարակվող տեղեկությունների կազմի և հրապարակման կարգի նկատմամբ:

Գործարար վարվելակերպի վերահսկողություն

2017 թվականին կատարվել են ֆինանսական կազմակերպությունների՝ տեղերում և հեռակա ստուգումներ:


Տեղերում ստուգումների միջոցով տարբեր ֆինանսական կազմակերպություններում իրականացվել են ծառայությունների մատուցման պատշաճության, բողոքների ու վեճերի լուծման, տեղեկությունների հրապարակման քաղաքականությունների, դրանց կիրարկման, սպառողների տեսանկյունից ռիսկայնության ու իրավական համապատասխանության ուսումնասիրություններ:

Հեռակա ստուգումների շրջանակներում, ֆինանսական կազմակերպությունների հեռուստագովազդներին վուգընթաց, ամսական պարբերականությամբ ստուգվել են նաև ռադիոգովազդները: Եռամսյակային պարբերականությամբ մշտադիտարկվել է ֆինանսական կազմակերպությունների և դրանց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ համացանցում և «Ֆինանսական օգնական» համակարգում հրապարակվող տեղեկատվությունը:

2017 թվականին ևս ՍԾՊևՖԿ կենտրոնն արձագանքել է սպառողներից գրավոր և թեժ գծի միջոցով ստացված դիմումներին:

Տարվա ընթացքում թեժ գծով ստացվել են 5700-ից ավելի վանգեր: Նախորդ տարվա համեմատությամբ վանգերի թիվն աճել է ավելի քան 3500-ով կամ 63%-ով:

2017 թվականին, ընդհանուր առմամբ, ստացվել է 334 դիմում. նախորդ տարվա համեմատությամբ դիմումների թիվն աճել է 67-ով կամ 23.7%-ով:



ՀՀ-ում հանրության ֆինանսական կրթվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ

2017 թ. սեպտեմբերից մեկնարկել է 2-12-րդ դասարանների 4 առարկայական ծրագրերում ֆինանսական կրթության բաղադրիչի ներմուծման փորձարկումը: Ծրագրում ընդգրկվել են 13 դպրոցների՝ վերապատրաստում անցած 46 ուսուցիչներ և 1725 աշակերտներ:

Հաշվետու տարում շարունակվել է «Ֆինանսական կրթությունը գյուղական համայնքներում» ծրագրի իրագործումը, ինչպես նաև դրա ազդեցության գնահատման աշխատանքները: Բացի այդ, համագործակցելով «Աղքատության հաղթահարման խորհրդատվական խմբի» (CGAP) հետ, վարքագծային հետազոտությունների հիման վրա մշակվել են ֆինանսական կրթման 21 տարբեր միջոցառումներ՝ նպատակաուղղված գյուղական համայնքների բնակիչների ֆինանսական գիտելիքների ընդլայնմանը:

Հաշվետու տարում 4-րդ անգամ իրականացվել է «Իմ ֆինանսների ամիս» ծրագիրը, որին մասնակցել է 9837 մարդ, համագործակցել է 55 կառույց, անցկացվել է 19 միջոցառում: ՍԾՊևՖԿ-ի կողմից մշակվել և

տարբեր շաբաթաթերթերում հրապարակվել են կրթական և տեղեկատվական ավելի քան 20 հոդվածներ՝ բյուջեի կառավարում, վճարահաշվարկային համակարգ, վարկեր, ավանդներ, ապահովագրություն, արժեթղթեր և այլ թեմաներով: Ծրագրի նպատակը հասարակությանը պարզ և մատչելի ձևով գիտելիքների հաղորդումն է ֆինանսների, մասնավորապես՝ ֆինանսական ծառայությունների վերաբերյալ: 2017 թ. կազմակերպվել և իրականացվել են նաև՝

- «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը. Ֆինանսներ բոլորի համար» ցուցահանդեսը,
- «Սեմինարներ վինվորականների համար» նախագիծը,
- «Քաղաքացի» նախագիծը,
- «Հաշտ ճամբար» կրթական նախագիծը,
- «Ամենախելացին» նախագիծը:




Կատարվել են Կուտակային կենսաթոշակային համակարգի լուսաբանման աշխատանքներ:

Ֆինանսական կրթման գործընթացը կարևորելու, դրա նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով սոցիալական կայքերի օգնությամբ իրականացվել են ֆինանսական իրավեկմանն ուղղված տարբեր առցանց միջոցառումներ, մասնավորապես՝ սոցիալական հարթակների միջոցով (abcfinance.am կայքի համանուն facebook, youtube, twitter էջեր): **Խորացվել և ամրապնդվել է սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման ոլորտում միջազգային կառույցների՝ Եվրոպայի տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության** (OECD), **Ֆինանսական կրթման միջազգային ցանցի** (INFE), **Ֆինանսական ներգրավման միության** (AFI), **Եվրասիական տնտեսական ընկերակցության, ինչպես նաև Երեխաների և երիտասարդների ֆինանսների միջազգային կազմակերպության** (Child և Youth Finance International) **հետ համագործակցությունը:**

ՀԱՄԱԽԱՌՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2017 թվականի ընթացքում ՀՀ համախառն միջազգային պահուստները աճել են շուրջ 110 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել շուրջ 2.314 մլրդ ԱՄՆ դոլար (տե՛ս գծապատկեր 10):

Գծապատկեր 10. ՀՀ համախառն միջազգային պահուստների մակարդակը (մլն ԱՄՆ դոլար)



Նշված ժամանակահատվածում պահուստների աճը պայմանավորված էր շուրջ 426 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ներհոսքով և պահուստների կառավարման արդյունքում ստացված եկամտով, առևտրային բանկերի թղթակցային հաշիվների մնացորդների շուրջ 163 մլն ԱՄՆ դոլարին համարժեք նվազմամբ և ներքին շուկայում արտարժույթի շուրջ 101 մլն ԱՄՆ դոլարին համարժեք առքով: Միևնույն ժամանակ, տարվա ընթացքում կատարվել են շուրջ 286 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ծավալով արտաքին պետական պարտքի մայր գումարների և տոկոսագումարների մարումներ:

2017 թվականին ՀՀ միջազգային պահուստների մակարդակը շարունակել է համապատասխանել արտարժութային պահուստներին վերաբերող միջազգային բոլոր պահանջներին, մասնավորապես՝ հնարավոր արտաքին ցնցումները մեղմելու կարողության առումով: Այսպես՝ 2017 թվականի ընթացքում ՀՀ միջազգային պահուստներն ապահովել են ներմուծման շուրջ հինգ ամսվա և կարճաժամկետ պարտավորությունների (մինչև մեկ տարի) սպասարկման շուրջ ութ տարվա ծածկույթ:

05

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՋԱՐԳԱՑՈՒՄ

Կենտրոնական բանկի ինստիտուցիոնալ վարքագծում

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի կառավարումը

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով[4] սահմանված է, որ Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինը Կենտրոնական բանկի խորհուրդն է:

Խորհուրդը կազմված է Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալներից և հինգ անդամներից: Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալները Կենտրոնական բանկի խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե:

Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձը Կենտրոնական բանկի նախագահն է: Կենտրոնական բանկի նախագահը նշանակվում է ՀՀ նախագահի առաջարկությամբ, ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ վեց տարի ժամկետով և պատասխանատու է Կենտրոնական բանկի նպատակների իրագործման համար[5]: Կենտրոնական բանկի նախագահը համակարգում է Կենտրոնական բանկի բնականոն աշխատանքը, ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը, իսկ տեղակալների բացակայության կամ նրանց պարտականությունների կատարման անհնարինության դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի՝ տարիքով ավագ անդամը: Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներին նշանակում է ՀՀ նախագահը՝ վեց տարի ժամկետով: Կենտրոնական բանկի նախագահը և նրա երկու տեղակալները, ինչպես նաև Խորհրդի անդամները չեն կարող լինել որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ, կատարել այլ աշխատանք, բացառությամբ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի:

Կենտրոնական բանկի խորհրդի մյուս հինգ անդամներին նշանակում է Հայաստանի Հանրապետության նախագահը՝ հինգ տարի ժամկետով: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել:

4 Մանրամասն տե՛ս «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:

5 2018 թվականի ապրիլի 9-ից ուժ մեջ են մտել 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները՝ համաձայն որոնց Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի հաշվետվողականությունը

Կենտրոնական բանկն իր խնդիրներն իրագործելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններից: Կենտրոնական բանկը իր գործունեության հաշվետվողականությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի ռազմավարությամբ, ինչպես նաև ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում:

Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին է ներկայացնում «Դրամավարկային քաղաքականության ծրագիրը» և «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը (Գնաճի հաշվետվությունը)», ինչպես նաև Կենտրոնական բանկի վարչական ծախսերի նախահաշիվն ու կապիտալ ներդրումների ծրագիրը՝ համապատասխան կատարողականներով: Բացի վերոնշվածից, Կենտրոնական բանկը հանրությանն է ներկայացնում նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունը»: Վերջինիս բաղկացուցիչ տարրերից է բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունը, որի համապատասխանությունը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին յուրաքանչյուր տարի հավաստվում է միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից:

Կենտրոնական բանկի հաշվետվողականության կարևոր տարրերից են նաև «Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգը. վարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը», «Ֆինանսական կայունության հաշվետվություն», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր», «Հայաստանի Հանրապետության հուշադրամներ» պարբերականները: Կենտրոնական բանկն իր հաշվետվողականությունն իրագործում է նաև պաշտոնական կայքէջի (www.cba.am) միջոցով, որտեղ տեղադրվում են Կենտրոնական բանկի վարգացման ռազմավարությունը, պարբերականների հերթական թողարկումները, Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ընդունված վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ արձանագրությունները ու մամլո հաղորդագրությունները, Կենտրոնական բանկի կառավարմանը, գործունեությանը, ինչպես նաև ֆինանսական համակարգին վերաբերող այլ տեղեկատվություն:

Տեղեկատվական անվտանգության կառավարում

Շարունակելով տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի վարգացման և բարելավման աշխատանքները՝ 2017 թվականին Կենտրոնական բանկը հատկապես շեշտադրել է ֆինանսաբանկային համակարգի կիբեռանվտանգության վարգացման խնդիրները:

Մասնավորապես՝ 2017 թվականի մարտին ընդունվել է բանկերում հեղինակավոր մասնագիտացված ընկերությունների կողմից SS

ենթակառուցվածքի խոցելիության պարբերաբար գնահատման և ներթափանցման պարբերական փորձարկումների պարտադիր կատարման վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի որոշումը:

Կիբեռանվտանգության սպառնալիքների վաղ բացահայտման և միջադեպերին արագ արձագանքման նպատակով ՀՀ կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ստեղծվել է ՀՀ կենտրոնական բանկի և բանկերի անվտանգության պատասխանատուների մասնագիտացված հարթակ:

Իրավեկվածության աստիճանի բարձրացման և փորձի փոխանակման նպատակով անցկացվել են կիբեռանվտանգության հարցերին նվիրված մի շարք հանդիպումներ և սեմինարներ:

Արդյունքում կտրուկ նվազել է SS կիրառմամբ տեղեկատվական անվտանգությանը սպառնացող միջադեպերի քանակը, աճել են ֆինանսաբանկային համակարգի մասնակիցների ներդրումները անվտանգության ապահովման ոլորտում, բարձրացվել է անվտանգության մասնագետների որակավորումը:

Միջազգային կառույցների հետ համագործակցություն

2017 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է բազմակողմ և երկկողմ համագործակցությունը միջազգային ֆինանսական ոլորտում:

Տարվա ընթացքում ԱՄՀ հայաստանյան առաքելության, ինչպես նաև հոլանդաբելգիական ենթախմբի գրասենյակի ղեկավարների այցելությունները նպաստել են առավել սերտ համագործակցության խորացմանը: Այցերի ընթացքում քննարկվել են հարցեր երկկողմանի համագործակցության, Հայաստանի ներկայիս տնտեսական վիճակի և հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականության, արտաքին պահուստների ամրապնդման, պետական պարտքի կրճատման, բանկային համակարգի կայունության պահպանման և այլ խնդիրների շուրջ: Կենտրոնական բանկը շարունակել է կոորդինացնել միջազգային վարկանիշային կազմակերպությունների հետ Հայաստանի սուվերեն վարկանշման գործընթացը, որի շրջանակաում տեղի են ունեցել «Մուդիս» և «Ֆիթչ» միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների այցերը:

ՓԼ/ԱՖ ոլորտում շարունակվել է համագործակցությունը ինչպես ՓԼ/ԱՖ ոլորտում միջազգային ստանդարտների մշակման, երկրների կողմից դրանց ներդրման ու իրականացման գործում ներգրավված միջազգային կազմակերպությունների ու կառույցների, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի, էգմոնտ խմբի, Վարշավայի կոնվենցիայի Կողմերի համաժողովի, Եվրասիական խմբի, ԱՊՀ ՖՀՄ-ների ղեկավարների խորհրդի հետ, այնպես էլ գործընկեր օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ համագործակցությանը, ապա 2017 թվականի ընթաց-

քում վերջիններից ստացվել է 27 և ուղարկվել է 12 հարցում: Վերջին 2 տարվա տվյալներով ամենից հաճախ հարցումներ ուղարկվել են ԱՄՆ-ի, Լատվիայի և ՌԴ-ի ՖՀՄ-ներին և, համապատասխանաբար, հաճախակի հարցումներ ստացվել են ՌԴ-ի, Լիտվայի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի և Մոլդովայի ՖՀՄ-ներից:

Գործնական կապերն ընդլայնելու, երկրի մակրոտնտեսական վիճակին ծանոթանալու և բանկային տարբեր ոլորտների շուրջ բանակցություններ վարելու նպատակով 2017 թ. ՀՀ կենտրոնական բանկ են այցելել Ղրղզստանի ազգային բանկի պատվիրակությունը՝ նախագահ Տոլկունբեկ Աբդիգուլովի գլխավորությամբ, Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական ապահովագրական կազմակերպության պատվիրակությունը՝ նախագահ Աբդոլնասեր Հեմաթիի գլխավորությամբ, Եվրասիական վարգացման բանկի պատվիրակությունը՝ նախագահ Դմիտրի Պանկինի գլխավորությամբ, Սևծովյան առևտրի և վարգացման բանկի պատվիրակությունը՝ գլխավոր քարտուղար Սերաֆիմ Ցոկասի գլխավորությամբ, Մերիլ Լինչ ամերիկյան բանկի ներկայացուցիչները, ՌԴ ՎՏԲ պատվիրակությունը՝ բանկի նախագահ Անդրեյ Կոստինի գլխավորությամբ և այլն:

Տարվա ընթացքում Կենտրոնական բանկը կազմակերպել է տասնյակ գործնական հանդիպումներ, կոնֆերանսներ, նիստեր, կլոր սեղաններ և համաժողովներ:

Անցկացված միջազգային համաժողովներից հատկապես հիշատակման են արժանի.

- ԱՄՀ և ՀԲ՝ Բելգիայի և Նիդեռլանդների ենթախմբի երկրների տարեկան հանդիպումը, որին մասնակցել են 14 երկրի ավելի քան հարյուր պատվիրակներ՝ կենտրոնական/ազգային բանկերի նախագահների և ֆինանսների նախարարների գլխավորությամբ:



- ԵԱՏՄ կենտրոնական/ազգային բանկերի ղեկավարների խորհրդի հերթական նիստը:
- Կենտրոնական բանկը MasterCard կազմակերպության հետ համատեղ կազմակերպել է վճարային համակարգի անկանխիկ վճարումների նոր տեխնոլոգիաների վարգացման վերաբերյալ կլոր սեղան՝ ՀՀ առևտրային բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ:
- ԱՊՀ անդամ պետությունների ապահովագրական վերահսկողական մարմինների ղեկավարների միջպետական համակարգող խորհրդի 12-րդ նիստը:
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW վարգացման բանկի Դիտորդ խորհրդի հերթական նիստը:
- Կենտրոնական բանկի աջակցությամբ կազմակերպված Եվրասիական ֆոնդային բորսաների ֆեդերացիայի տարեկան ժողովը:
- Ապգային վճարահաշվարկային համակարգերի վարգացման հարցերով խորհրդակցությունը՝ ԵԱՏՄ կենտրոնական/ապգային բանկերի ղեկավարների մասնակցությամբ և այլն:

2017 թվականի ընթացքում շարունակվել են երկկողմ, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում նախատեսված՝ օտարերկրյա կենտրոնական բանկերի հետ համաձայնագրեր, պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր ստորագրելու աշխատանքները:

Մասնավորապես՝

- 2017 թ. հունվարի 25-ին Երևանում Կենտրոնական բանկի և Ղրղզստանի Հանրապետության ապգային բանկի միջև կնքվել է Փոխըմբռնման և համագործակցության հուշագիրը:
- Փետրվարի 9-ին ՀՀ կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի ապահովագրության բյուրոյի միջև կնքվել է ապահովագրության ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիրը:
- Դեկտեմբերի 18-ին Երևանում Կենտրոնական բանկի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության KfW վարգացման բանկի միջև Գերմանա-հայկական հիմնադրամի ծրագրի շրջանակներում ստորագրվել է էներգաարդյունավետության բարձրացման նպատակով ՓՄՁ-ների ֆինանսավորման երկրորդ փուլի վարկային պայմանագիրը՝ 15 մլն եվրո արժողությամբ:

Կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են տարեկան հանդիպումների, ֆորումների, բանկային և ֆինանսական միջապգային համաժողովների, գիտաժողովների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների և աշխատանքային սեմինարների

ինչպես գործընկեր կառույցների միջև գործող տեխնիկական օժանդակության, այնպես էլ երկկողմ ու բազմակողմ համագործակցության շրջանակներում: 2017 թվականին նման միջոցառումների մասնակցել է Կենտրոնական բանկի մոտ 210 աշխատակից՝ հանդես գալով վեկուցումներով և ելույթներով, որոնց թեմաները ներառել են Կենտրոնական բանկի գործունեության բոլոր բնագավառները:

Երկկողմ համագործակցության շրջանակում 2017 թվականին Կենտրոնական բանկը շարունակել և խորացրել է համագործակցությունը գործընկեր միջազգային ֆինանսական կառույցների, ինչպես նաև հեղինակավոր գիտակրթական հաստատությունների հետ:

Կենտրոնական բանկի աշխատակիցները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել ՀՀ տարածքում և արտերկրում կազմակերպված բազմաթիվ վերապատրաստման ծրագրերին, դասընթաց-խորհրդակցություններին և փորձի փոխանակման այցերին:

Անձնակազմի կառավարում

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կենտրոնական բանկի աշխատակիցների (անորոշ և որոշակի ժամկետով աշխատողներ) թիվը կազմել է 736՝ 436 կին և 300 տղամարդ, միջին տարիքը՝ 40: Տարվա ընթացքում աշխատանքից ազատվել է 89 աշխատակից (նախորդ տարի՝ 32):

2017 թվականը հատկանշական էր կառուցվածքային փոփոխությունների առումով: Աշխատանքի արդյունավետության բարձրացման, գործառույթների վերաբաշխման նպատակով կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել մի շարք ստորաբաժանումներում: Վերոնշյալ փոփոխությունների արդյունքում կրճատվել է 34 աշխատատեղ:

Մրցույթների արդյունքներով ՀՀ կենտրոնական բանկում համալրվել է 17 թափուր աշխատատեղ: Տարվա ընթացքում, ստանձնելով ավելի բարդ գործառույթներ, 60 աշխատակից ունեցել է առաջխաղացում. նրանցից 4-ը նշանակվել են ղեկավար պաշտոններում:

Շարունակվել է երիտասարդ մասնագետների (առանց մասնագիտական աշխատանքային փորձի) ներգրավման, նրանց մասնագիտական գիտելիքների վարգացման և ապագայում թափուր աշխատատեղերի համալրման քաղաքականությունը, և 2017 թվականին «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» երկամսյա ծրագրի արդյունքներով Կենտրոնական բանկում աշխատանքի է անցել 8 երիտասարդ մասնագետ:

2017 թվականին Կենտրոնական բանկում գիտահետազոտական փորձառություն է անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 105 ուսանող:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված՝ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի նշանակման մրցույթին 2017 թ. մասնակցել է 25 դիմորդ. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Արցախի պետական համալսարանի 1-ական լավագույն ուսանողի հատկացվել է կրթաթոշակ: Իսահակ Իսահակյանի անվան

կրթաթոշակը ներդրվել է 2003 թվականին, և մինչ օրս տնտեսա-գիտական կրթություն ստացող 90 լավագույն ուսանողի տրամադրվել է կրթաթոշակ:

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի 50 աշխատակից դասավանդել է Հայաստանի տարբեր ուսումնական հաստատություններում՝ փոխանցելով իրենց փորձն ու գիտելիքները երիտասարդ մասնագետներին:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ


ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ

736

* ՀՀ ԿԲ աշխատակիցների միջին թիվը 771, մանրամասն տես Ֆինանսական հաշվետվություն



ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԸ




ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՎԱԾՆԵՐ

2017
89
ԱՇԽԱՏԱԿԻՑ

2016
32
ԱՇԽԱՏԱԿԻՑ

ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀԱՄԱԼՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

17




Տարվա ընթացքում, ստանձնելով ավելի բարդ գործառույթներ

60
աշխատակից ունեցել է առաջխաղացում, որից

4-Ը
ստանձնել է ղեկավար պաշտոն:

ՍԵՐՏԻՖԻԿԱՑԻԱ


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ



ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՁՆԵԼ
53

ՍՏԱՑԵԼ Է ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
63


ՆԵՐՔԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ





Մասնակցել է Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից իրական ժամանակի ռեժիմով անցկացվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին:

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ



25 դիմորդ

Հաղթողները՝

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի	1
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի	1
Արցախի պետական համալսարանի	1

Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակը ներդրվել է ***2003 թվականին*** և մինչ օրս լավագույն ***90 ուսանողի*** տրամադրվել է կրթաթոշակ:

«ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ծրագրի արդյունքում ԿԲ-ում աշխատանքի են անցել

8
երիտասարդ մասնագետ

2017 թվականին ԿԲ-ում գիտահետազոտական պրակտիկա անցած Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ-երի ուսանողների թիվը՝

105

ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ

50

ՄՈՏԱՑՄԱՆ

Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի ռեզերվն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքներն ընդլայնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները զարգացնելու նպատակով 2017 թվականին իրականացված աշխատակցի ռոտացիաները՝

8

Անձնակազմի մասնագիտական որակավորման բարձրացում

Կենտրոնական բանկում աշխատակիցների մասնագիտական շարունակական աճին նպաստող վերապատրաստման և վարգացման քաղաքականության ներքո 2017 թվականին ևս կազմակերպվել են աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանը նպատակաուղղված միջոցառումներ:

2017 թվականին Կենտրոնական բանկի աշխատակիցները վերապատրաստվել են արտասահմանյան բանկերում, այլ ֆինանսական կազմակերպություններում և մասնագիտական ուսումնական կենտրոններում, Հայաստանի Հանրապետության ուսումնական կենտրոններում, ինչպես նաև Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում՝ միջազգային հայտնի համալսարանների դասավանդողների ներգրավմամբ:

Կենտրոնական բանկի վարգացման ռազմավարական ոլորտներում մասնագիտական գիտելիքների խորացման և հմտությունների վարգացման նպատակով Կենտրոնական բանկի 187 աշխատակից մասնակցել է վերը նշված կառույցների կողմից կազմակերպված դասընթացների:

Պահպանելով Կենտրոնական բանկում տարիների ընթացքում կուտակած գիտելիքներն ու փորձը փոխանցելու ավանդույթը՝ Կենտրոնական բանկի արդի խնդիրների, գործառույթների մասին տեղեկանալու, ինչպես նաև մասնագիտական գործունեության համար կարևոր հմտությունները վարգացնելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկում ներքին ռեսուրսների օգտագործմամբ կազմակերպված 10 դասընթացների մասնակցել է 428 աշխատակից:

Կենտրոնական բանկի 17 աշխատակից մասնակցել է Ֆինանսական կայունության ինստիտուտի կողմից իրական ժամանակի ռեժիմով անցկացվող ֆինանսական վերահսկողության ուսուցողական դասընթացներին:

Կենտրոնական բանկում ղեկավար կադրերի ռեզերվն ապահովելու, փորձառու մասնագետների գիտելիքներն ընդլայնելու, երիտասարդ մասնագետների գիտելիքները վարգացնելու նպատակով 2017 թվականին իրականացվել է 8 աշխատակցի շրջափոխում (ռոտացիա):

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնական բանկի աշխատակիցները շարունակել են հանձնել ֆինանսական, հաշվապահական, աուդիտորական, ապահովագրական, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների համար սահմանված միջազգային մասնագիտական որակավորման քննություններ: 2017 թվականի դրությամբ միջազգային մասնագիտական որակավորում ունի 63, շարունակում է քննություններ հանձնել 53 աշխատակից: **ՀՀ կենտրոնական բանկի 6 աշխատակից Սիէֆէյ-ի (CFA) և 10 աշխատակից էյՍիՍիէյ-ի (ACCA) լիիրավ անդամ են:**

Հասարակայնության հետ կապեր

2017 թվականին Կենտրոնական բանկն իրականացրել է ֆինանսական համակարգման, շուկայում գործող ֆինանսական կազմակերպությունների գործունեությանն առնչվող իրադարձությունների, Կենտրոնական բանկի նախաձեռնությունների վերաբերյալ հանրության իրազեկման աշխատանքներ:


Ֆինանսական շուկայի մասնակիցները և հանրությունը տեղեկացվել են դրամավարկային քաղաքականության, ֆինանսական վերահսկողության և ֆինանսական կայունության ապահովման ոլորտում Կենտրոնական բանկի գործողությունների, ծրագրերի, նախաձեռնությունների մասին, տեղի են ունեցել քննարկումներ տարբեր հարցերի շուրջ:

Հասարակայնության հետ կապերի ծառայությունը տարվա ընթացքում հրապարակել է ռեպո (վերաֆինանսավորման) գործառնությունների տոկոսադրույքների մասին Կենտրոնական բանկի խորհրդի 8 որոշում: Հաղորդագրությունը հրապարակվել է որոշման կայացումից անմիջապես հետո, իսկ 10 օրվա ընթացքում հրապարակվել է Կենտրոնական բանկի խորհրդի նիստի արձանագրությունը: 4 արձանագրություն հրապարակվել է «Գնաճի հաշվետվություն» պարբերականում:

Քննարկումներ են կազմակերպվել լրատվամիջոցների ղեկավարների և Կենտրոնական բանկի ղեկավար կազմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կենտրոնական բանկը շարունակել է սոցկայքերի ակտիվ օգտագործումը՝ հրապարակելով նորություններ, հաղորդագրություններ, բանկի գործունեության մասին այլ նյութեր:

Հասարակայնության հետ կապերի ծառայությունը կազմակերպել է 5 միջոցառում՝ վանգվածային լրատվամիջոցների մասնակցությամբ և 41 հարցազրույց: 2017 թվականին ծառայությունը ստացել է 19 գրավոր հարցում, որոնց, օրենքով սահմանված կարգով, տրվել է պատշաճ արձագանք: Բավմաթիվ բանավոր հարցումներ ստացել են օպերատիվ պատասխաններ: Քաղաքացիներից և կազմակերպություններից առցանց ստացված 178 հարցումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Կենտրոնական բանկի գործունեության լուսաբանման նպատակով թողարկվել է 198 մամլո հաղորդագրություն: Կենտրոնական բանկի խորհրդի նիստերի մասին հրապարակվել է 32, իսկ ռեպո գործառնությունների տոկոսադրույքի մասին՝ 12 հաղորդագրություն:



Այցելուների կենտրոն [6]

2017 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը հաղթող է ճանաչվել «Հայկական ՓԻ ԱՐ ասոցիացիա» գիտատեղեկատվական ՀԿ մրցանակաբաշխության «Տարվա ֆինանսական PR» անվանակարգում՝ Հայաստանի դրամաշրջանառության պատմության և դրամավարկային քաղաքականության հանրայնացման համար:

2017 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը Երևանում (9815 այցելու) և մարզերում սպասարկել է 11 515 մարդու՝ նախորդ տարվա (10 513) համեմատ 9.5 %-ով ավելի:

2017 թվականին Այցելուների կենտրոնի կրթական ծրագրերի շրջանակում շարունակվել են ՀՀ պաշտպանության նախարարության ուսումնական հաստատությունների վինծառայողների և սաների համար «Մեկ օր Կենտրոնական բանկում» խորագրի ներքո կազմակերպված կրթական միջոցառումները: Տարվա ընթացքում, ընդհանուր առմամբ, Այցելուների կենտրոնում հյուրընկալվել են 218 վինծառայողներ/սաներ և դասախոսներ:

2017 թվականի մայիսին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնը մասնակցել է «Թանգարանային գիշեր» միջազգային ծրագրին, որի շրջանակներում ունեցել է 1306 այցելու:

2017 թվականին Կենտրոնական բանկի այցելուների կենտրոնում կազմակերպվել է ՀՀ ֆինանսների նախարարության «Պետական գանձարանի» պատմամշակութային դրամագիտական արժեքների ցուցադրությունը:

2017 թվականի սեպտեմբերի 12-19-ը Սյունիքի մարզկենտրոն Կապանում կազմակերպվել է «Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը: Ֆինանսներ բոլորի համար» արտագնա ցուցահանդես-կրթական ծրագիրը, որը բաղկացած էր երկու մասից՝ դրամի պատմությանը վերաբերող նյութերի ցուցադրությունից և անձնական ֆինանսների վերաբերյալ սեմինարների շարքից: Ծրագրի նպատակն էր բնակչությանը, դպրոցականներին, ուսանողներին ծանոթացնել ազգային դրամի պատմությանը, դրամի պաշտպանական հատկանիշներին, ֆինանսաբանկային համակարգի հիմնական գործառույթներին, ներկայացնել ֆինանսական համակարգի ծառայություններից օգտվողների իրավունքները: Ցուցահանդեսը Կապանում ունեցել է 1700 այցելու (աշակերտ/ուսանող, ուսուցիչ/դասախոս, քաղաքացի): 2017 թվականին Այցելուների կենտրոնը համագործակցել է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (COAF), «Ջինիշյան հիշատակի հիմնադրամի» (JMF), «Հայաստանի պատանեկան նվաճումներ» (JAA) հասարակական կազմակերպության, ՀԲԸՄ «Վաչե և Թամար Մանուկյան» վարժարանի (Կալիֆորնիա), «Հայկական ՓԻ ԱՐ ասոցիացիա» գիտատեղեկատվական հասարակական կազմակերպության, «Հայ կրթություն» կրթական հիմնադրամի, «Առ Ջի էյ էմ Ռիթեյլ Գրուպ Արմենիա» ՓԲԸ-ի (Retail Group Armenia), «ԱՅ էՅ ԲԻ» բիզնեսի միջազգային ակադեմիայի, Խնկո-Ապոր անվան ազգային մանկական գրադարանի, «Երիտասարդների վարգացման և հզորացման ինստիտուտ» ՀԿ-ի, «ԱՄԻ» ակումբի,

6 Մանրամասն տե՛ս visitorcentre.cba.am, museum.cba.am, www.cba.am կայքէջերում:

«Սմեշ ստուդիո»-ի, «Աստղ 8»-ի, «Մոնտեսորի Սիթի Արմենիա»-ի, «Հեփի դեյ» մանկական վարգացման ամառային դպրոցների, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ՝ հյուրընկալելով Հայաստանի բոլոր մարզերի դպրոցների աշակերտներին:

Կազմակերպվել են նաև կրթական-տեղեկատվական դասընթացներ Երևանի թիվ 115 ավագ դպրոցի և Շիրակի մարզի Գյումրի քաղաքի ու գյուղական համայնքների մի շարք դպրոցների ուսուցիչների համար:

Ներքին աուդիտ

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացնում է Վերստուգիչ խումբը, որը ձևավորվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից՝ համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի:

Վերստուգիչ խումբն առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, Ներքին աուդիտորների ինստիտուտի (IIA) Մասնագիտական գործունեության միջազգային հայեցակարգով (IPPF), ինչպես նաև Ներքին հսկողության «COSO Internal Control - Integrated Framework» և Տեղեկատվական տեխնոլոգիաների «Cobit» փաստաթղթերով:

Կենտրոնական բանկում ներքին աուդիտի գործառույթն իրականացվում է Ներքին աուդիտի սահմանմանը և Ստանդարտներին, ինչպես նաև էթիկայի կանոններին համապատասխան՝ համաձայն Նիդեռլանդների բանկի փորձագետների արտաքին գնահատման եզրակացության: Վերջին գնահատումը կատարվել է 2017 թ., որի արդյունքներով Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբը կրկին ստացել է «համապատասխանում է» ամենաբարձր գնահատականը:


Վերստուգիչ խմբի աշխատակիցներն անդամակցում են Ներքին աուդիտորների ինստիտուտին (IIA), Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիային (ISACA), Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիային (ACCA) և ունեն այդ կազմակերպությունների կողմից տրվող միջազգային որակավորումներ (CIA, CRMA, CISA, CRISC, ACCA):

ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը շարունակում է ակտիվ աշխատանքներ իրականացնել տարածաշրջանում առաջատար հետազոտական և գիտակրթական կառույց դառնալու ուղղությամբ: Կենտրոնը 2017 թվականին ունեցել է վգալի ձեռքբերումներ և հաջողություններ հետազոտությունների իրականացման, միջազգային համագործակցության և սոցիալական պատասխանատվության ոլորտներում: **Կենտրոնական բանկի առաքելությունն է Դիլիջանում գիտական այնպիսի միջավայրի ստեղծումը, որը կնպաստի գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, արդի տնտեսագիտական խնդիրների և դրանց գործնական կիրառման միջազգային փորձի ուսումնասիրությանը (հետազոտությունների վրա հիմնված որոշումների կայացման մշակույթի արմատավորմանը), կկատարի որակյալ հետազոտական աշխատանքներ վարգացող տնտեսությունների վերաբերյալ և կնպաստի Կենտրոնական բանկի նպատակների**

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՀԵՏԱՋՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ



արդյունավետ իրագործմանը: Դիլիջանի ՈւՀԿ-ն գործունեության ընթացքում շարունակաբար բարձրացրել է իր վարկանիշը՝ որպես Հայաստանի, տարածաշրջանի, Արևելյան Եվրոպայի կենտրոնական բանկերի, ֆինանսական այլ կազմակերպությունների, միջազգային կառույցների ու գործարար ոլորտի ներկայացուցիչների հանդիպումների կազմակերպման և հետազոտությունների իրականացման հարթակ:

2017 թ. ընթացքում Կենտրոնական բանկը Դիլիջանում ներգրավել է նոր մասնագետների. Դիլիջանի ՈւՀԿ-ում աշխատակիցների թիվն այսօր 193 է:

2017 թվականին իրականացվել են գիտահետազոտական աշխատանքներ, որոնց սկիզբը դրվել է 2015 թվականին: Տարվա ընթացքում կազմակերպվել են խորացված տնտեսագիտական դասընթացներ, որոնք վարել են աշխարհի լավագույն բուհերից և միջազգային կազմակերպություններից հրավիրված հեղինակավոր մասնագետներ: Աշխատակիցներին խորհրդատվություն տրամադրելու, դասախոսություններ կարդալու և համատեղ հետազոտական աշխատանքներ կատարելու նպատակով 2017 թ. Դիլիջանի ՈւՀԿ են այցելել Նորվեգիայի ազգային բանկի խորհրդատու/ավագ տնտեսագետ և բիզնեսի դպրոցի տնտեսագիտության պրոֆեսոր Ջունիոր Մեյը, Բարսելոնայի համալսարանի դասախոս Խավիեր Ռաուրիչը, ԱՄՆ-ի Հյուսիսարևմտյան համալսարանի (Northwestern University) տնտեսագիտության պրոֆեսոր Լոուրենս Քրիշտիանոն, Արժույթի միջազգային հիմնադրամի տնտեսագետ Տիգրան Պողոսյանը և այլն:

Դիլիջանի ՈւՀԿ-ն Ֆինանսների նախարարության հետ համատեղ կատարել է հարկային քաղաքականության վերաբերյալ հետազոտություն: ԱՄՀ-ի հետ իրականացված ընդհանուր ծրագրերի շրջանակում կատարվել է կենտրոնական բանկերի թափանցիկության գնահատման վերլուծություն: Իրականացվել են նաև մի շարք վերլուծություններ ֆինանսական ճգնաժամից հետո վարգացած երկրների տնտեսական աճի ներուժի գնահատման վերաբերյալ: Ասիական բանկի ինստիտուտի հետ համատեղ իրականացվել է հետազոտություն ֆինանսական ներգրավվածության և ֆինանսական գրագիտության մակարդակի վերաբերյալ: Կատարված հետազոտությունների վգալի մասը 2018 թվականի ընթացքում կհրապարակվեն որպես միջազգային կառույցների և Կենտրոնական բանկի աշխատանքային փաստաթղթեր:

2017 թվականին շարունակվել է համագործակցությունը Համաշխարհային բանկի հետ՝ ֆինանսական գրագիտության ուղիների արդյունավետության բարձրացման ծրագրի շրջանակներում: Մի շարք գյուղական համայնքներում իրականացվել է նախապես մշակված ծրագիր. վարքագծային հետազոտությունների մեթոդների կիրառմամբ հարցապրույցներ են անցկացվել Տավուշի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի մոտ 15 գյուղերում: Հետազոտությունը կատարվել է Համաշխարհային բանկի և Կենտրոնական բանկի աշխատակիցների համատեղ ջանքերով: Սույն աշխատանքների արդյունքում բացահայտվել են վարքագծային վարկածներ, որոնք կդրվեն ֆինանսական գրագիտության ապահովման ավելի արդյունավետ քաղաքականության մշակման հիմքում:

Դիլիջանի ՈւՀԿ-ի և Հայաստանի ամերիկյան համալսարանի փոխգործակցության շրջանակում Դիլիջանի ՈւՀԿ-ի մասնագետները դասավանդել են Ամերիկյան համալսարանի տնտեսագիտության մագիստրոսական ծրագրում, որը գործարկվում է Դիլիջանի ՈւՀԿ-ում: 2017 թվականին այստեղ երկու փուլով սովորել է 41 ուսանող:

2017 թվականին Դիլիջանի ՈւՀԿ-ում ամառային փորձառություն է անցել Հարվարդի, Սթենֆորդի, Բոկկոնի, Նյու Յորքի, Լոնդոնի համալսարաններից 8 ուսանող:

2017 թվականի ընթացքում Դիլիջանի ՈւՀԿ-ում կազմակերպվել են տարածաշրջանային և միջազգային նշանակություն ունեցող տասնյակ գիտաժողովներ, կոնֆերանսներ, սեմինար-քննարկումներ, դասընթացներ, տեխնիկական վարգացմանն ուղղված հաքաթոն, ֆորումներ և այլն:

Մայիս ամսին Վիեննայում ՀՀ կենտրոնական բանկ հայկական միջազգային ֆինանսական համագործակցության կենտրոնում տեղի է ունեցել «Կենտրոնական և առևտրային բանկերի աշխատակիցների սերտիֆիկացման ծրագրի» առաջին փուլը: Այն կազմակերպվել է ՀՀ կենտրոնական բանկի, Հոլանդիայի կառավարության և Զարգացման ֆինանսական կազմակերպության համատեղ ջանքերով, որի երկրորդ փուլը անցկացվել է սեպտեմբերին Դիլիջանի ՈւՀԿ-ում: Ծրագրի մասնակիցներին դասավանդում էին պրոֆեսոր Ջեյմս Սթոքը Հարվարդի համալսարանից, պրոֆեսոր Ժաումե Վենտուրան Բարսելոնայի համալսարանից, պրոֆեսոր Ֆլորենսիո Լոպես դե Սիլանեսը ՍԿԵՄԱ բիզնես դպրոցից և Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյից, պրոֆեսոր Ջոզեֆ Մակ-Քեյհրին Թրիլբուրգի համալսարանից:

ՀՀ կենտրոնական բանկը Արժույթի միջազգային հիմնադրամի հետազոտական վարչության հետ համատեղ Դիլիջանի ՈւՀԿ-ում իրագործել է «Առաջատար մակրոտնտեսական քաղաքականության մոդելավորում» ինտենսիվ վերապատրաստման ծրագիրը, որը համախմբում է աշխարհի տարբեր երկրների մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող հաստատությունների հետազոտողներին, գիտնականներին: Վերապատրաստման նշված ծրագրի իրականացման ընթացքում հետազոտությունների վրա հիմնված աշխատանքների նախագծերը ներկայացվել են ԱՄՀ-ում:

Գործընկեր կառույցների հետ համագործակցության շրջանակում՝

- Giesecke և Devrient կազմակերպության մասնագետների մասնակցությամբ կազմակերպվել է «Նոր շարքի թղթադրամների թողարկում» թեմայով միջազգային դասընթաց:
- «Ամունդի» կազմակերպության հետ համատեղ անցկացվել է «Կլիմայի փոփոխություն, վարկային վերլուծություն և ակտիվների տեղաբաշխում ցածր եկամտաբերության միջավայրում» թեմայով տարածաշրջանային կոնֆերանս:
- Միջազգային հաշվարկների բանկի Ֆինանսական կայունության ինստիտուտի մասնակցությամբ տեղի է ունեցել «Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության և համաչափության սկզբունքի կիրառմամբ ապահովադիրների շահերի պաշտպանության և ֆինանսական կայունության ապահովում» թեմայով միջազգային դասընթաց:

- Տորոնտո կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Կոնսոլիդացված վերահսկողություն» թեմայով միջազգային դասընթաց:
- Դիլիջանի ՈւՀԿ-ում կազմակերպվել է «Դիլիջանի միջազգային սամմիթը», որի նպատակն էր համախմբել երիտասարդներին, ովքեր ցանկանում են Հայաստանում ստեղծել իրենց սեփական ստարտափերը:
- Դիլիջանի ՈւՀԿ-ում տեղի է ունեցել «Հայաստանի վարչատարածքային վարգացման բարեփոխումներ և ներդրումային դաշտ» քննարկում-խորհրդակցությունը:

Համաշխարհային առաջատար ուսումնական հաստատությունների դասախոսների մասնակցությամբ Կենտրոնական բանկի տնտեսական հետազոտության վարչության աշխատակիցների համար տարվա ընթացքում կազմակերպվել են 6 կրթական ծրագրեր: ԴՈՒԿ-ում կազմակերպված վերոհիշյալ և այլ միջոցառումներ հնարավորություն են ընձեռում մասնակիցներին, այդ թվում ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցներին, ուսումնասիրելու ոլորտի միջազգային փորձը, որը մեծապես նպաստում է հետագա վերլուծությունների և հետազոտությունների իրականացմանը, ինչպես նաև առաջադրանքների կատարման արդյունավետության բարձրացմանը:

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական և ազգային բանկերի հետ համագործակցության շրջանակներում Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում անցկացվել են մի շարք դասընթացներ, որոնց մասնակցել են ինչպես ԵԱՏՄ երկրների, այնպես էլ օտարերկրյա այլ բանկերի մոտ 144 ներկայացուցիչներ: Կենտրոնական բանկը կազմակերպել է հատուկ թեմաներով գործնական դասընթացներ, կատարվել է փորձի փոխանակում, ներկայացվել է Կենտրոնական բանկի լավագույն փորձը:

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

60+ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

1000+ ՄԱՍՆԱԿԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽՈՒՄԲ 1 **21**


ԽՈՒՄԲ 2 **20**

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ

2014	2015	2016	2017
3	9	6	8

Սոցիալական

Կենտրոնական բանկը շարունակել է իր առաքելությունը Դիլիջան քաղաքի վարգացման ուղղությամբ՝ դա դիտարկելով որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գլխավոր բաղադրիչ:



Կենտրոնական բանկի օժանդակությամբ շարունակել են գործել Դիլիջանի կենտրոնական դպրոցը, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը, «Գիտելիք հանուն վարգացման» կենտրոնի գրադարանը և քաղաքի կարևոր այլ ենթակառուցվածքներ: Կենտրոնը շարունակում է իրականացնել կրթական մի շարք նախաձեռնություններ, որոնք հնարավորություն կտան ապահովելու երեխաների բազմակողմանի վարգացումը:

- «Գիտելիք հանուն վարգացման» կենտրոնը հնարավորություն է տալիս Դիլիջանի և հարակից շրջանների երեխաներին օգտվելու հարուստ գրականություն ունեցող գրադարանից, ունենալու ընդհանուր շփման և քննարկումների հարթակ, մասնակցելու կենտրոնի կողմից կազմակերպված բաց դասերին և միջոցառումներին: 2017 թվականի ընթացքում «Գիտելիք հանուն վարգացման» կենտրոնի գրադարանի բաժանորդների թիվն ավելացել է՝ հասնելով 1649-ի: Նախորդ տարվա համեմատությամբ գրադարանի տրամադրած գրքերի քանակն ավելացել է 287-ով՝ կազմելով 5328: Կենտրոնն ակտիվ գործունեություն է ծավալել նաև երեխաների վարգացման և ստեղծարար որակների ձևավորման ուղղությամբ՝ կազմակերպելով 128 տարաբնույթ միջոցառում, ապահովելով 2000-ից ավելի մասնակից: 2017 թ. փերվարից

ԴՈՒԿ-ում գործում է «Գիտելիք հանուն վարգացման» կենտրոնի թանգարանը: Տարվա ընթացքում թանգարանը հյուրընկալել է 2005 այցելուի, կազմակերպել 50-ից ավելի ճանաչողական դասընթաց: Կենտրոնը հանդես է եկել «Ակտիվ քաղաքացի» նոր նախաձեռնությամբ, որի նպատակն է որոշակի բնագավառում կայացած մարդկանց միջոցով երեխաներին փոխանցել փորձ ու գիտելիքներ՝ բացահայտելով տվյալ բնագավառի դրական և բացասական կողմերը, ինչը կօգնի երեխաներին մասնագիտության ընտրության կողմնորոշման հարցում: Այս նախաձեռնությանը մասնակցել է 500-ից ավելի երեխա:

- Դիլիջանի կենտրոնական դպրոցը, որը կառավարվում է «Այբ» հիմնադրամի կողմից, ունի 123 աշակերտ, որոնց շուրջ 80 տոկոսը դիլիջանցիներ, իսկ ուսուցիչների մի մասը տարածաշրջանի բնակիչներ են, որոնք վերապատրաստվել են «Այբ» կրթական համալիրի ծրագրով:
- «ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն 2017 թ. այցելել է 348 երեխա: Ծրագիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել 12-18 տարեկանների շրջանում: Հավելենք նաև, որ «ԹՈՒՄՈ» ծրագրերի շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով 54 դասընթաց և 4 հատուկ դասընթաց:

ՀՀ ԿԲ ԴԻԼԻՋԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԳԻՏԵԼԻՔ ՀԱՆՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ» ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԴԱՐԱՆ

120+
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

1649
ԲԱԺԱՆՈՐԴ

2 000+
ՄԱՍՆԱԿԻՑ

10 000+
ԳԻՐՔ

ԹԱՆԳԱՐԱՆ

50+
ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

2 000+
ԱՅՑԵԼՈՒ

50+
ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ



06

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **2017**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորական եզրակացություն 75

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 79
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 80
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն 82
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 83

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն 85
2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում 86
3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ 103
4. Տոկոսային եկամուտ 109
5. Տոկոսային ծախս 109
6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից 109
7. Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից 110
8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից 110
9. Այլ եկամուտ 110
10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր 111
11. Այլ ծախսեր 111
12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ 112
13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ 115
14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ 116
15. Ներդրումային արժեթղթեր 117
16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ 118
17. Հիմնական միջոցներ 121
18. Ոչ նյութական ակտիվներ 122
19. Այլ ակտիվներ տեղական արժույթով 122
20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ 123
21. Այլ փոխառություններ 123
22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով 124
23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ 124
24. Թողարկված պարտատոմսեր 125
25. Կապիտալի կառավարում 125
26. Պայմանական պարտավորություններ 126
27. Գործարքներ կապակցված կողմերի հետ 127
28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 130
29. Ֆինանսական գործիքների իրական արժեք 131
30. Ռիսկերի կառավարում 136
31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն 149
32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն 151

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Խմբի 2017 թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն

Այլ տեղեկատվությունը ներառում է 2017 թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի համախմբված ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ այլ տեղեկատվությանը և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջև, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ: Եթե մեր կատարած աշխատանքը հիմք է հանդիսանում եզրակացնելու, որ այլ տեղեկատվությունը պարունակում է էական խեղաթյուրումներ, մենք պարտավոր ենք տեղեկացնել այդ փաստի մասին: Մենք այդպիսի փաստերի մասին տեղեկություն չունենք:

Ղեկավարության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը պատասխանատու է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության առումով: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումների վրա, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը.
- գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը.
- ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, մենք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդին տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

Աուդիտի բաժնի հիմնադիր գործընկեր՝ էրիկ Հայրապետյան

Գլխավոր տնօրեն՝ Հ. Սարգսյան՝
Ի դեմս լիազորված անձ է. Հայրապետյանի
(գործող 01.08.2016 թ. տրված լիազորագրի հիման վրա)

3 ապրիլի, 2018 թ.
ՀՀ, ք. Երևան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2017 թ.	2016 թ.
Տոկոսային եկամուտ	4	24,810,893	24,696,468
Տոկոսային ծախս	5	(14,000,482)	(10,229,329)
Զուտ տոկոսային եկամուտ		**10,810,411**	**14,467,139**
Միջնորդավճարների գծով եկամուտ		104,163	57,810
Միջնորդավճարների գծով ծախս		(827,766)	(858,255)
Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից	6	5,522,258	(2,647,523)
Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	7	(419,692)	637,643
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	8	5,282,609	4,321,214
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ակտիվներից		291,035	–
Այլ եկամուտ	9	3,852,261	3,576,016
Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	10	(570,486)	(466,448)
Այլ ծախսեր	11	(20,473,094)	(21,004,558)
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		**3,571,699**	**(1,916,962)**
Շահութահարկի գծով ծախս		(1,688,453)	(1,468,087)
Հաշվետու տարվա շահույթ/(վնաս)		**1,883,246**	**(3,385,049)**
Շահույթը/(վնասը) վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		1,856,156	(3,400,332)
Չվերահսկող բաժնեմասին		27,090	15,283
Այլ համապարփակ եկամուտ			
Հաջորդող ժամանակաշրջաններում որպես շահույթ կամ վնաս վերադասակարգվող հոդվածներ			
Վաճառքի համար մատչելի ակտիվների իրական արժեքի փոփոխություններից զուտ չիրացված օգուտ		1,123,763	2,216,153
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթերից իրացված զուտ օգուտ՝ վերադասակարգված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(291,035)	–
Հաշվետու տարվա այլ համապարփակ եկամուտ		**832,728**	**2,216,153**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ/(վնաս)		**2,715,974**	**(1,168,896)**
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտը/ (վնասը) վերագրելի է՝			
Բանկի սեփականատիրոջը		2,676,378	(1,185,675)
Չվերահսկող բաժնեմասին		39,596	16,779

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2018 թ. ապրիլի 3-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և ստորագրվել՝

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գլխավոր հաշվապահ

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ		45,575,878	24,771,453
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	12	338,451,346	423,000,092
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	707,060,655	591,641,527
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	14	202,928	–
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	15	2,321,188	2,209,431
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	15	32,089,943	31,431,281
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	16	92,296,129	85,480,295
Այլ ակտիվներ		325,614	1,612,496
Ընդամենը ակտիվներ արտարժույթով		**1,218,323,681**	**1,160,146,575**
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	12	307,508,525	284,341,346
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	13	–	2,352,333
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	15	92,039,044	101,788,443
Հիմնական միջոցներ	17	73,096,780	75,507,181
Ոչ նյութական ակտիվներ	18	3,037,110	1,582,082
Այլ ակտիվներ	19	15,253,394	13,491,471
Ընդամենը ակտիվներ տեղական արժույթով		**490,934,853**	**479,062,856**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**1,709,258,534**	**1,639,209,431**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	179,414,268	258,230,092
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	1,242,391	1,195,241
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	14	13,184	79,950
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16	291,752,144	279,123,932
Այլ փոխառություններ	21	155,581,621	113,192,723
Այլ պարտավորություններ		498,396	367,852
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով		**628,502,004**	**652,189,790**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		516,094,481	455,401,582
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	20	385,491,051	329,459,340
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	23	161,501,459	183,925,544
Թողարկված պարտատոմսեր	24	4,751,824	8,788,038
Այլ պարտավորություններ	22	4,648,825	4,067,367
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով		**1,072,487,640**	**981,641,871**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**1,700,989,644**	**1,633,831,661**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
(շարունակություն)

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Թողարկված կապիտալ	25	100,000	100,000
Գլխավոր պահուստ		25,480,248	25,480,248
Կառավարության կողմից թողարկված մուրհակ	25	73,810,843	73,810,843
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	25	1,903,879	1,083,657
Կուտակված վնաս		(93,984,117)	(95,840,273)
Բանկի սեփականատիրոջը վերագրելի զուտ ակտիվներ		**7,310,853**	**4,634,475**
Չվերահսկող բաժնեմաս		958,037	743,295
Ընդամենը սեփական կապիտալ		**8,268,890**	**5,377,770**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		**1,709,258,534**	**1,639,209,431**

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Բանկի սեփականատիրոջը վերագրելի							
	Թողարկված լրացիկ կապիտալ	Գլխավոր պահուստ	Կապիտալում կորցրած թողարկված կրկնակի նպատակով	Վաճառքի համար նախատեսված վերաբաշխվող գույքագրման պահուստ	Այլ թողարկված կապիտալ	Ընդամենը	Չվերահսկող բաժնեմաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2016 թ. հունվարի 1-ին	**100,000**	**23,614,115**	**81,275,373**	**(1,131,000)**	**(90,573,808)**	**13,284,680**	**726,516**	**14,011,196**
Շահույթի բաշխում	**–**	**1,866,133**	**(7,464,530)**	**–**	**(1,866,133)**	**(7,464,530)**	**–**	**(7,464,530)**
Հաշվետու տարվա վնաս	–	–	–	–	(3,400,332)	(3,400,332)	15,283	(3,385,049)
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	2,214,657	–	2,214,657	1,496	2,216,153
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	**–**	**–**	**–**	**2,214,657**	**(3,400,332)**	**(1,185,675)**	**16,779**	**(1,168,896)**
Մնացորդը 2016 թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,083,657**	**(95,840,273)**	**4,634,475**	**743,295**	**5,377,770**
Դուստր ընկերության ձեռքբերում	–	–	–	–	–	–	163,000	163,000
Դուստր ընկերությունում բաժնեմասի նվազում	–	–	–	–	–	–	12,146	12,146
Հաշվետու տարվա շահույթ	–	–	–	–	1,856,156	1,856,156	27,090	1,883,246
Այլ համապարփակ եկամուտ	–	–	–	820,222	–	820,222	12,506	832,728
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	**–**	**–**	**–**	**820,222**	**1,856,156**	**2,676,378**	**39,596**	**2,715,974**
Մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ին	**100,000**	**25,480,248**	**73,810,843**	**1,903,879**	**(93,984,117)**	**7,310,853**	**958,037**	**8,268,890**

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2017 թ.	2016 թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		3,571,699	(1,916,962)
Ճշգրտումներ՝ հաշվետու տարվա շահույթը/(վնասը) զուտ դրամական հոսքերին համաձայնեցնելու նպատակով			
Մաշվածություն և ամորտիզացիա	11	4,699,999	4,943,278
Հիմնական միջոցների օտարումից վնաս/(օգուտ)		1,601	(21,523)
Ստացվելիք տոկոսներ		149,287	(775,343)
Վճարվելիք տոկոսներ		634,626	374,575
Զուտ (օգուտ)/վնաս արտարժույթի վերագնահատումից	6	(5,100,923)	2,883,382
Զուտ վնաս իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից		1,230,115	1,092,210
Զուտ օգուտ վաճառքի համար մատչելի ակտիվներից		(291,035)	–
Այլ ծախսեր		478,742	–
Վճարված շահութահարկ		(1,544,292)	(1,592,996)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		**3,829,819**	**4,986,621**
Գործառնական ակտիվների զուտ (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		(21,449,963)	(14,720,786)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ և ածանցյալ ֆինանսական գործիքներ		(102,494,666)	(81,862,598)
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		–	(6,565,535)
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		(22,812,471)	32,553,231
Այլ ակտիվներ		1,212,644	(1,912,755)
Գործառնական պարտավորությունների զուտ աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		60,692,899	41,787,825
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ		(28,454,791)	76,193,210
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ		(21,872,821)	45,989,830
Թողարկված պարտատոմսեր		(4,137,300)	5,388,019
Այլ պարտավորություններ		569,427	1,151,076
Զուտ դրամական միջոցների հոսքեր (օգտագործված)/ստացված գործառնական գործունեությունից		**(134,917,223)**	**102,988,138**
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,123,468)	(4,067,665)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		1,042,076	41,889
Վաճառքի համար մատչելի ակտիվների վաճառքից և մարումից մուտքեր		10,888,357	3,377,068
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների ձեռքբերում		(24,040,370)	(30,746,502)
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների մարումից մուտքեր		26,295,240	49,747,753
Դուստր ընկերության ձեռքբերում		(200,000)	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		**9,861,835**	**18,352,543**

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն
2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(շարունակություն)

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2017 թ.	2016 թ.
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված վարկեր		52,568,044	38,898,587
Մարված վարկեր		(23,274,235)	(7,998,714)
Դուստր ընկերությունում բաժնեմասի նվազում		12,146	–
Զուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		**29,305,955**	**30,899,873**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		**14,499,222**	**(1,331,421)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(81,250,211)**	**150,909,133**
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին	28	417,512,735	266,603,602
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին	28	**336,262,524**	**417,512,735**
Լրացուցիչ տեղեկատվություն			
Ստացված տոկոսներ		24,960,180	23,921,125
Վճարված տոկոսներ		(13,365,856)	(9,854,754)

1-32 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (այսուհետ՝ ՖՀՄՍ) համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Բանկ) և վերջինիս դուստր կազմակերպությունների (այսուհետ միասին՝ Խումբ) գործունեության համար:

Բանկն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին (այսուհետ՝ Օրենք) և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին համապատասխան:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան փող., 6 շենք: Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2017 թվականին կազմել է 771 (2016 թ.՝791):

Բանկը շահույթ ստանալու նպատակ չի հետապնդում: Բանկի գործունեության ֆինանսական արդյունքները, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի կառուցվածքը սահմանվում են Բանկի գործառույթներով:

Համաձայն Օրենքի՝ Բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում, որն իրագործվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնական խնդրի՝ Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության Կառավարության (այսուհետ՝ Կառավարություն) ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Բանկի խոշոր դուստր կազմակերպությունները ներկայացված են ստորև.

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող %		Հիմնադրման ամսաթիվ
			2017 թ.	2016 թ.	
«Արմենիան Քարդ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	56.25	57.50	մարտ 2000 թ.
«Հայինկասացիա» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Դրամական միջոցների փոխադրումներ	100.00	100.00	ապրիլ 1998 թ.
«Համահայկական բանկ» ԲԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Բանկային գործունեություն	–	100.00	դեկտեմբեր 2009 թ.
«Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	հունիս 2009 թ.
«Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Հիփոթեքային վերաֆինանսավորում	100.00	100.00	փետրվար 2010 թ.
«Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վարկավորման աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2010 թ.
«Ավտոտրանսպորտային միջոցների հատուկ նշանակության միասնական պատուհան» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Ապահովագրական ենթակառուցվածքների աջակցություն	100.00	100.00	դեկտեմբեր 2013 թ.
«ԱՐ-ՈՒՍ» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	100.00	–	դեկտեմբեր 2017 թ.
«ԷՄԹԻ Տրանսֆեր» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	Վճարահաշվարկային ծառայություններ	55.09	–	դեկտեմբեր 2017 թ.

2. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան՝ Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների համար:

(բ) Չափման հիմունքները

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների (ներառյալ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները) և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Այդ դրույթները հետևողականորեն կիրառվել են հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ:

(գ) Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ձևը

Բացառիկ դեպքերում համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկատվության մանրամասն բացահայտումը կարող է հանգեցնել ՀՀ ամբողջ ֆինանսական համակարգի նկատմամբ վստահության կորստի: Հետևաբար, չնայած նման գործառնու-

թյունների ֆինանսական արդյունքներն արտացոլված են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում, Խումբը կարող է միայն սահմանափակ բացահայտումներ ներկայացնել նման գործարքների վերաբերյալ:

(դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Խմբի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

(ե) Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարությունն օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

Իրական արժեք

Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ, ներառյալ՝ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:

Արժեզրկման գնահատում

Խումբը պարբերաբար կատարում է փոխառությունների և դեբիտորական պարտքերի՝ արժեզրկված լինելու գնահատում: Սեփական փորձից ելնելով՝ Խումբը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում, և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուների պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք հարաբերակցվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման հետ: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և փոխառությունների ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով՝ Խումբն օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող փոխառությունների և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը գործարքներ է կնքում կապակցված կողմերի հետ: ՀՀՄՍ 39-ով պահանջվում է ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչել իրենց իրական արժեքով: Դատողություն է կիրառվում որոշելիս՝ արդյոք գործարքները գնանշվում են շուկայական, թե ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա այդպիսի գործարքների համար գործող շուկա: Դատողության

համար հիմք են ծառայում չկապակցված կողմերի հետ համանման գործարքների գնանշումը և արդյունավետ տոկոսադրույքի վերլուծությունը: Կապակցված կողմերի հետ մնացորդների պայմաններն ու դրույթները բացահայտված են Ծանոթագրություն 27-ում:

Արժույթի միջազգային հիմնադրամի (այսուհետ՝ ԱՄՀ) *հետ գործարքների հաշվառում*

Համաձայն «ԱՄՀ-ի գործարքները և ֆինանսական կազմակերպումը» ուղեցույցի՝ ԱՄՀ-ի յուրաքանչյուր անդամ նշանակում է ֆիսկալ գործակալություն (ֆինանսների նախարարություն, կենտրոնական բանկ կամ համանման կազմակերպություն)՝ ԱՄՀ-ի հետ ֆինանսական գործարքներ կատարելու համար և պահառուի՝ (կենտրոնական բանկ կամ համանման գործակալություն)՝ ԱՄՀ-ի հաշիվները պահելու համար (ԱՄՀ թիվ 1 և 2 հաշիվներ և արժեթղթերի հաշիվ):

Համաձայն «Արժույթի միջազգային հիմնադրամին, Վերակառուցման և զարգացման միջազգային բանկին, Միջազգային ֆինանսական կորպորացիային, Զարգացման միջազգային ասոցիացիային, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին, Կապիտալ ներդրումների բազմակողմանի երաշխիքների գործակալությանը և Կապիտալ ներդրումների վերաբերյալ տարածայնությունների կարգավորման միջազգային կենտրոնին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին» ՀՀ օրենքի՝ Բանկը, ըստ ԱՄՀ-ի հետ կնքված պայմանագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի, հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ: Բանկը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության պահառու:

Այն դեպքում, երբ Կենտրոնական բանկն ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է ֆիսկալ գործակալի գործառույթ, արդյունքում առաջացած ակտիվների և պարտավորությունների գումարները և գործառնությունների արդյունքները արտացոլվում են Կենտրոնական բանկի ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում: Երբ Կենտրոնական բանկը ԱՄՀ-ի հետ գործառնություններում իրականացնում է պահառուի գործառույթ, բոլոր գործառնություններն իրականացվում են Կենտրոնական բանկի թղթակցային հաշիվների միջոցով, սակայն այդ գործառնությունների արդյունքում առաջացող ակտիվների և պարտավորությունների գումարները և համապատասխան շահույթը կամ վնասը չեն արտացոլվում Կենտրոնական բանկի՝ ֆինանսական վիճակի և շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններում:

(զ) Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին անցում

Խումբը ընդունել է հետևյալ նոր ՖՀՄՍ ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք ուժի մեջ են մտնում 2017 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում՝ «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն». բացահայտման նախաձեռնություն

Ըստ նոր պահանջների՝ ընկերությունները պետք է բացահայտեն տեղեկատվություն ֆինանսավորման գործունեության հետևանքով իրենց ֆինանսական պարտավորությունների փոփոխությունների վերաբերյալ, ներառյալ փոփոխությունները ինչպես դրամական հոսքերից, այնպես էլ ոչ դրամական հոդվածներից (օր.՝ փոխարժեքային տարբերությունից օգուտներն ու վնասները): Խումբը Ծանոթագրություն 32-ում տրամադրել է տեղեկատվությունը ինչպես ընթացիկ, այնպես էլ համեմատական ժամանակաշրջանի համար:

Փոփոխություններ ՀՀՄՍ 12-ում՝ «Շահութահարկ». չիրացված կորուստների գծով հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Փոփոխությունները հստակեցնում են, որ ընկերությունը պետք է հաշվի առնի, թե արդյոք հարկային օրենսդրությունը սահմանափակում է հարկվող շահույթի աղբյուրները, որոնց նկատմամբ կարող է նվա-

զեցումներ կատարել չիրացված կորուստներին վերաբերող նվազեցվող ժամանակավոր տարբերությունները մարելիս: Ավելին՝ փոփոխությունները տրամադրում են ուղեցույց, թե ինչպես ընկերությունը պետք է որոշի ապագա հարկվող շահույթը և բացատրում այն հանգամանքները, երբ հարկվող շահույթը կարող է ներառել որոշ ակտիվների փոխհատուցում իրենց հաշվեկշռային արժեքից ավելի մեծ արժեքով: Փոփոխությունների կիրառումը չի ազդում Խմբի ֆինանսական վիճակի և արդյունքների վրա, քանի որ Խումբը չունի նվազեցվող ժամանակավոր տարբերություններ կամ ակտիվներ, որոնք գտնվում են փոփոխությունների շրջանակում:

Փոփոխություններ ՖՀՄՍ 12-ում՝ «Այլ կազմակերպություններում մասնակցության բացահայտում». բացահայտման պահանջների շրջանակի պարզաբանում

Փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՀՄՍ 12-ի բացահայտման որոշ պահանջներ կիրառելի են դուստր ընկերություններում, համատեղ ձեռնարկումներում կամ ասոցիացված կազմակերպություններում ընկերության բաժնեմասի (կամ համատեղ ձեռնարկումներում կամ ասոցիացված կազմակերպություններում բաժնեմասի մի մասի) համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար պահվող կամ ներառված են օտարման խմբում: Փոփոխությունները ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

(է) Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են Բանկի և վերջինիս դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր կազմակերպություններն այն կազմակերպություններն են, որոնցում կատարվել են ներդրումներ, և որոնք վերահսկվում են Խմբի կողմից: Վերահսկողությունը ձեռք է բերվում, երբ Խումբը ստանում է փոփոխական հատույցների իրավունք կամ ռիսկին ենթարկվածություն՝ ներդրման օբյեկտում ներգրավվածության արդյունքում, ինչպես նաև ունի իր իշխանությունն օգտագործելու կարողություն՝ այդ հատույցների վրա ազդելու համար:

Մասնավորապես, Խումբը վերահսկողություն ունի միայն այն դեպքում, երբ.

- կարողություն ունի ուղղորդելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության որոշակի գործունեությունը, որը զգալի ներգործություն ունի հատույցների վրա,
- կրում է հատույցներ չստանալու ռիսկը կամ ստանում է փոփոխական հատույցներ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում իր մասնակցությունից, և
- հնարավորություն ունի օգտագործելու ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողությունը՝ ներդրողների հատույցների գումարի վրա ներգործություն ունենալու համար:

Երբ Խումբն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունում մեծամասնությունից քիչ քվեարկող բաժնետոմսեր կամ համանման այլ իրավունքներ, դիտարկում է բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ գնահատելիս, թե արդյոք այն ունի ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության վրա ազդեցություն ունենալու կարողություն, ներառյալ.

- ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպության քվեարկող բաժնետոմսերի այլ սեփականատերերի հետ պայմանագրային պայմանավորվածություն,
- այլ պայմանագրային պայմանավորվածություններից ծագող իրավունքներ,
- Խմբի քվեարկող բաժնետոմսեր և հնարավոր քվեարկող բաժնետոմսեր:

Խումբը վերագնահատում է, թե արդյոք այն վերահսկում է ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությանը, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ փոփոխություններ են տեղի ունեցել վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիսում: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է այն ժամանակ, երբ Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դուստր կազմակեր-

պության նկատմամբ, և դադարում է, երբ Խումբը կորցնում է վերահսկողությունը դուստր կազմակերպության նկատմամբ:

Խմբի ընկերությունների միջև գործարքները, մնացորդները և գործարքներից չիրացված շահույթը բացառվում են, չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ ծախսը չի կարող վերականգնվել: Բանկը և իր բոլոր դուստր կազմակերպությունները կիրառում են հաշվապահական հաշվառման միասնական քաղաքականություն՝ Խմբի քաղաքականությանը համահունչ:

Դուստր կազմակերպության սեփականության մասնաբաժնի փոփոխությունը, առանց վերահսկողության փոփոխության, հաշվառվում է որպես սեփական կապիտալի գործարք: Վնասները վերագրելի են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե դա հանգեցնում է բացասական մնացորդի:

Չվերահսկող բաժնեմասը դուստր կազմակերպության սեփական կապիտալի և զուտ արդյունքների այն մասն է, որը վերագրելի է այն բաժնեմասին, որի սեփականության իրավունքը ուղղակի կամ անուղղակի կերպով չի պատկանում Խմբին: Չվերահսկող բաժնեմասը կազմում է Խմբի սեփական կապիտալի առանձին բաղադրիչ:

Խումբը գնահատում է չվերահսկող բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ներկայիս սեփականության մասնաբաժինը և կրողին տալիս է զուտ ակտիվների նկատմամբ համամասնական իրավունք լուծարման դեպքում՝ յուրաքանչյուր առանձին գործառնության արժեքի սկզբունքով՝ հիմք ընդունելով ձեռք բերվող կազմակերպության զուտ ակտիվներում չվերահսկող բաժնեմասի համամասնությունը կամ իրական արժեքը:

Ասոցիացված կազմակերպություններ

Ասոցիացված կազմակերպություններն այն բիզնես միավորներն են, որոնց նկատմամբ Խումբն ունի էական ազդեցություն (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), սակայն չունի վերահսկողություն՝ տիրապետելով քվեարկող ձայների 20-ից 50 տոկոսին: Ասոցիացված կազմակերպություններում ներդրումները հաշվառվում են՝ կիրառելով հաշվառման բաժնեմասնակցության մեթոդը և սկզբնապես ճանաչվում են սկզբնական արժեքով: Ասոցիացված ընկերության հաշվեկշռային արժեքը ներառում է գնման պահին որոշված գուդվիլը՝ հանած կուտակված արժեզրկման կորուստները (եթե այդպիսիք կան): Ասոցիացված կազմակերպություններից ստացված շահաբաժինները նվազեցնում են ասոցիացված կազմակերպություններում ներդրման հաշվեկշռային արժեքը: Ձեռքբերումից հետո ասոցիացված կազմակերպության զուտ ակտիվներում Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են հետևյալ կերպ. (ա) ասոցիացված ընկերության շահույթում կամ վնասում Խմբի մասնաբաժինը ներառվում է տվյալ տարվա համախմբված շահույթ/վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպությունների արդյունքի մաս, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում Խմբի բաժնեմասը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ առանձին տողով, (գ) ասոցիացված ընկերության զուտ ակտիվների հաշվեկշռային արժեքի՝ Խմբի բաժնեմասին վերաբերող այլ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես ասոցիացված կազմակերպության արդյունքների մաս:

Սակայն երբ ասոցիացված կազմակերպության վնասներում Խմբի մասնաբաժինը հավասար է կամ գերազանցում է ասոցիացված կազմակերպությունում իր ունեցած բաժնեմասին, ներառյալ ցանկացած այլ չապահովված դեբիտորական պարտքեր, Խումբն այլևս չի ճանաչում հետագա վնասները, բացառությամբ այն դեպքերի, երբ ձեռք է բերել պարտավորություններ կամ կատարել է վճարումներ ասոցիացված կազմակերպության անունից:

(ը) Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով՝ գործարքի օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրու-

թյամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

Արտարժույթի փոխարկումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ/(վնաս): Տարեվերջի փոխարժեքով փոխարկում կատարելու սկզբունքը չի կիրառվում սկզբնական արժեքով գնահատվող ոչ դրամային հոդվածների նկատմամբ:

Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք չափվում են իրական արժեքով (ներառյալ՝ բաժնային ներդրումները), վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ Բանկի կողմից հրապարակված փոխարժեքի տարբերությունը ներառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները 2017 և 2016 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	484.10	483.94
ՀՀ դրամ/1 եվրո	580.10	512.20
ՀՀ դրամ/1 ՀՓԻ (Հատուկ փոխառության իրավունք)	689.42	650.58

(թ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները այն միավորներն են, որոնք ազատ փոխարկելի են նախապես հայտնի դրամական գումարների և ենթակա են արժեքի փոփոխության ոչ նշանակալի ռիսկի: Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը, բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները և ԱՄՀ-ում տեղաբաշխված ՀՓԻ միջոցները: Միջոցները, որոնց օգտագործումը սահմանափակվում է ձևավորման պահից երեք ամսից ավելի ժամանակահատվածով, չեն հանդիսանում դրամական միջոցներ և դրանց համարժեքներ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքով:

(ժ) Ֆինանսական գործիքներ – գնահատման հիմնական պայմաններ

Խումբը չափում է ֆինանսական գործիքները, ինչպիսիք են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները, վաճառքի համար մատչելի ակտիվները և ածանցյալ գործիքները, իրական արժեքով՝ յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքը բացահայտված է Ծանոթագրություն 29-ում:

Իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվը վաճառելիս կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ չափման ամսաթվի դրությամբ շուկայի մասնակիցների միջև կանոնավոր գործարքում: Իրական արժեքի լավագույն վկայությունը գործող շուկայում գինն է: Գործող շուկան այն շուկան է, որում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները տեղի են ունենում բավականաչափ հաճախականությամբ և ծավալով՝ շարունակական կերպով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Գործող շուկայում վաճառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատվում է որպես անհատական ակտիվի կամ պարտավորության գնանշված գնի և Խմբի կողմից պահվող քանակի արտադրյալ: Նշված սահմանումը գործում է նույնիսկ այն դեպքում, երբ շուկայում բնականոն օրական

վաճառքի ծավալը բավարար չէ պահվող ծավալը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու պատվերների տեղադրումը կարող է ազդեցություն ունենալ գնանշված գնի վրա: Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «անկախ կողմերի միջև գործարքների» կամ ներդրում ստացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են՝ որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ:

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի՝ հետևյալ կերպ. (ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, (բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, (գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտարկելի տվյալների վրա (գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումը այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին վճարված գումարները և կոմիսիոն վճարները, կարգավորման գործակալությունների կողմից և արժեթղթերի փոխանակումներից գանձումները, գույքի սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտքի պարգևավճարներն ու զեղչերը, ֆինանսավորման ծախսումները կամ ներքին կառավարչական կամ պահպանման ծախսումները:

Ամորտիզացված արժեքը այն գումարն է, որով ֆինանսական գործիքը չափվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած արժեզրկման վնասի գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և մինչև մարման գումարը ցանկացած պարգևավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ՝ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված զեղչը կամ պարգևավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք), առանձին չեն ներկայացվում, այլ ներառվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույքի):

Արդյունավետ տոկոսադրույքը այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ որոշակի դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա արժեզրկման կորուստները) զեղչում է ճշգրիտ՝ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը զեղչում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնահաշման ամսաթիվը, բացառությամբ այն պարգևավճարի կամ զեղչի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սպրեդը: Այդպիսի պարգևավճարները և զեղչերը ամորտիզացվում են գործիքի ակնկալվող գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկը

ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում:

Սկզբնական ճանաչում

Համաձայն ՀՀՄՍ 39-ի դրույթների՝ ֆինանսական ակտիվները դասակարգվում են համապատասխանաբար որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ, վաճառքի համար մատչելի ակտիվներ: Ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չճանաչվող ներդրումների պարագայում՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում կարող են վերադասակարգվել ստորև նշված դեպքերում:

Ճանաչման ամսաթիվ

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին է վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» դասում ներառվում են առևտրային նպատակով պահվող դասակարգված ֆինանսական գործիքները: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել կարճ ժամանակահատվածում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդյունավետ հեջավորման գործիքներ են: Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվներից եկամուտներն ու ծախսերը, ներառյալ՝ առևտրային պարտքային արժեթղթերի գծով տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ/(վնաս):

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում արտարժույթի փոխանակման և կապիտալի շուկաներում կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների՝ ներառյալ ֆյուչերսների, ֆորվարդների և սվոփերի տարատեսակ պայմանագրեր: Այդպիսի ֆինանսական գործիքները պահվում են առևտրային նպատակով և հաշվառվում են իրական արժեքով:

Իրական արժեքները գնահատվում են գնանշված շուկայական գների կամ գնային մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում հիմքում ընկած գործիքի ընթացիկ շուկայական և պայմանագրային գները կամ այլ գործոններ: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ, երբ իրական արժեքը դրական է, և որպես պարտավորություններ, երբ այն բացասական է: Տվյալ գործիքներից առաջացող օգուտներն ու վնասները ներառվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ կամ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ/(վնաս)՝ կախված գործիքի բնույթից:

Այլ ֆինանսական գործիքներում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով, եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը ուղղակիորեն կապված չեն դրանց հիմնական պայմանագրին, և հիմնական պայմանագիրը չի պահվում առևտրային նպատակով կամ նախատեսված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հիմնական պայմանագրերից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են առևտրային պայուսակում իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ

Հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ակտիվները, որոնք Խումբը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը, դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Խումբը մտադրված է պահել անորոշ ժամկետով, չեն ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով: Օգուտներն ու վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում, երբ ակտիվներն արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չեն անհապաղ կամ մոտ ապագայում վաճառքի համար և չեն դասակարգվում որպես առևտրային նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում միջոցներ, միջոցներ ԱՄՀ-ում, վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր, ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր: Այդպիսի ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու վնասները շահույթի կամ վնասի կազմում ճանաչվում են, երբ փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար պահվող, կամ որոնք դասակարգված չեն վերը թվարկված երեք կատեգորիաներում: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, ընդ որում՝ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ մինչև ակտիվների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է շահույթի կամ վնասի: Տոկոսները, որոնք հաշվարկվել էին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգում

Եթե ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվ, սակայն մոտ ժամանակաշրջանում վաճառելու մտադրություն չկա, ապա այն կարող է վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից հետևյալ իրավիճակներից մեկի դեպքում՝

- այն ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վերոնշյալ փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի դրանք պահելու մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը,
- առևտրային նպատակով պահվող այլ ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել որպես վաճառքի համար մատչելի կամ մինչև մարումը պահվող ֆինանսական ակտիվներ հազվադեպ հանգամանքներում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվը, փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը համապատասխանելու դեպքում, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի պահելու դրանք մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրենց իրական արժեքով՝ վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ցանկացած շահույթ կամ վնաս, որը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, չի հակադարձվում: Վերադասակարգման ամսաթվով ճանաչված ֆինանսական ակտիվի իրական արժեքը դառնում է դրա նոր ինքնարժեք կամ ամորտիզացված արժեք:

Ներգրավված փոխառու միջոցներ

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն՝ փոխանցելու դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդները և հաշիվների մնացորդները, պարտավորությունները Կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, այլ փոխառու միջոցները, թողարկված պարտատոմսերը:

Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Զրոյական տոկոսադրույքով վարկերի հաշվառում

Խմբի կողմից միջազգային ֆինանսական հաստատություններից զրոյական տոկոսադրույքով ստացված միջոցների օգուտը դիտարկվում և հաշվառվում է որպես պետական շնորհ: Զրոյական տոկոսադրույքով օգուտը չափվում է որպես ստացված միջոցների իրական արժեքի և միջոցների սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ ստացված և որպես հետաձգված եկամուտ ճանաչված մուտքերի միջև տարբերություն: Հետաձգված եկամտի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում Խումբը՝ որպես ծախս է ճանաչում համապատասխան ծախսումները: Կատարվում է շնորհին վերաբերող եկամտի չափով նվազեցում՝ համապատասխան ծախսը ներկայացնելիս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է.
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև
- Խումբը կամ ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Խմբի շարունակվող մասնակցության չափով: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված և/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված ակտիվի գծով թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ Խմբի շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում, չեղարկվում կամ դադարում է:

Եթե փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքը փոխարինվում է մեկ այլ պարտքային գործիքով, որի պայմաններն էականորեն տարբերվում են, կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, այդպիսի փոխարինումը կամ փոփոխությունը հանգեցնում է այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

(ժա) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Հաշվանցման այդպիսի իրավունքը ա) չպետք է պայմանավորված լինի ապագա իրադարձությամբ և բ) պետք է իրավաբանորեն կիրառելի լինի հետևյալ բոլոր հանգամանքներում. (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) դեֆոլտի դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

(ժբ) Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով (ռեպո) վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ:

Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է հետգնման պայմանագրի գործողության ընթացքում:

Հետգնման պայմանագրերի ներքո (հակադարձ ռեպո պայմանագրեր) արժեթղթերի ձեռքբերման համար վճարված միջոցները գրանցվում են որպես բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ: Վաճառքի և հետգնման գնի միջև տարբերությունը՝ ճշտված տոկոսադրույքով և գործընկերոջ կողմից ստացվող շահաբաժնի եկամտով, դիտարկվում է որպես տոկոսային եկամուտ և հաշվեգրվում ռեպո պայմանագրերի ողջ գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(ժգ) Փոխառության տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակվում են հաշվառվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են շահույթում

կամ վնասում՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով հաշվառվող ֆինանսական գործիքներից զուտ շահույթի կազմում: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող պարտավորություններում:

(ժդ) Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(ժե) Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Դրամագիտական արժեքների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված վաճառքից մուտքերի գումարը ճանաչվում է որպես եկամուտ ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, իսկ հաշվեկշռային արժեքի գումարը ճանաչվում է որպես ծախս ընթացիկ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

(ժզ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշները: Նմանապես՝ խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը որպես առանձին ակտիվներ՝ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և, համապատասխանաբար, հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները շահույթում կամ վնասում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում են օտարման դեպքում, և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Մաշվածություն

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի օգտագործման համար մատչելի դառնալու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության հետևյալ ժամկետների ընթացքում.

Հող և շենքեր	2017 թ.	2016 թ.
– Շենքեր	30 - 80 տարի	30 - 80 տարի
– Շենքերի սպասարկման համակարգեր	3 - 20 տարի	3 - 20 տարի
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	2 - 15 տարի	2 - 15 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի	5 տարի

Ակտիվի մնացորդային արժեքը ակտիվի այն մոտավոր գումարն է, որը Խումբը ներկայումս կստանար ակտիվի օտարումից՝ հանած ակտիվի օտարման գնահատված ծախսերը, եթե ակտիվը արդեն լիներ իր օգտակար ծառայության վերջին սպասվող տարիքին և պայմաններում: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

(ժէ) Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ

Ոչ ընթացիկ ակտիվները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության մեջ դասակարգվում են որպես «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ», եթե դրանց հաշվեկշռային արժեքը փոխհատուցվելու է հիմնականում վաճառքի գործարքի միջոցով՝ հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում: Ակտիվը «վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ» դասակարգվելու համար պետք է բավարարի հետևյալ բոլոր պայմանները. ա) ակտիվը իր ներկա վիճակում պետք է պատրաստ (մատչելի) լինի անմիջապես վաճառքի համար, բ) Խմբի ղեկավարությունը պետք է ձեռնարկի գնորդ գտնելու և վաճառքի պլանը կատարելու ակտիվ ծրագիր, գ) ակտիվը ողջամիտ գնով պետք է ակտիվորեն առաջարկվի շուկայում, դ) պետք է ակնկալվի, որ մեկ տարվա ընթացքում վաճառքը կբավարարի որպես ավարտվող վաճառք ճանաչվելու պայմանները, ե) պլանն ավարտին հասցնելու համար անհրաժեշտ գործողությունները պետք է ցուցանշեն, որ պլանում նշանակալի փոփոխությունների կատարումը կամ պլանի դադարեցումը հավանական չէ: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվները չափվում են իրենց հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի ու վաճառքի գծով ծախսումների տարբերությունից նվազագույնով: Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվների համար մաշվածություն չի հաշվարկվում:

(ժը) Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռք բերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ճանաչումից ու արժեզրկումից կուտակված վնասները: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1 - 7 տարի, և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշներ:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման պահին:

(ժթ) Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ. Խումբը՝ որպես վարձակալ

Ակտիվի այն վարձակալությունը, որով չի նախատեսվում վարձատուից Խմբին ակտիվի սեփականության հետ կապված գործնականորեն բոլոր ռիսկերի և հատույցների փոխանցում, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության վճարները ճանաչվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում՝ որպես այլ գործառնական ծախսեր:

(h) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խումբը իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում է արժեզրկված միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ՝ որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք հարաբերակցվում են վճարման պարտավորությունների խախտումների հետ:

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

Ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված այն միջոցների համար, որոնց հաշվառումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից՝ էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրեր ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական հիմունքով, և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ դեռևս չկրած ապագա արժեզրկման կորուստների) ներկա արժեքի տարբերությունը: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ: Տոկոսային եկամուտը հաշվեգրվում է ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցները, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն իրացվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ որպես եկամուտ:

Հնարավոր ապագա դրամական հոսքերի բերված արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե ֆինանսական գործիքը տրամադրված է լողացող տոկոսադրույքով, ապա արժեզրկումից վնասների չափման նպատակով զեղչման դրույքաչափը կլինի ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը: Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա

հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի ձեռքբերման և օտարման ծախսումներով՝ անկախ իրացման հավանականությունից:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ բացառելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխությունները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շուկաներում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ՝ գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և ենթադրությունները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները Խումբը գնահատում է անհատականորեն, եթե առկա են արժեզրկման հայտանիշներ: Եթե արժեզրկման հետևանքով վնասի առկայության օբյեկտիվ հայտանիշներ կան, վնասի արժեքը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և հետագայում ակնկալվող դրամական հոսքերի ներկա բերված արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը պակասեցվում է, և վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Եթե որևէ տարվա ընթացքում արժեզրկումից ակնկալվող վնասի գումարը նվազում է արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով, նախկինում հաշվառված գումարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես եկամուտ:

Վաճառքի համար մատչելի ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է վաճառքի համար մատչելի ակտիվների կամ ներդրումների, կամ դրանց խմբի արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշների առկայությունը:

Վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային ներդրումների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշներից է ներդրման իրական արժեքի նշանակալի կամ էական նվազումը սկզբնական արժեքից: Երբ կա արժեզրկման հայտանիշ, կուտակված վնասը, որը գնահատվում է որպես ձեռքբերման գնի և ներկա իրական արժեքի միջև տարբերություն՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված՝ այդ ներդրման գծով արժեզրկման կորուստները, վերադասակարգվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներից շահույթի կամ վնասի կազմ: Բաժնային ներդրումների արժեզրկման գծով վնասները չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով. դրանց իրական արժեքի ավելացումները արժեզրկումից հետո ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների առկայության գնահատումը իրականացվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նման: Ապագա տոկոսային եկամուտը հաշվեգրվում է՝ օգտագործելով այն դրույքաչափը, որն արժեզրկման վնասներն արտացոլելու նպատակով կիրառվել է ապագա դրամական հոսքերի զեղչման ժամանակ:

Տոկոսային եկամուտը արտացոլվում է շահույթում կամ վնասում: Եթե հաջորդող տարվա ընթացքում պարտքային գործիքի իրական արժեքն աճում է այնպիսի իրադարձությունների պատճառով, որոնք տեղի են ունեցել արժեզրկման գծով վնասները շահույթում կամ վնասում ճանաչվելուց հետո, ապա նախկինում արժեզրկման գծով ծախսը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է՝ արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ, կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը:

Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված, և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(իա) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք, իսկ պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

(իբ) Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ, Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Խմբի դուստր կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր ու տուրքեր:

(իգ) Թողարկված կապիտալ

Թողարկված կապիտալը Բանկի կանոնադրական կապիտալն է, որը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, բռնագանձվել կամ որևէ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Համաձայն Օրենքի 11.4 հոդվածի՝ Խմբի վնասը պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում Կառավարության կողմից տրամադրվող անտոկոս հասարակ մուրհակը ճանաչվում է որպես Կառավարության կողմից թողարկված մուրհակ Խմբի կապիտալում:

(իդ) Շահույթի բաշխում

Խմբի շահույթը, որը որոշվում է վերջինիս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հրապարակումից հետո, բաշխվում է հետևյալ կերպ.

- շահույթի 20%-ն ուղղվում է գլխավոր պահուստի համալրմանը՝ մինչև դրա ընդհանուր չափը կազմի առկա դրամական զանգվածի 25%-ը,
- մասհանումներ պետք է կատարվեն Կառավարության կողմից նախկինում Բանկին տրամադրված մուրհակի մարման ծախսերը ծածկելու նպատակով:

Նշված մասհանումները կատարելուց հետո Խմբի ստացված շահույթի մնացորդը փոխանցվում է պետական բյուջե:

Պետական բյուջե վճարման ենթակա Խմբի շահույթի հաշվարկի մեջ չի ընդգրկվում ոսկու, հատուկ փոխառության իրավունքների, արտարժույթների և դրանցով արտահայտված արժեքների վերագնահատումից և ձեռքբերումից առաջացած եկամուտների և ծախսերի դրական տարբերությունը՝ ճշգրտված նախորդ ժամանակաշրջանների բացասական արդյունքների հատուցմանն ուղղված գումարների չափով:

2016 թվականին Խումբը վերանայել է շահույթի բաշխման ներկայացման վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ առավել պատշաճ ներկայացում ապահովելու նպատակով: Խումբը ներկայացնում է Կառավարության՝ նախկինում թողարկված մուրհակի մարման գծով մասհանումները՝ որպես բաշխում «Կառավարության կողմից թողարկված մուրհակ» հաշվից (նախկինում՝ «Կուտակված վնաս» հաշվից):

(իե) Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված միջոցների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, սակայն բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

(իզ) Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Բոլոր այն ֆինանսական գործիքների համար, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով, և բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, տոկոսային եկամուտն ու ծախսը հաշվառվում են արդյունավետ տոկոսադրույքով, որի միջոցով ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին: Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և կոմիսիոն կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինան-

սական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի ճանաչված արժեքը նվազել է արժեզրկման կորուստների արդյունքում, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել՝ օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ կիրառելով նոր հաշվեկշռային արժեքը:

(իէ) Միջնորդավճարների գծով եկամուտ

Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակած միջնորդավճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման նոր հրապարակումներ

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ հրապարակվել են, սակայն դեռևս ուժի մեջ չեն որոշակի նոր ստանդարտներ, գոյություն ունեցող ստանդարտների փոփոխություններ կամ մեկնաբանություններ: Խումբը վաղաժամկետ չի ընդունել նոր ստանդարտները:

Ղեկավարությունն ակնկալում է, որ բոլոր հրապարակված ստանդարտներն ու փոփոխությունները կներառվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ՝ սկսած դրանց ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո սկսվող առաջին ժամանակաշրջանից: Ստորև ներկայացված է տեղեկատվություն նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ, որոնք, ըստ ղեկավարության գնահատման, կիրառելի են Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ: Մի շարք այլ ստանդարտներ և մեկնաբանություններ են հրապարակվել, որոնք էական ազդեցություն չունեն Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» (փոփոխվել է 2014 թվականի մայիսին և ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար)

2014 թ. հուլիսին ՀՀՄՍԽ-ն թողարկեց ՖՀՄՍ 9 «*Ֆինանսական գործիքներ*» ստանդարտը, որը փոխարինում է ՀՀՄՍ 39 ստանդարտին՝ «*Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը*»: Ստանդարտը ներկայացնում է դասակարգման, չափման, ինչպես նաև արժեզրկման և հեջավորման հաշվառման նոր պահանջներ: ՖՀՄՍ 9-ը ուժի մեջ է մտնում 2018 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Բացի հեջավորման հաշվառումից, հետընթաց կիրառումը պահանջվում է, սակայն համադրելի տեղեկատվության վերահաշվարկը պարտադիր չէ: Խումբը նախատեսում է կիրառել նոր ստանդարտը՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը հաշվետու տարվա սկզբի չբաշխված շահույթում և առանց համեմատական տեղեկատվությունը վերահաշվարկելու: Խումբը գտնվում է ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը գնահատելու գործընթացում, սակայն այդ ազդեցության որևէ ողջամիտ գնահատում դեռևս առկա չէ:

(ա) Դասակարգում և չափում

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ բոլոր պարտքային ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին (ԲՀԳՏՎ), սկզբնական

ճանաչման ժամանակ դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Այս չափանիշի համաձայն՝ պարտքային գործիքները, որոնք չեն համապատասխանում «վարկավորման հիմնական պայմաններին», ինչպիսիք են պարունակվող փոխարկման օպցիոնով գործիքները կամ «ոչ վերադարձնելի» վարկերը, գնահատվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: ԲՀԳՏՎ չափանիշին համապատասխանող պարտքային ֆինանսական ակտիվների համար սկզբնական ճանաչման ժամանակ դասակարգումը որոշվում է բիզնես մոդելի հիման վրա, որի համաձայն այդ գործիքները կառավարվում են.

- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու նպատակով, չափվում են ամորտիզացված արժեքով,
- գործիքները, որոնք պահվում են պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը ստանալու և վաճառքի նպատակով, չափվում են իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով,
- այլ նպատակով պահվող գործիքները, ներառյալ առևտրային ֆինանսական ակտիվները, չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Սկզբնական ճանաչման ժամանակ բաժնային ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն դեպքերի, երբ որոշում է կայացվել, առանց հետագայում վերադասակարգման իրավունքի, դրանք դասակարգել որպես իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող: Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բաժնային գործիքներից ողջ իրացված և չիրացված շահույթն ու վնասը, բացառությամբ շահաբաժինների, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում, առանց շահույթում կամ վնասում հետագա վերադասակարգման:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը հիմնականում մնում են անփոփոխ ՀՀՄՍ 39-ի պահանջների համեմատ: Ածանցյալ գործիքները կշարունակեն չափվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Խումբը ակնկալում է շարունակել իրական արժեքով չափվող բոլոր ընթացիկ ֆինանսական ակտիվների չափումը իրական արժեքով: Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքները, որոնց գծով շահույթն ու վնասը արտացոլվում են այլ համապարփակ եկամտի կազմում, կշարունակվեն չափվել իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով:

Առևտրային պարտքային և բաժնային արժեթղթերը շարունակելու են դասակարգվել որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ակնկալվում է, որ պարտքային արժեթղթերը, որոնք ներկայումս դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, ՖՀՄՍ 9-ով կչափվեն իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով, քանի որ Խումբն ակնկալում է ոչ միայն պահել այդ ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու համար, այլ նաև համեմատաբար հաճախակի իրականացնել էական գումարով վաճառքներ: Ակնկալվում է, որ մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթերը կվերադասակարգվեն որպես առևտրային նպատակով պահվող և կչափվեն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ Խումբը մտադիր է վերանայել իր ներդրումային քաղաքականությունը և իրականացնել նախկինում մինչև մարման ժամկետը պահվող դասակարգված արժեթղթերի ակտիվ կառավարում: Ակնկալվում է, որ վարկերի գերակշիռ մասը պետք է բավարարի «բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման» չափանիշին և կշարունակի չափվել ամորտիզացված արժեքով:

(բ) Արժեզրկում

ՖՀՄՍ 9-ը Խմբից պահանջում է ճանաչել պահուստ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող բոլոր պարտքային ֆինանսական ակտիվների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և երաշխիքների գծով ակնկալվող վարկային կորուստ-

ների (ԱՎԿ) համար: Պահուստը որոշվում է ԱՎԿ-ի հիման վրա, որը կապված է հաջորդ 12 ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականության հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել վարկային ռիսկի նշանակալի աճ: Այդ դեպքում պահուստը հիմնված է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացում ԱՎԿ-ի վրա: Եթե ֆինանսական ակտիվը համապատասխանում է գնված կամ ստեղծված արժեզրկված ֆինանսական ակտիվի սահմանմանը, ապա պահուստը հաշվարկվում է ակտիվի ամբողջ ժամկետի ընթացում ԱՎԿ-ի փոփոխության հիման վրա:

ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» (հրապարակվել է 2014 թվականի մայիսին և ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար)

ՖՀՄՍ 15-ը հրապարակվել է 2014 թ. մայիսին և փոփոխվել 2016 թ. ապրիլին: Այն կփոխարինի հասույթի ճանաչման ՖՀՄՍ-ների ներկայիս բոլոր պահանջներին: 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար պահանջվում է լիարժեք հետընթաց կիրառություն կամ փոփոխված հետընթաց կիրառություն: Խումբը նախատեսում է ընդունել նոր ստանդարտը՝ փոփոխված հետընթաց կիրառման եղանակով՝ ճանաչելով անցման կուտակային ազդեցությունը տարեսկզբի չբաշխված շահույթում 2018 թվականի հունվարի 1-ին՝ առանց վերահաշվարկելու համեմատական տեղեկատվությունը:

ՖՀՄՍ 15-ը սահմանում է հինգ քայլերի մոդել՝ հաճախորդների հետ պայմանագրերից հասույթի հաշվառման համար: ՖՀՄՍ 15-ի համաձայն՝ հասույթը պետք է ճանաչվի փոխհատուցման գումարի չափով, որի նկատմամբ ընկերությունն ակնկալում է ստանալ իրավունք՝ հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց: Սակայն տոկոսային եկամուտները և միջնորդավճարները, որոնք ֆինանսական գործիքների և վարձակալության անբաժան մաս են կազմում, կշարունակեն գտնվել ՖՀՄՍ 15-ի շրջանակներից դուրս և կկարգավորվեն այլ կիրառելի ստանդարտներով (օր.՝ ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 16՝ «*Վարձակալություն*»): Արդյունքում նոր ստանդարտի ընդունումը ազդեցություն չի ունենա Խմբի հասույթի մեծ մասի վրա:

Խումբը ներկայումս չի ակնկալում էական ազդեցություն ՖՀՄՍ 15-ի ընդունման գծով:

Փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում՝ «Ներդրողի և նրա հետ ասոցիացված ընկերության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ ներդրում»

Փոփոխությունները վերաբերում են ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի միջև հակասություններին՝ կապված դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողության կորստի հետ, որը վաճառվում կամ ներդրվում է ասոցիացված ընկերությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ: Փոփոխությունները հստակեցնում են, որ ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև, ՖՀՄՍ 3-ի բնորոշման համաձայն, ձեռնարկատիրական գործունեություն հանդիսացող ակտիվների վաճառքի կամ ներդրման արդյունքում առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ: Այնուամենայնիվ, ձեռնարկատիրական գործունեություն չհանդիսացող ակտիվների վաճառքից կամ ներդրումից ստացված ցանկացած շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ չփոխկապակցված ներդրողների բաժնեմասի չափով: ՀՀՄՍԽ-ն հետաձգել է այս փոփոխություններն ուժի մեջ մտնելու ժամկետը անորոշ ժամանակով, սակայն փոփոխությունները վաղաժամկետ ընդունողները դրանք պետք է կիրառեն առաջընթաց կերպով: Խումբը ներկայումս չի ակնկալում էական ազդեցություն փոփոխությունների ընդունման հետևանքով:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» (հրապարակվել է 2016 թվականի հունվարին և ուժի մեջ է մտնելու 2019 թվականի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար)

ՖՀՄՍ 16-ը հրապարակվել է 2016 թ. հունվարին և փոխարինում է ՀՀՄՍ 17-ին՝ «*Վարձակալություն*», ՖՀՄՄԿ 4-ին՝ «*Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում*», ՄՄԿ 15-ին՝ «*Գործառ-*

նական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ 27-ին՝ «*Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը*»: ՖՀՄՍ 16-ը սահմանում է վարձակալության ճանաչման, չափման, ներկայացման և բացահայտման սկզբունքները և պահանջում է վարձակալներին հաշվառել բոլոր վարձակալությունները հաշվեկշռային միասնական մոդելի հիման վրա՝ ՀՀՄՍ 17-ի ֆինանսական վարձակալության հաշվառման նման: Ստանդարտը ներառում է վարձակալության ճանաչման երկու բացառություն՝ ցածրարժեք ակտիվների վարձակալություններ և կարճաժամկետ վարձակալություններ (այսինքն՝ 12 ամիս կամ պակաս ժամկետով վարձակալություններ): Վարձակալության ժամկետի մեկնարկի ամսաթվի դրությամբ վարձակալը պետք է ճանաչի պարտավորություն՝ վարձակալության վճարումները կատարելու համար (այսինքն՝ վարձակալության պարտավորություն) և ակտիվ, որը ներկայացնում է վարձակալության ժամկետի ընթացքում ակտիվի օգտագործման իրավունքը (այսինքն ակտիվը՝ օգտագործման իրավունքի ձևով): Վարձակալները պետք է առանձին ճանաչեն վարձակալության պարտավորության գծով տոկոսային ծախսերը և օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ամորտիզացիայի գծով ծախսերը:

Վարձակալներից նաև կպահանջվի վերագնահատել վարձակալության գծով պարտավորությունները որոշակի իրադարձությունների տեղի ունենալու դեպքում (օրինակ՝ վարձակալության ժամկետի փոփոխություն, ապագա վարձակալության վճարների փոփոխություն, որը պայմանավորված է այդ վճարումների որոշման համար օգտագործվող ինդեքսի կամ փոխարժեքի փոփոխությունով): Դեպքերի մեծ մասում վարձակալը պետք է ճանաչի վարձակալության պարտավորության վերագնահատումը որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ճշգրտում:

ՖՀՄՍ 16-ով վարձատուների կողմից հաշվառումը զգալիորեն չի փոխվել ներկայիս ՀՀՄՍ 17-ի համեմատությամբ: Վարձատուները կշարունակեն դասակարգել բոլոր վարձակալությունները՝ օգտագործելով ՀՀՄՍ 17-ի դասակարգման սկզբունքները և առանձնացնելով վարձակալության երկու տեսակ՝ գործառնական և ֆինանսական վարձակալություններ:

ՖՀՄՍ 16-ը նաև պահանջում է վարձակալներին և վարձատուներին բացահայտել ավելի շատ տեղեկատվություն, քան ՀՀՄՍ 17-ը:

ՖՀՄՍ 16-ը ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է, բայց ոչ նախքան կազմակերպությունը կսկսի կիրառել ՖՀՄՍ 15-ը: Վարձակալը կարող է կիրառել ստանդարտը ամբողջական հետընթաց կամ փոփոխված հետընթաց մոտեցմամբ:

2018 թ. Խումբը կշարունակի գնահատել ՖՀՄՍ 16-ի հնարավոր ազդեցությունը իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Տարեկան բարեփոխումներ՝ 2014 – 2016 թթ. ժամանակաշրջան (թողարկված 2016 թվականի դեկտեմբերին)

Այս բարեփոխումները ներառում են.

ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»՝ պարզաբանումն առ այն, որ ներդրման օբյեկտն իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափելու ընտրությունը պետք է կատարվի ներդրում առ ներդրում:

Փոփոխությունները հստակեցնում են, որ.

- Կազմակերպությունը, որը վենչուրային կապիտալով կազմակերպություն է կամ այլ նմանատիպ կազմակերպություն, սկզբնական ճանաչման պահին կարող է որոշում կայացնել՝ իր ներդրումները ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկման մեջ չափելու իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

- Երբ ներդրումային կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունը ունի բաժնեմաս ասոցիացված կազմակերպությունում կամ համատեղ ձեռնարկման մեջ, որը ներդրումային կազմակերպություն է, կարող է բաժնեմասնակցության մեթոդը կիրառելիս պահպանել այդ ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման կողմից իր ասոցիացված կազմակերպության, կամ համատեղ ձեռնարկման՝ դուստր ձեռնարկություններում բաժնեմասի նկատմամբ կիրառված իրական արժեքի չափումը: Այս ընտրությունը կատարվում է յուրաքանչյուր ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման համար առանձին, հետևյալ երկու ամսաթվերից ավելի ուշ ամսաթվին. ա) երբ ներդումային կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը սկզբնապես ճանաչվել է, բ) երբ ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը դարձել է ներդրումային կազմակերպություն, գ) երբ ներդրումային կազմակերպություն հանդիսացող ասոցիացված կազմակերպությունը կամ համատեղ ձեռնարկումը առաջին անգամ դարձել է մայր կազմակերպություն:

Փոփոխությունները պետք է կիրառվեն հետընթաց կարգով և ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ից: Խումբը չի ակնկալում էական ազդեցություն այս փոփոխությունների կիրառումից:

ՖՀՄՄԿ մեկնաբանություն 22՝ «Արտարժույթով գործարքներ և կանխավճարված փոխհատուցում»

Մեկնաբանությունը հստակեցնում է, որ ոչ դրամային ակտիվի և ոչ դրամային պարտավորության ապաճանաչման ժամանակ կանխավճարի ստացման կամ փոխանցման արդյունքում առաջացող համապատասխան ակտիվի, ծախսերի և եկամուտների (կամ դրանց մի մասի) սկզբնական ճանաչման համար օգտագործվող սփոթ փոխարժեքը որոշելիս գործարքի ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կազմակերպությունը սկզբնապես ճանաչում է կանխավճարված փոխհատուցումից առաջացող ոչ դրամային ակտիվը կամ ոչ դրամային պարտավորությունը: Մեկնաբանությունը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանի համար: Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է մեկնաբանությանը, Խումբը չի ակնկալում էական ազդեցություն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՖՀՄՄԿ մեկնաբանություն 23՝ «Անորոշություն շահութահարկի հաշվարկման կանոնների վերաբերյալ»

Մեկնաբանությունը վերաբերում է շահութահարկի հաշվառմանը, երբ հարկի հաշվարկը պարունակում է անորոշություն, որն ազդում է ՀՀՄՍ 12-ի կիրառման վրա: Մեկնաբանությունը չի կիրառվում ՀՀՄՍ 12-ի շրջանակից դուրս հարկերի կամ հավաքագրումների վրա, ինչպես նաև չի պարունակում կոնկրետ պահանջներ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ կապված տոկոսների և տույժերի վերաբերյալ:

Կազմակերպությունը պետք է որոշի՝ արդյոք յուրաքանչյուր անորոշ հարկային մեկնաբանություն պետք է դիտարկել առանձին, թե մեկ կամ մի քանի այլ անորոշ հարկային մեկնաբանությունների հետ միասին: Պետք է կիրառել այն մոտեցումը, որն ավելի լավ է կանխատեսում անորոշության հստակեցման արդյունքը: Մեկնաբանությունը նաև վերաբերում է հարկային մարմինների կողմից կատարված հարկային մեկնաբանությունների դիտարկումներին վերաբերող ենթադրություններին, որոնք արվում են կազմակերպության կողմից, ինչպես նաև այն հանգամանքին, թե ինչպես է կազմակերպությունը դիտարկում փաստերի և հանգամանքների փոփոխությունները:

Մեկնաբանությունն ուժի մեջ է մտնելու 2019 թվականի հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար, սակայն գոյություն ունեն որոշակի անցումային պարզեցումներ: Խումբը կսկսի կիրառել մեկնաբանությունը գործողության մեջ մտնելու օրվանից: Քանի որ Խումբը գործում է բարդ հարկային միջավայրում, մեկնաբանության կիրառումը կարող է ազդել նրա համա-

խմբված ֆինանսական հաշվետվությունների և պահանջվող ծանոթագրությունների վրա: Բացի այդ, Խմբին կարող է անհրաժեշտ լինել մշակել գործընթացներ և ընթացակարգեր տեղեկատվություն ստանալու համար, որն անհրաժեշտ է մեկնաբանությունը ժամանակին կիրառելու համար:

Տարեկան բարեփոխումներ՝ 2015-2017 թթ. ժամանակաշրջան (թողարկված 2017 թվականի դեկտեմբերին)

Այս բարեփոխումները կիրառելի են 2019 թվականի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և ներառում են.

ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ» և ՖՀՄՍ 11 «Համատեղ պայմանավորվածություններ». համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցություն

Այս փոփոխությունները պարզաբանում են, թե արդյոք համատեղ գործունեությունում նախկինում ունեցած մասնակցությունը (որը, համաձայն ՖՀՄՍ 3-ի, ձեռնարկատիրական գործունեություն է) պետք է վերաչափվի իրական արժեքով, երբ.

- Համատեղ գործունեության մի կողմը վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ (ՖՀՄՍ 3),
- Մասնակցող կողմերից մեկը (որը, սակայն, համատեղ գործունեությունում վերահսկողություն չունի) վերահսկողություն է ստանում համատեղ գործունեության նկատմամբ (ՖՀՄՍ 11):

Խումբը չի ակնկալում որևէ ազդեցություն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 12 «Շահութահարկ». որպես կապիտալ դասակարգված ֆինանսական ակտիվների գծով վճարումների հետևանքները շահութահարկի վրա

Այս փոփոխությունները պարզաբանում են, որ կազմակերպությունը պետք է ճանաչի շահաբաժինների շահութահարկային բոլոր հետևանքները շահույթում կամ վնասում, այլ համապարփակ եկամտում կամ կապիտալում, կախված այն հանգամանքից, թե որտեղ է ճանաչել շահաբաժնի վճարման համար հիմք հանդիսացող բաշխման ենթակա շահույթը սկզբնավորող գործարքը կամ իրադարձությունը: Վաղաժամկետ կիրառումը թույլատրվում է և պետք է բացահայտվի: Փոփոխությունը պետք է նախ կիրառվի առավել վաղ համադրելի ամսաթվին կամ այդ ամսաթվից հետո ճանաչված շահաբաժինների շահութահարկի հետևանքների համար: Քանի որ Խմբի ընթացիկ մոտեցումը համապատասխանում է փոփոխությանը, Խումբը չի ակնկալում էական ազդեցություն իր համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Նոստրո հաշիվներ	1,417,593	461,374
ժամկետային ավանդներ	574,152	264,119
Մինչև մարումը պահվող ակտիվներ	136,788	294,654
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	12,775	2,394
Այլ	211,466	10,843
Ընդամենը տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով	**2,352,774**	**1,033,384**
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ	20,059,693	21,314,286
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	2,398,426	2,348,798
Ընդամենը տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով	**22,458,119**	**23,663,084**
Ընդամենը տոկոսային եկամուտ	**24,810,893**	**24,696,468**

5. Տոկոսային ծախս

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Այլ փոխառություններ	2,960,515	2,074,742
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	2,200,430	1,270,377
Ընդամենը տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**5,160,945**	**3,345,119**
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ (Ծնթգ. 27)	6,397,728	5,431,734
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	1,574,393	846,537
Թողարկված պարտատոմսեր	759,625	511,061
Այլ	107,791	94,878
Ընդամենը տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով	**8,839,537**	**6,884,210**
Ընդամենը տոկոսային ծախս	**14,000,482**	**10,229,329**

6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Զուտ օգուտ /(վնաս) արտարժույթի վերագնահատումից	5,100,923	(2,883,382)
Զուտ օգուտ սփոթ գործարքներից	421,335	235,859
Ընդամենը զուտ օգուտ / (վնաս) փոխարժեքային տարբերություններից	**5,522,258**	**(2,647,523)**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ օգուտի / (վնասի) կազմում ներառված է 12,373,119 հազար ՀՀ դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2016 թ.՝ 1,874,640 հազար ՀՀ դրամի զուտ վնաս):

7. Զուտ (վնաս) /օգուտ ածանցյալ գործիքներից

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Զուտ (վնաս)/օգուտ Կառավարության հետ կնքված ֆորվարդ պայմանագրից (Ծնթգ. 27)	(473,190)	547,349
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո ֆյուչերսային պայմանագրերի գծով	53,498	90,294
Ընդամենը զուտ (վնաս)/ օգուտ ածանցյալ գործիքներից	**(419,692)**	**637,643**

2007 թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն՝ Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

8. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	5,941,381	3,684,946
Զուտ (վնաս)/օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	(482,757)	522,643
Զուտ օգուտ ՀՀ պետական արժեթղթերից	-	292,002
Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	3,547	-
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացառությամբ արտարժույթի վերագնահատման*)	(179,562)	(178,377)
Ընդամենը զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից	**5,282,609**	**4,321,214**

** Վերը նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ օգուտ / (վնաս) փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (Ծնթգ. 6):*

9. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Ֆինանսական գործակալության վճար	599,952	898,319
Դրամագիտական արժեքներ	599,790	495,206
Այլ	2,652,519	2,182,491
Ընդամենը այլ եկամուտ	**3,852,261**	**3,576,016**

Ֆինանսական գործակալության վճարն իրենից ներկայացնում է Բանկի՝ որպես Կառավարության գործակալի կողմից ստացված վճար՝ գործակալության պայմանագրերի համաձայն: Հիմք ընդունելով գործակալության պայմանագրերի դրույթները՝ Բանկը վարկեր է տրամադրում առևտրային բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին:

2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում «Այլ» տողում ներառված է 2,006,683 հազար ՀՀ դրամ գումարը, որը ներկայացնում է Բանկի երկու դուստր կազմակերպությունների հասույթը, որոնք տրամադրում են կանխիկի հավաքագրման և պլաստիկ քարտերով վճարումների ծառայություններ (2016 թ.՝ 1,876,354 հազար ՀՀ դրամ):

10. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Տարվա ընթացքում վաճառված դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր	567,773	466,148
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	2,713	300
Ընդամենը թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր	**570,486**	**466,448**

11. Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	8,406,039	8,743,184
Մաշվածություն և ամորտիզացիա	4,699,999	4,943,278
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	1,927,505	1,862,214
Վճարահաշվարկային համակարգի զարգացման և սպասարկման ծախսեր	617,656	482,651
Անվտանգության և ապահովագրական ծախսեր	436,928	443,721
Կրթություն, հետազոտություն և նոր ծրագրերի մշակում	364,362	1,315,819
Բազելյան կոմիտեի պահանջների իրագործման ծախսեր	266,969	321,570
Մասնագիտական ծառայություններ	226,870	353,809
Այլ	3,526,766	2,538,312
Ընդամենը այլ ծախսեր	**20,473,094**	**21,004,558**

2017 թ. դեկտեմբերի 31-ին և 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընթացքում «Այլ» տողում ներառված ծախսերը ներկայացնում են բաժանորդագրության վճարներ, ինչպես նաև ներկայացուցչական, տպագրման, կապի ապահովման, կոմունալ, վարձակալության և գրասենյակային ծախսեր:

2017 թ. դեկտեմբերի 31-ին և 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար աշխատակիցների հատուցումների, վերապատրաստման ծախսերի և հարակից վճարների, մաշվածության և ամորտիզացիայի ու վերանորոգման և սպասարկման ծախսերի գումարները նաև ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների համապատասխան ծախսերի գումարները:

12. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
Նոստրո հաշիվներ	287,195,009	391,056,963
Ժամկետային ավանդներ	33,603,980	29,028,319
Հետգնման պայմանագրեր	14,533,961	-
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	3,118,396	2,914,810
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	**338,451,346**	**423,000,092**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում արտարժույթով տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ մեկ բանկում, որի մնացորդը գերազանցում էր բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 141,697,750 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ մեկ բանկում մնացորդի ընդհանուր գումարը կազմում էր 265,089,384 հազար ՀՀ դրամ):

Ժամկետային ավանդներն ունեն մինչև 2 ամիս մարման ժամկետ և 0.57%-ից մինչև 1.80% տոկոսադրույք (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 0.28%-ից մինչև 1.02% տոկոսադրույք):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցների 3,118,396 հազար ՀՀ դրամի մնացորդը (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,914,810 հազար ՀՀ դրամի մնացորդը) իրենից ներկայացնում է ներդրումային կառավարման պայմանագրի շրջանակում Բանկի կողմից արտերկրյա արժեթղթերով գործարքների ներքո հաշվանցումների համար պահպանվող մնացորդը և ֆյուչերսային գործարքների ներքո հաշվանցումների մարժային պահուստը: 2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքի ֆյուչերսների հաշվանցումների համար պահվող մարժային պահուստի գումարը ներառված է «Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված կանխիկ» տողում:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,452,300 հազար ՀՀ դրամ արտարժութային ժամկետային ավանդներ Խմբի կողմից գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար (Ծնթգ. 24) (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,451,820 հազար ՀՀ դրամ գրավադրված արտարժութային ժամկետային ավանդներ):

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		
Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	122,810,147	105,894,951
Հիփոթեքային վերաֆինանսավորում	70,673,468	61,258,612
Առևտրային բանկերում ավանդներ և ընթացիկ հաշիվներ	49,852,349	50,364,096
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	36,918,863	45,707,770
Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	23,925,036	13,791,080
Այլ վարկեր	3,328,662	7,324,837
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	**307,508,525**	**284,341,346**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների և ներդրումների կենտրոնացում

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդները գերազանցում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղական արժույթով տեղաբաշխված միջոցների ընդհանուր գումարի 10%-ը (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ երկու բանկի):

Հակադարձ հետգնման պայմանագրերով առևտրային բանկերին տրամադրված վարկերը ներառում են կարճաժամկետ վարկեր, որոնք տրամադրվել են առևտրային բանկերին կանոնավոր կերպով՝ մրցութային գործընթացի միջոցով:

Հակադարձ հետգնման համաձայնագրերով գրավի առարկա են հանդիսանում արժեթղթերը, որոնք Խումբը կարող է վաճառել կամ վերագրավադրել: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 1 տեղական բանկի հետ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4 տեղական բանկերի և 3 այլ ֆինանսական հաստատությունների): Այս պայմանագրերով գրավի առարկա հանդիսացող արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Կառավարության գանձապետական արժեթղթեր	38,342,781	45,178,235
Կառավարության կողմից թողարկված Եվրոպարտատոմսեր	-	2,078,547
Կորպորատիվ պարտատոմսեր	-	749,595
Ընդամենը	**38,342,781**	**48,006,377**

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 749,595 հազար ՀՀ դրամ կորպորատիվ պարտատոմսերից 289,360 հազար ՀՀ դրամը ներկայացնում է Խմբի դուստր կազմակերպությանը պատկանող պարտատոմսերը:

KfW-ի, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ), Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական առևտրային բանկերին հետևյալ ծրագրերի ներքո, որոնք ֆինանսավորվում են KfW բանկային խմբի, ԵՆԲ, ԱԶԲ և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկի անդամ կազմակերպություն) կողմից.

- *ՓՄՁ աջակցություն.* Համաշխարհային բանկի և KfW-ի ՓՄՁ աջակցության ծրագրերի նպատակն է Հայաստանում զարգացնել ՓՄՁ-ները, մասնավորապես՝ առևտրային բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին տրամադրելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորումը առավել արդյունավետ և շահութաբեր դարձնելու նպատակով: Սա իրականացվում է գործընկեր բանկերում նոր վարկային գործիքակազմի /տեխնոլոգիաների/ ներդրման և բարձրակարգ վարկային մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպման միջոցով: 2014 թ. ընթացքում նոր վարկային գիծ է ստացվել ԱԶԲ-ի «Կանանց ձեռներեցության ոլորտի աջակցման և զարգացման» ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ՀՀ ֆինանսական համակարգի միջոցով խթանել ձեռներեցության զարգացումը կանանց շրջանում՝ մեծացնելով ազգային արժույթով ֆինանսական միջոցների հասանելիությունը կանանց պատկանող ՓՄՁ-ների համար: 2015 թ. ընթացքում նոր վարկ է ստացվել ԵՆԲ-ից՝ հիմնականում գյուղմշակման, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ՓՄՁ-ներին առևտրային բանկերի և ունիվերսալ վարկային կազմակերպությունների միջոցով փոխառություններ տրամադրելու նպատակով: 2017 թ. ընթացքում ևս մեկ վարկ է ստացվել ԵՆԲ-ից «Հայաստանի գյուղատնտեսության և տուրիզմի ֆինանսավորում 2 վարկ ՓՄՁ-ներին և միջին կապիտալիզացիա ունեցող կազմակերպություններին» ծրագրի շրջանակներում: Այս վարկի պայմանները հիմնականում նույնն են, ինչ առաջին փուլի պայմանները: Հիմնական տարբերությունը կլիմայական փոփոխությունների տարրի ներառումն է, որը ենթավարկառուներից պահանջում է որոշակի քայլեր ձեռնարկել շրջակա միջավայրի վրա ազդեցությունը բարելավելու համար: 2016 թ. ընթացքում նոր վարկ է ստացվել «էներգաարդյունավետություն փոքր և միջին ձեռնարկությունների համար» վարկային ծրագրի շրջանակներում: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել և ընդլայնել էներգաարդյունավետության վարկերի առաջարկը Հայաստանի ֆինանսական կազմակերպություններում և, միաժամանակ, բավարարել էներգաարդյունավետության վարկերի պահանջարկը միկրո, փոքր և միջին ձեռնարկությունների համար: Ծրագրի նպատակն է նպաստել հայկական ՓՄՁ-ների կողմից էներգիայի պահանջարկի և վնասակար գազերի արտանետման նվազմանը, ինչպես նաև խթանել ձեռնարկությունների մրցունակությունը:
- *Վերականգնվող էներգիայի զարգացում.* Ծրագրի ընդհանուր նպատակն է նպաստել էներգամատակարարման բարելավմանը և Հայաստանում մասնավոր հատվածի հետագա զարգացմանը՝ էլեկտրաէներգիայի արտադրության համար վերականգնվող էներգիայի աղբյուրների ծախսարդյունավետ օգտագործումն ապահովելու միջոցով: Ծրագրով նախատեսվում է աջակցել վերականգնվող էներգիայի օգտագործմանը, մասնավորապես փոքր հիդրոէլեկտրակայաններին (ՓՀԷԿ)՝ վարկեր տրամադրելով անհատ ձեռնարկատերերին և մասնավոր ձեռնարկություններին:
- *Բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացում.* Ծրագրի նպատակն է՝ ընդլայնել առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անշարժ գույքի ձեռքբերման և վերանորոգման նպատակով տնային տնտեսություններին հատկացվող վարկավորումը:

Ծրագրերի պայմանների համաձայն՝ Խումբը, կիրառելով տեխնիկական և ֆինանսական չափանիշներ, սահմանում է համապատասխան հայաստանյան բանկեր և ֆինանսական հաստատություններ, որոնցում տեղաբաշխում է միջոցներ՝ այդ գործընկերների հետ ստորագրված պայմանագրերի համաձայն: Բանկերը և ֆինանսական հաստատությունները որոշում են վերջնական փոխառուներին՝ ստանձնելով տրամադրված վարկերի հետ կապված ռիսկերը:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ KfW-ի, Համաշխարհային բանկի, ԵՆԲ-ի և ԱԶԲ-ի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 15 բանկերի (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 16 տեղական բանկերի) և 10 այլ ֆինանսական կազմակերպությունների (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9 այլ ֆինանսական կազմակերպությունների):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է մինչև 10 տարի մարման ժամկետով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 10 տարի):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերն ապահովված են գրավով՝ հաճախորդներին տրամադրված վարկային պայմանագրերի շրջանակներում պահանջի իրավունքով՝ 70,575,287 հազար ՀՀ դրամի գումարով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 60,995,474 հազար ՀՀ դրամ):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,097,326 հազար ՀՀ դրամ արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը և 30,000 հազար ՀՀ դրամ արժեքով ժամկետային ավանդները տեղական արժույթով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,024,213 հազար ՀՀ դրամ արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկեր) գրավադրվել են՝ երաշխավորելու Խմբի՝ Կառավարությունից ստացված վարկերի (Ծնթգ. 23) և թողարկված պարտատոմսերի (Ծնթգ. 24) ապահովվածությունը:

Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդները և ընթացիկ հաշիվները ներառում են Խմբի դուստր կազմակերպությունների կողմից առևտրային բանկերում կատարված ցպահանջ և կարճաժամկետ տեղաբաշխումները:

Խմբի ղեկավարությունը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 23,925,036 հազար ՀՀ դրամ ներդրումները դասակարգել է որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 13,791,080 հազար ՀՀ դրամ): Խմբի ղեկավարությունը կայացրել է այդ որոշումը՝ ելնելով այն հանգամանքից, որ տվյալ ներդրումների համար իրացվելի շուկա առկա չէ և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խումբն ունի այդ ներդրումները տեսանելի ապագայում պահելու հնարավորություն և մտադրություն:

Այլ վարկերն ապահովված են 2,325,983 հազար ՀՀ դրամ արժեքով անշարժ գույքով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,371,933 հազար ՀՀ դրամ) և 134,844 հազար ՀՀ դրամ արժեքով շարժական գույքով և այլ ակտիվներով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,279,430 հազար ՀՀ դրամ):

13. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Ակտիվներ		
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ արտարժույթով - Գնանշված		
Սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	607,324,341	515,867,650
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսեր	85,212,190	75,773,877
Սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքներ	14,524,124	-
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ արտարժույթով - Գնանշված	**707,060,655**	**591,641,527**
Պարտքային և հաստատագրված եկամտով այլ գործիքներ տեղական արժույթով		
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	-	2,352,333
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ տեղական արժույթով	**-**	**2,352,333**
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	**707,060,655**	**593,993,860**

2017 թ. և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Պետական պարտատոմսեր	331,702,996	250,595,989
Պետական գործակալությունների պարտատոմսեր	59,689,520	117,820,190
Այլ արժեթղթեր	215,931,825	147,451,471
Ընդամենը	**607,324,341**	**515,867,650**

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են եվրոպական երկրների կառավարությունների կողմից թողարկված արժեթղթեր և ԱՄՆ գանձապետական մուրհակներ, պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների կողմից թողարկված արժեթղթեր:

2017 թ. և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Պետական պարտատոմսեր	15,136,907	26,833,437
Պետական գործակալությունների պարտատոմսեր	22,369,775	21,829,108
Այլ արժեթղթեր	47,705,508	27,111,332
Ընդամենը	**85,212,190**	**75,773,877**

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերն իրենցից ներկայացնում են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո գտնվող ակտիվներ՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով պետական արժեթղթերն իրենցից ներկայացնում են Կառավարության արժեկտրոնային և զեղչատոկոսային գանձապետական արժեթղթեր:

14. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	202,928	-
Ընդամենը ածանցյալ ֆինանսական ակտիվներ	**202,928**	**-**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	13,184	28,177
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	-	51,773
Ընդամենը ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	**13,184**	**79,950**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 428 կարճ ֆյուչերսային պայմանագիր՝ 57,577 հազար եվրո կամ 33,400,648 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով՝ համաձայն ՀՀ դրամի նկատմամբ եվրոյի՝ տարվա վերջի պաշտոնական փոխարժեքի, որոնք եղել են միջազգային ֆինանսական կազմակերպությունների հայեցողական կառավարման ներքո՝ համաձայն ներդրումային կառավարման պայմանագրի, տոկոսադրույքի ռիսկը կարգավորելու նպատակով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 63 կարճ ֆյուչերսային պայմանագիր՝ 9,354 հազար եվրո կամ 4,791,155 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով):

հազար ՀՀ դրամ

	Անվանական արժեք		Իրական արժեք			
	2017 թ.	2016 թ.	2017 թ.		2016 թ.	
			Ակտիվ	Պարտավո-րություն	Ակտիվ	Պարտավո-րություն
Տոկոսադրույքի ֆյուչերսներ	33,400,648	4,791,155	202,928	-	-	51,773
Ընդամենը արտարժութային ֆյուչերսներ հավատարմագրային կառավարման ներքո	**33,400,648**	**4,791,155**	**202,928**	**-**	**-**	**51,773**
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	2,871,048	1,626,682	-	13,184	-	28,177
Ընդամենը	**36,271,696**	**6,417,837**	**202,928**	**13,184**	**-**	**79,950**

15. Ներդրումային արժեթղթեր

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով – Չգնահատվող		
Բաժնային ներդրումներ		
Արտերկրյա արժեթղթեր	2,317,977	2,207,785
Բաժնային ներդրումներ սկզբնական արժեքով		
SWIFT	3,211	1,646
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով – Չգնահատվող	**2,321,188**	**2,209,431**
Վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով		
Պարտքային գործիքներ		
ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	17,521,378	21,204,072
ՀՀ Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 25)	73,810,843	73,810,843
Կորպորատիվ պարտատոմսեր	-	6,111,734
Ընդամենը պարտքային գործիքներ	**91,332,221**	**101,126,649**
Բաժնային ներդրումներ սկզբնական արժեքով		
Այլ ներդրումներ	706,823	661,794
Ընդամենը բաժնային ներդրումներ	**706,823**	**661,794**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով	**92,039,044**	**101,788,443**
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	**94,360,232**	**103,997,874**
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով		
Արտերկրյա արժեթղթեր	32,089,943	31,431,281
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով	**32,089,943**	**31,431,281**

2017 թ. և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արտերկրյա արժեթղթերն իրենցից ներկայացնում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումը զարգացման հիմնադրամում, որի նախաձեռնողն ու կառավարողը KfW-ն է: Զարգացման

հիմնադրամը ստեղծվել է Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանի, ներառյալ Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացումն ու բարեկեցությունը խթանելու համար՝ լրացուցիչ զարգացման ֆինանսավորման կայուն ապահովման միջոցով:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տեղական արժույթով և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված արժեթղթերն իրենցից ներկայացնում են ՀՀ Կառավարության պետական արժեկտրոնային արժեթղթեր:

Վաճառքի համար մատչելի պարտքային ներդրումային արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որը օգտագործում է ընթացիկ շուկայական տոկոսադրույքները՝ այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը զեղչելու համար:

2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության կողմից թողարկված անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակի արժեքը 73,810,843 հազար ՀՀ դրամ է (2016 թ.՝ 73,810,843 հազար ՀՀ դրամ): Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասար է դրա իրական արժեքին:

Մինչև մարման ժամկետ պահվող դասակարգված արտերկրյա արժեթղթերը ներառում են եվրոպական երկրների կողմից թողարկված զեղչատոկոսային և արժեկտրոնային արժեթղթեր, ինչպես նաև պետական գործակալությունների, արտերկրյա բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների թողարկած արժեթղթեր:

2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում Խումբը վերադասակարգել է որոշ ֆինանսական ակտիվներ, որոնք մարվելու էին 2016 թ. ընթացքում, մինչև մարման ժամկետ պահվող կատեգորիայից վաճառքի համար պահվող կատեգորիա՝ պայմանավորված Բանկի արտարժութային ակտիվների արժութային կառուցվածքի վերաբալանսավորման հետ, որի անհրաժեշտությունը առաջացել է ԱՄՀ կողմից ՀՓԻ արժութային զամբյուղի կառուցվածքի փոփոխության արդյունքում: Վերադասակարգումը տեղի է ունեցել այդ ակտիվների մարման ամսաթվին մոտ ժամանակահատվածում: Վերադասակարգման ամսաթվի դրությամբ վերոնշյալ ակտիվների հաշվեկշռային արժեքը եղել է 8,982,014 հազար ՀՀ դրամ, իրական արժեքը՝ 9,029,947 հազար ՀՀ դրամ: 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում մինչև մարման ժամկետը պահվող կատեգորիայից որևէ վերադասակարգում չի եղել:

16. Գործարքներ Արժույթի միջազգային հիմնադրամի հետ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ		
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	88,797,296	83,794,704
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ	3,491,637	1,684,319
Հաշվեգրված տոկոսներ	7,196	1,272
Ընդամենը ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	**92,296,129**	**85,480,295**

Հայաստանի Հանրապետությունը ԱՄՀ անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության՝ ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

Բաժնեմասի հաշվեկշիռն ակտիվի հատուկ տեսակ է: Բաժնեմասերը լինում են տարբեր՝ կախված յուրաքանչյուր երկրի տնտեսության չափից և որոշվում են ԱՄՀ կառավարիչների խորհրդի կողմից:

Բաժնեմասով որոշվում են ԱՄՀ-ում անդամ երկրի ձայնի իրավունքը, ԱՄՀ ֆինանսական միջոցների հասանելիության սահմանաչափերը և մասնակցի մասնաբաժինը ԱՄՀ հաշվարկային միավորի՝ ՀՓԻ-ների տեղաբաշխում իրականացնելիս: Հայաստանի Հանրապետության բաժնեմասի 75%-ի համար վճարումը կատարվել է Բանկի կողմից ԱՄՀ-ին՝ թողարկված անտոկոս հասարակ մուրհակների տեսքով: 2016 թ. փետրվարի 25-ին Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում 92,000 հազար ՀՓԻ-ից բարձրացել է մինչև 128,800 հազար ՀՓԻ՝ համաձայն ԱՄՀ կառավարիչների խորհրդի որոշման: Բաժնեմասի վճարման՝ մուրհակի միջոցով կատարված մասը (18,622,225 հազար ՀՀ դրամ) չի պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառվել է դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունից: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բաժնեմասը ԱՄՀ-ում կազմել է 128,800 հազար ՀՓԻ կամ 88,797,296 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը (2016 թ.՝ 128,800 հազար ՀՓԻ կամ 83,794,704 հազար ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով տարվա վերջի՝ ՀՓԻ-ի նկատմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը): Անդամակցության բաժնեմասն անտոկոս է և ոչ ընթացիկ ակտիվ է:

Բանկն ԱՄՀ-ում ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվն օգտագործում է ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այդ ընթացիկ հաշիվը տոկոսային է. տոկոսները հաշվարկվում են՝ հիմք ընդունելով շաբաթական կտրվածքով ԱՄՀ-ի կողմից հրապարակվող ՀՓԻ տոկոսադրույքը:

Ստորև ներկայացված են 2017 թ. դեկտեմբերի 31-ին և 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ՀՓԻ հաշվում շարժերը.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
ՀՓԻ հաշվի մնացորդն առ 1 հունվարի	**1,684,319**	**1,383,162**
ԱՄՀ-ից միջոցների ստացում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում.		
Հօգուտ Բանկի	3,313,750	20,816,691
ՀՓԻ-ների գնում	24,993,815	4,459,268
Փոխանցում Բանկի՝ այլ բանկերում նոստրո հաշիվներին՝ «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի միջոցներից	–	(12,783,356)
Վարկերի հետվճարում ԱՄՀ-ին.		
Բանկի անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT))	(1,287,858)	(2,131,827)
Extended Fund Facility (EFF)	(13,440,048)	(8,653,383)
Կառավարության անունից՝		
(Poverty Reduction and Growth Trust (PRGT))	(9,839,699)	(6,175,021)
Վարկերին վերաբերող միջնորդավճարների վճարում	(59,550)	(136,129)
Այլ եկամուտ	7,606	39,014
Այլ վճարներ	(1,730)	(2,090)
ԱՄՀ միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարների վճարում.		
Բանկի անունից	(1,745,407)	(1,163,336)
ՀՓԻ տեղաբաշխումից ստացված միջոցների օգտագործման դիմաց տոկոսագումարի վճարում	(261,425)	(33,345)
ՀՓԻ միջոցներից եկամուտ	7,010	1,444
Պահուստային դիրքի հետգնում	–	6,199,880
Փոխարժեքային տարբերություններ	120,854	(136,653)
ՀՓԻ հաշվի մնացորդն առ 31 դեկտեմբերի	**3,491,637**	**1,684,319**

2017 թ. ընթացքում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում ստացված միջոցները կազմում են 15,690 հազար ՀՓԻ, որից 5,000 հազար ՀՓԻ մուտքագրվել է ՀՓԻ հաշվին: Մնացորդային մասը արտահայտված է եղել ԱՄՆ դոլարով և մուտքագրվել է ԱՄՆ դոլարով թղթակցային հաշիվներից մեկին: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից՝ իր անունից:

2016 թ. ընթացքում «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի շրջանակներում ստացվել և ՀՓԻ հաշվին մուտքագրվել են 31,300 հազար ՀՓԻ միջոցներ, որից մի մասը փոխարկվել է ԱՄՆ դոլարի և փոխանցվել Բանկի՝ այլ բանկերում ԱՄՆ դոլարով թղթակցային հաշիվներից մեկին: Բոլոր այդ միջոցները ստացվել են Բանկի կողմից՝ իր անունից:

Վերը ներկայացված աղյուսակում ներառված գործարքների գումարները ՀՀ դրամի համարժեքով են՝ հիմք ընդունելով գործարքների տեղի ունենալու ամսաթվի դրությամբ ՀՓԻ/դրամ փոխարժեքը:

Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Արժեթղթերի հաշիվ	159,285,304	159,285,304
ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշգրտման հաշիվ	7,743,521	(8,201,736)
Թիվ 1 հաշիվ	41,430,845	48,356,946
Թիվ 2 հաշիվ	2,584	2,637
ՀՓԻ տեղաբաշխում	60,661,141	57,243,662
ECF վարկ՝	22,195,187	22,187,380
Հաշվեկշռային արժեք	*21,116,173*	*21,161,000*
Հետաձգված եկամուտ	*1,079,014*	*1,026,380*
Հաշվեգրված տոկոսներ	433,562	249,739
Ընդամենը պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	**291,752,144**	**279,123,932**

Արժեթղթերի հաշիվը, ճշգրտման հաշիվը և թիվ 1 հաշիվը ներառում են Բանկի պարտավորությունները EFF վարկի և անդամակցության գումարների գծով: Ներկայումս ԱՄՀ-ի հետ բոլոր հիմնական հաշվարկներն իրականացվում են թիվ 1 հաշվի միջոցով: Թիվ 2 հաշիվն օգտագործվում է ԱՄՀ-ի կողմից վարչական նպատակների համար:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԱՄՀ-ի հանդեպ Բանկի պարտավորությունների մի մասը և անդամակցության գումարը ծածկվում են Խմբի թողարկած հասարակ մուրհակով՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 159,285,304 հազար ՀՀ դրամի) չափով:

Բացառությամբ անդամակցության բաժնեմասի և ՀՓԻ տեղաբաշխման մասով պարտավորության՝ Բանկի պարտավորությունը ԱՄՀ-ի հանդեպ 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներառում է պարտավորություններն ըստ «Երկարաժամկետ վարկային գործիք» (Extended Credit Facility (ECF)) ծրագրի և «Երկարաձգվող ֆինանսավորում» (Extended Fund Facility (EFF)) ծրագրի:

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցություն է տրամադրում վճարային հաշվեկշռի հետ երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: ECF-ը ստեղծվել է նոր հաստատված «Աղքատության կրճատում և տնտեսական աճ» ծրագրի ներքո և մաս է կազմում առավել լայն շրջանակի բարեփոխումների, որոնք ուղղված են ԱՄՀ ֆինանսական աջակցությունն առավել ճկուն դարձնելու համար և որոնք առավել հարմարեցված են ցածր եկամուտ ունեցող երկրների բազմազան կարիքներին, ներառյալ ճգնաժամային ժամանակաշրջաններում: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF-ն անտոկոս է

(2016թ.՝ 0%): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2018 թ. մայիսից մինչև 2023 թ. հունիս (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը՝ 2017 թ. մայիսից մինչև 2023 թ. հունիս):

EFF (Extended Fund Facility) վարկը տրամադրվում է երկրներին միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և ԱՄՀ-ի կողմից հրապարակվում է շաբաթական կտրվածքով: 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը ենթակա են մարման 2018 թ. հունիսից մինչև 2027 թ. հունիս (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված վարկերը՝ 2017 թ. հունիսից մինչև 2026 թ. դեկտեմբեր):

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ն ՀՓԻ տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներին: ՀՓԻ տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և ԱՄՀ-ի կողմից հրապարակվում է շաբաթական կտրվածքով: ՀՓԻ տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

17. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ

	Հող և շենքեր	Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Անավարտ շինարարություն	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2016 թ.	**71,835,390**	**23,377,557**	**669,654**	**285,411**	**96,168,012**
Ավելացումներ	80,585	409,125	56,018	2,661,468	3,207,196
Օտարումներ	-	(460,633)	(51,356)	-	(511,989)
Տեղափոխում	972,155	(972,155)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**72,888,130**	**22,353,894**	**674,316**	**2,946,879**	**98,863,219**
Ավելացումներ	71,863	877,660	27,000	1,345,567	**2,322,090**
Օտարումներ	(342,091)	(733,757)	(52,065)	-	**(1,127,913)**
Տեղափոխում	2,150,934	259,397	-	(2,410,331)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017 թ.	**74,768,836**	**22,757,194**	**649,251**	**1,882,115**	**100,057,396**
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2016 թ.	**8,468,245**	**10,403,201**	**413,992**	**-**	**19,285,438**
Տարվա մաշվածության ծախս	2,713,844	1,777,485	70,893	-	4,562,222
Օտարումներ	-	(443,893)	(47,729)	-	(491,622)
Տեղափոխում	179,117	(179,117)	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**11,361,206**	**11,557,676**	**437,156**	**-**	**23,356,038**
Տարվա մաշվածության ծախս	2,702,150	1,540,578	72,714	–	**4,315,442**
Օտարումներ	(183,710)	(479,037)	(48,117)	–	**(710,864)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017 թ.	**13,879,646**	**12,619,217**	**461,753**	**-**	**26,960,616**
Հաշվեկշռային արժեք					
2017 թ. դեկտեմբերի 31-ին	**60,889,190**	**10,137,977**	**187,498**	**1,882,115**	**73,096,780**
2016 թ. դեկտեմբերի 31-ին	**61,526,924**	**10,796,218**	**237,160**	**2,946,879**	**75,507,181**

Անավարտ շինարարությունը հիմնականում բաղկացած է շենքերի շինարարությունից: Ավարտից հետո ակտիվները վերադասակարգվում են համապատասխանաբար որպես շենքեր և սարքավորումներ:

18. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր	Անավարտ պայմանագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
Մնացորդը առ 1 հունվարի 2016 թ.	**3,091,418**	**-**	**3,091,418**
Ավելացումներ	223,754	-	223,754
Օտարումներ	-	-	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**3,315,172**	**-**	**3,315,172**
Ավելացումներ	1,474,760	991,453	2,466,213
Օտարումներ	(654,317)	-	(654,317)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017 թ.	**4,135,615**	**991,453**	**5,127,068**
Ամորտիզացիա			
Մնացորդը առ 1 հունվարի 2016 թ.	1,352,034	**-**	**1,352,034**
Տարվա ամորտիզացիոն ծախս	381,056	-	381,056
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2016 թ.	**1,733,090**	**-**	**1,733,090**
Տարվա ամորտիզացիոն ծախս	384,557	-	384,557
Օտարումներ	(27,689)	-	(27,689)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2017 թ.	**2,089,958**	**-**	**2,089,958**
Հաշվեկշռային արժեք			
2017 թ. դեկտեմբերի 31-ին	**2,045,657**	**991,453**	**3,037,110**
2016 թ. դեկտեմբերի 31-ին	**1,582,082**	**-**	**1,582,082**

19. Այլ ակտիվներ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Դրամագիտական արժեքներ	7,970,378	7,934,344
Կանխավճարներ	5,012,084	3,030,893
Այլ	2,270,932	2,526,234
Ընդամենը այլ ակտիվներ	**15,253,394**	**13,491,471**

20. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	177,022,529	256,510,976
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ	1,862,121	1,703,577
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	529,618	15,539
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**179,414,268**	**258,230,092**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	381,265,657	329,168,722
Ձիճծառայողների ապահովագրության հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ	1,196,390	-
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ	2,151	15,688
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	1,024,175	274,930
Այլ ավանդներ	2,002,678	-
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**385,491,051**	**329,459,340**
Ընդամենը ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	**564,905,319**	**587,689,432**

Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2 բանկի մնացորդ գերազանցել է Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 144,659,126 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2 բանկ, 201,342,818 հազար ՀՀ դրամ):

21. Այլ փոխառություններ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Վարկեր KfW-ից	62,758,218	48,539,612
Վարկեր ԵՆԲ-ից	56,539,446	30,332,787
Վարկեր Համաշխարհային բանկից	21,968,849	22,642,785
Վարկեր ԱԶԲ -ից	8,381,125	5,004,020
Այլ	5,933,983	6,673,519
Ընդամենը այլ փոխառություններ	**155,581,621**	**113,192,723**

KfW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2048 թ. ընկած ժամանակաշրջանն է (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2017 թ-ից մինչև 2048 թ.): Վարկերի մարումը KfW-ին երաշխավորված է Կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից 2035 թ. ընկած ժամանակաշրջանն է (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2017թ-ից 2035 թ.):

ԱԶԲ-ի կողմից տրամադրվել է վարկ՝ առևտրային բանկերի և ֆինանսական հաստատությունների միջոցով կանանց պատկանող փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման նպատակով (Ծնթգ. 12): Վարկի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2044 թ. ընկած ժամանակաշրջանն է (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2017 թ-ից 2044 թ.):

Բանկին տրամադրվել են վարկեր Եվրոպական ներդրումային բանկի կողմից, որի նպատակը գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի և ֆինանսական կազմակերպությունների միջոցով (Ծնթգ. 12): Վարկերի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2030 թ. ընկած ժամանակաշրջանն է (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2017 թ-ից 2030 թ.):

Խմբի դուստր կազմակերպություններից մեկը փոխառություն է ստացել Ֆրանսիական զարգացման գործակալությունից՝ ներառված «Այլ» դասում: Վարկի մարման ժամկետայնությունը 2018 թ-ից մինչև 2025 թ. ընկած ժամանակահատվածն է (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2017 թ-ից մինչև 2025 թ.): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս վարկային ծրագրի գծով մնացորդը կազմում է 5,933,983 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 6,673,519 հազար ՀՀ դրամ):

22. Այլ պարտավորություններ տեղական արժույթով

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Այլ պարտավորություններ տեղական արժույթով		
Կրեդիտորական պարտքեր	2,072,744	2,062,488
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	932,825	829,066
Այլ պարտավորություններ	1,643,256	1,175,813
Ընդամենը այլ պարտավորություններ տեղական արժույթով	**4,648,825**	**4,067,367**

23. Պարտավորություններ Հայաստանի Հանրապետության Կառավարության հանդեպ

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Պարտավորություններ արտարժույթով		
Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,242,391	1,195,241
Ընդամենը պարտավորություններ արտարժույթով	**1,242,391**	**1,195,241**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Ժամկետային ավանդներ	115,325,158	135,211,272
Կառավարության ընթացիկ հաշիվներ	45,210,833	47,104,499
Կառավարությունից ստացված վարկեր	965,468	1,609,773
Ընդամենը պարտավորություններ տեղական արժույթով	**161,501,459**	**183,925,544**
Ընդամենը պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	**162,743,850**	**185,120,785**

Կառավարության ժամկետային ավանդների ժամկետայնությունը մինչև մեկ տարի է, և տոկոսադրույքը կազմում է 5.25%-ից մինչև 5.63% (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝5.98%-ից մինչև 7.25%):

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չմարված՝ Կառավարությունից ստացված վարկերում ներառված են 2009 թ. հունիսի 13-ին ստորագրված ընդհանուր համաձայնագրի հիման վրա՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում Խմբի դուստր կազմակերպություններից մեկի կողմից Կառավարությունից ստացված վարկերը: Վարկերի անվանական տոկոսադրույքը տարեկան 7% է, մարման ժամկետը՝ մինչև 2019 թ. հունիսը:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված 1,097,326 հազար ՀՀ դրամ ընդհանուր արժեքով հիփոթեքային վերաֆինանսավորման վարկերը հանդիսանում են Կառավարությունից ստացված վարկի դիմաց գրավ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,466,583 հազար ՀՀ դրամ):

24. Թողարկված պարտատոմսեր

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի դուստր կազմակերպությունն ուներ թողարկած 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (մարումը՝ մինչև 2019 թ. հունիս), 3,510,600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր (մարումը՝ մինչև 2019 թ. նոյեմբեր) (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,137,300 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, մեկ տարի ժամկետայնությամբ զեղչատոկոսային պարտատոմսեր, 3,510,600 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր, 2,000,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, երեք տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր և 1,200,000 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով, հինգ տարի ժամկետայնությամբ արժեկտրոնային պարտատոմսեր):

Պարտատոմսերի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 10.4%-ից 11.8% (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 9.8%-ից մինչև 11.82%): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի հաշվեկշռային արժեքը կազմում է 4,751,824 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 8,788,038 հազար ՀՀ դրամ): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 30,000 հազար ՀՀ դրամ արժեքով տեղական արժույթով ժամկետային ավանդներ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 5,557,630 հազար ՀՀ դրամ արժեքով բանկերին և այլ ֆինանսական հաստատություններին տրամադրված հիփոթեքային վերաֆինանսավորման վարկեր) և 1,452,300 հազար ՀՀ դրամ արտարժույթով ժամկետային ավանդներ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,451,820 հազար ՀՀ դրամ արտարժույթով) գրավադրված են թողարկված պարտատոմսերի ապահովվածության համար:

25. Կապիտալի կառավարում

Խմբի կապիտալը ներառում է Խմբի ակտիվների մնացորդային արժեքը՝ պարտավորությունների չափով նվազեցում կատարելուց հետո:

Բանկի (որպես կենտրոնական բանկի) նկատմամբ չկան արտաքին կապիտալի պահանջներ, բացառությամբ Օրենքով կանոնադրական կապիտալի չափի նկատմամբ սահմանված պահանջի:

Համաձայն Օրենքի՝ Բանկի կանոնադրական կապիտալը կազմում է 100,000 հազար ՀՀ դրամ: Բանկի կանոնադրական կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավ դրվել, բռնագանձվել կամ այլ կերպ օտարվել Հայաստանի Հանրապետության պարտավորությունների դիմաց:

Կապիտալը կառավարելիս Բանկի նպատակն է պահպանել կապիտալի համապատասխան մակարդակ՝ Բանկի տնտեսական անկախությունն ու իր գործառույթներն իրականացնելու կարողությունն ապահովելու համար: Բանկի ղեկավարությունը կառավարման ներքո գտնվող ողջ կապիտալը դիտարկում է որպես սեփական կապիտալ, ինչպես ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Բանկի կապիտալի բաղադրիչների կառավարման նպատակներն ու քաղաքականությունը սահմանված են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով հաստատված համապատասխան ներքին կանոնակարգերով: Իր գործառույթների իրականացման հետ կապված ֆինանսական ռիսկերը ծածկելու նպատակով միջոցների և պահուստների ձևավորումը կատարվում է Խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերին և Օրենքին համապատասխան:

Գլխավոր պահուստը ձևավորվում է Օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման: Գլխավոր պահուստը ձևավորվում է բանկային գործունեության արդյունքում առաջացող ընդհանուր ռիսկերը (հնարավոր վնասները) ծածկելու համար: Կառավարության կողմից թողարկված մուրհակը իրենից ներկայացնում է ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով Կառավարության ներդրումը, որը կատարվում է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններում ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը՝ պահուստների հանրագումարը գերազանցելու դեպքում:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Կառավարության կողմից թողարկված ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի արժեքը կազմում է 73,810,843 հազար ՀՀ դրամ: 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում շահույթի բաշխում տեղի չի ունեցել:

2016 թ. դեկտեմբերին Խումբը բաշխել է 2015 թ. դեկտեմբերի դրությամբ առաջացած շահույթի 80%-ը՝ նախկինում Կառավարության կողմից թողարկված մուրհակի գումարը ծածկելու նպատակով: 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շահույթի մնացորդային մասը փոխանցվել է գլխավոր պահուստ: Կառավարությունը վերաթողարկել է 73,810,843 հազար ՀՀ դրամ անվանական արժեքով անտոկոս հասարակ մուրհակ (Ծնթգ. 15): Հասարակ մուրհակի գումարի մարմանն ուղղված շահույթի բաշխումը և շահույթի փոխանցումը գլխավոր պահուստ չեն պահանջել դրամական միջոցների և դրանց համարժեքների օգտագործում և բացառվել են դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունից:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստը, որը կազմում է 1,903,879 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն) (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,083,657 հազար ՀՀ դրամ (դրական ազդեցություն)), ներկայացնում է հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի՝ վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքի և դրանց սկզբնական ճանաչման իրական արժեքի միջև տարբերությունը:

26. Պայմանական պարտավորություններ

Կապիտալ բնույթի պարտավորություններ

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Խմբի շենքերի կապիտալ շինարարությանը և համակարգչային ծրագրի մշակմանը, կազմում են 321,238 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝1,410,017 հազար ՀՀ դրամ):

Իրավական պարտավորություններ

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Երաշխիքներ

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի տրված երաշխիքներ 746,272 հազար ՀՀ դրամի չափով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 746,025 հազար ՀՀ դրամ): Երաշխիքները տրվել էին 1994 թ-ից 1995 թ. ընկած ժամանակաշրջանում՝ շինարարական ընկերությունների անունից երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Խումբը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարելու իր պարտավորությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի: Երաշխիքների տրման ամսաթվից մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Խումբը չի կատարել որևէ վճարում և չի ստացել այդ երաշխիքների գծով որևէ պահանջ:

27. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (Ծնթգ. 11):

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Ղեկավար անձնակազմ, ներառյալ Խորհրդի անդամները	311,599	303,057
Ընդամենը	**311,599**	**303,057**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված վարկերի մնացորդը կազմել է 115,372 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 117,833 հազար ՀՀ դրամ): 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամներին տրամադրված և նրանց կողմից մարված վարկերի ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 26,500 հազար ՀՀ դրամ և 28,961 հազար ՀՀ դրամ (2016 թ.՝ 15,180 հազար ՀՀ դրամ և 24,377 հազար ՀՀ դրամ): 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների կողմից Բանկում տեղաբաշխված ավանդների մնացորդը կազմել է 206,139 հազար ՀՀ դրամ (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 128,404 հազար ՀՀ դրամ): 2017 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա ընթացքում ղեկավար անձնակազմի անդամների կողմից տեղաբաշխված և մարված ավանդների ընդհանուր գումարը կազմել է համապատասխանաբար 100,262 հազար ՀՀ դրամ և 22,527 հազար ՀՀ դրամ (2016 թ.՝ 82,047 հազար ՀՀ դրամ և 25,279 հազար ՀՀ դրամ): Համաձայն Բանկի ներքին կանոնակարգերի՝ վարկեր չեն կարող տրամադրվել Բանկի այն աշխատակիցներին, որոնք ունեն Բանկում տեղաբաշխված ավանդներ:

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային ծախս	(20,537)	(11,526)
Տոկոսային եկամուտ	3,772	4,241

Գործարքներ Հայաստանի Հանրապետության Կառավարության հետ

Ստորև ներկայացված են Կառավարության հետ գործարքների մնացորդները և պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույքները.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.		31 դեկտեմբերի 2016 թ.	
	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Ակտիվներ				
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող (Ծնթգ.13)	-	0.0%	2,352,333	10.8%
Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթեր՝ դասակարգված որպես վաճառքի համար մատչելի (Ծնթգ. 15)	17,521,378	10.9%	21,204,072	11.0%
	17,521,378		**23,556,405**	
Կառավարության կողմից թողարկված մուրհակ (Ծնթգ. 15)				
Մնացորդը հունվարի 1-ին	**73,810,843**		**81,275,373**	
Նվազեցում՝ շահույթի բաշխման արդյունքում	-		(7,464,530)	
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**73,810,843**		**73,810,843**	
Ակտիվներ դեկտեմբերի 31-ին	**91,332,221**		**97,367,248**	
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (տեղական արժույթով) (Ծնթգ. 23)	161,501,459	4.3%	183,925,544	5.2%
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ (արտարժույթով) (Ծնթգ. 23)	1,242,391		1,195,241	
Պարտավորություններ դեկտեմբերի 31-ին	**162,743,850**		**185,120,785**	

Կառավարության նկատմամբ տեղական արժույթով պարտավորություններում ներառված ավանդների շարժը.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**135,211,272**	**86,130,956**
Ավելացում	804,000,000	726,599,595
Տոկոսային ծախս	5,868,829	4,781,824
Մարում (ներառյալ՝տոկոսի վճարումը)	(829,754,943)	(682,301,103)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**115,325,158**	**135,211,272**

Կառավարությունից տեղական արժույթով ստացված վարկերի շարժը.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**1,609,773**	**2,253,561**
Տոկոսային ծախս	98,431	98,948
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(742,736)	(742,736)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**965,468**	**1,609,773**

Կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ Կառավարության արժեթղթերից	2,398,426	2,348,798
Տոկոսային ծախս	(6,397,728)	(5,431,734)
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(8,082)	(33,546)
Զուտ (վնաս)/օգուտ ածանցյալ գործիքներից	(473,190)	547,349

2007 թ. հունվարի 5-ին Կառավարության հետ կնքված պայմանագրի համաձայն Բանկը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը Կառավարության բյուջետային ուղերձում տվյալ տարվա համար սահմանված փոխարժեքներով, ինչը հիմք է հանդիսանում «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենքում ցուցանիշների հաշվարկման համար: Արտարժույթի փոխանակման այդպիսի գործարքներից օգուտը կամ վնասը Բանկը հաշվառում է որպես ածանցյալ գործիքներից ֆինանսական արդյունք:

Գործարքներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին: Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կառավարման մարմնում Բանկն ունի ներկայացուցիչներ:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.		31 դեկտեմբերի 2016 թ.	
	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Պարտավորություններ				
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (տեղական արժույթով, Ծնթգ. 20)	2,151	0.0%	15,688	0.0%
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (արտարժույթով, Ծնթգ. 20)	1,862,121	0.0%	1,703,577	0.0%
Ընդամենը	**1,864,272**		**1,719,265**	

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**1,719,265**	**1,968,152**
Ավելացում	27,658,285	46,040,386
Տոկոսային ծախս	4,283	12,695
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(27,517,561)	(46,301,968)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**1,864,272**	**1,719,265**

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն		
Տոկոսային ծախս	4,283	12,695

Գործարքներ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հետ

Ստորև բերված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը վերաբերում է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի հետ գործարքների արդյունքներին և մնացորդներին: Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի կառավարման մարմնում Բանկն ունի ներկայացուցիչներ:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.		31 դեկտեմբերի 2016 թ.	
	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք	Մնացորդ	Պայմանագրով սահմանված միջին տոկոսադրույք
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն				
Պարտավորություններ				
Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվներ (տեղական արժույթով, Ծնթգ. 20)	1,196,390	6.0%	-	0.0%
Ընդամենը պարտավորություններ	**1,196,390**		**-**	

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի ավանդների և ընթացիկ հաշիվների շարժը հետևյալն է.

հազար ՀՀ դրամ

	2017 թ.	2016 թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**-**	**-**
Ավելացում	1,195,800	-
Տոկոսային ծախս	83,373	-
Մարում (ներառյալ՝ տոկոսի վճարումը)	(82,783)	-
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**1,196,390**	**-**

28. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են հետևյալ հոդվածներից.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.	31 դեկտեմբերի 2016 թ.
Կանխիկ դրամ	45,575,878	24,771,453
Նոստրո հաշիվներ (Ծնթգ. 12)	287,195,009	391,056,963
ԱՄՀ-ում ՀՓԻ միջոցներ (Ծնթգ. 16)	3,491,637	1,684,319
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**336,262,524**	**417,512,735**

29. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի հետևյալ կերպ. ա) մակարդակ 1՝ գնահատումներ գործող շուկայում համանման ակտիվների կամ պարտավորությունների գնանշված (չճշգրտված) գներով, բ) մակարդակ 2՝ գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալները ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտարկելի են, գ) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն շուկայի դիտարկելի տվյալների վրա (այն է՝ ոչ դիտարկելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները դասակարգելիս ղեկավարությունը կիրառում է դատողություն՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Եթե իրական արժեքի գնահատման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի ելակետային տվյալներ, ապա տվյալ գնահատումը մակարդակ 3-ի գնահատում է: Գնահատման ելակետային տվյալների էականությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական գնահատման համադրությամբ:

(ա) Իրական արժեքի պարբերական գնահատումներ

Իրական արժեքի պարբերական գնահատումներն այն գնահատումներն են, որոնք հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվում կամ թույլատրվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Իրական արժեքի պարբերական գնահատումների դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.				31 դեկտեմբերի 2016 թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ								
Ֆինանսական ակտիվներ								
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ								
- Պետական պարտատոմսեր	346,839,903	–	–	**346,839,903**	277,429,426	-	-	**277,429,426**
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	82,059,295	–	–	**82,059,295**	139,649,298	-	-	**139,649,298**
- Այլ արժեթղթեր	263,637,333	–	–	**263,637,333**	174,562,803	-	-	**174,562,803**
- Փողի շուկայի գործիքներ	14,524,124	–	–	**14,524,124**	-	-	-	**-**
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	–	–	–	**–**	-	2,352,333	-	**2,352,333**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	202,928	–	–	**202,928**	**-**	**-**	**-**	**-**
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր								
- Արտերկրյա արժեթղթեր	–	2,317,977	–	**2,317,977**	-	2,207,785	-	**2,207,785**
- ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	–	17,521,378	–	**17,521,378**	-	21,204,072	-	**21,204,072**
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	–	73,810,843	–	**73,810,843**	-	73,810,843	-	**73,810,843**
- Կորպորատիվ պարտատոմսեր	–	–	–	**–**	-	-	6,111,734	**6,111,734**
Ընդամենը ակտիվներ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**707,263,583**	**93,650,198**	**-**	**800,913,781**	**591,641,527**	**99,575,033**	**6,111,734**	**697,328,294**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբեր 2017 թ.			31 դեկտեմբեր 2016 թ.		
	Մակար-դակ 1	Մակար-դակ 3	Ընդամենը	Մակար-դակ 1	Մակար-դակ 3	Ընդամենը
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Արտարժութային պայմանագրեր հավատարմագրային կառավարման ներքո	-	-	-	51,773	-	51,773
Ֆորվարդ պայմանագիր Կառավարության հետ	-	13,184	13,184	-	28,177	28,177
Ընդամենը պարտավորություններ իրական արժեքի պարբերական գնահատմամբ	**-**	**13,184**	**13,184**	**51,773**	**28,177**	**79,950**

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2017 թ. ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր			
– Արտերկրյա արժեթղթեր	2,317,977	ԶՊՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
– ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	17,521,378	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
– Կառավարության կողմից թողարկված մուրհակ	73,810,843	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**93,650,198**		

Մակարդակ 2-ի իրական արժեքի գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և գնահատման մեթոդի նկարագիրը առ 31 դեկտեմբերի 2016 թ. ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ			
Ֆինանսական ակտիվներ			
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ			
– ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	2,352,333	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր			
– Արտերկրյա արժեթղթեր	2,207,785	ԶՊՄՀ	Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո
– ՀՀ Կառավարության գանձապետական արժեթղթեր	21,204,072	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
– Կառավարության կողմից թողարկված մուրհակ	73,810,843	ԶՊՄՀ	Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր
Ընդամենը մակարդակ 2-ում իրական արժեքի պարբերական գնահատումներ	**99,575,033**		

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված դիտելի մուտքային տվյալներ	Միմյանց վրա ազդեցություն ունեցող դիտելի մուտքային տվյալներ (ցուհաշի դեպքում)	Ողջամիտ տարածք	Իրական արժեքի զգայունության ցուցանիշներ
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,184	ԶՊՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 5.63%	1) +160/-350 բ.կ.	1) (3,636)/8,167
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 3.36%	2) +70/-8 բ.կ.	2) 1,608/(184)
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 1.43%	3+25/-1 բ.կ.	3) 12/(0.4)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 484.10	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 580.10	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող զուտ գումար՝ ԱՄՆ դոլար	6) 5,811 հազար ԱՄՆ դոլար	6) ± 10%	6) (1,119)/1,119
			7) Արտաքին պարտքի ակնկալվող զուտ գումար՝ եվրո	7) 100 հազար եվրո	7) ± 10%	7) (200)/200

Մակարդակ 3-ի իրական արժեքի գնահատման մեթոդի, գնահատումներում օգտագործված ելակետային տվյալների և այդ ելակետային տվյալներում հնարավոր ողջամիտ փոփոխությունների նկատմամբ համապատասխան զգայունության նկարագիրը 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված է ստորև.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ	Ելակետային տվյալների միջակայքը (միջին կշռված)	Ողջամիտ փոփոխություն	Իրական արժեքի զգայունության ազդեցությունը
Իրական արժեքով հաշվառվող ակտիվներ						
Ֆինանսական ակտիվներ						
Վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր						
- Կորպորատիվ պարտատոմսեր	6,111,734	ԶՂՄՀ	1) Պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր	1) 9.75%	1) ± 370 բ.կ.	1) (45,398)/46,584
			2) Վարկային ռիսկ	2) 3%	2) ± 200 բ.կ.	2) 25,030/(30,801)
			3) Վերադարձելիության գործակից	3) 50%	3) ± 20%	3)12,471/(18,545)
Իրական արժեքով հաշվառվող պարտավորություններ						
Ֆինանսական պարտավորություններ						
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	28,177	ԶՂՄՀ	1) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ՀՀ դրամ	1) 6.84%	1) ± 370 բ.կ.	1) (4,736)/4,918
			2) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ ԱՄՆ դոլար	2) 5.77%	2) +60/-8 բ.կ.	2) 777/(104)
			3) Ռիսկերից ազատ տոկոսադրույք՝ եվրո	3) 4.63%	3) +12/-8 բ.կ.	3) 5/(3)
			4) ԱՄՆ դոլար/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	4) 483.94	4) առկա չէ	4) առկա չէ
			5) Եվրո/ ՀՀ դրամ սփոթ դրույք տարվա վերջին	5) 512.2	5) առկա չէ	5) առկա չէ
			6) Արտաքին պարտքի ակնկալվող գումար՝ ԱՄՆ դոլար	6) 3,252 հազ. ԱՄՆ դոլար	6) ±10%	6) (2,912)/2,912
			7) Արտաքին պարտքի ակնկալվող գումար՝ եվրո	7) 100 հազ. եվրո	7) ± 10%	7) 95/(95)

Ներկայացված աղյուսակները բացահայտում են ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գնահատման ելակետային տվյալների նկատմամբ զգայունությունն այն դեպքում, երբ խելամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու համար ոչ դիտարկելի ելակետային տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը հանգեցնում է իրական արժեքի էական փոփոխության: Ներկայացված աղյուսակում բացահայտված իրական արժեքի գնահատման զգայունությունը ցույց է տալիս գնահատման արդյունքի փոփոխության ուղղությունը համապատասխան ելակետային փոփոխականների ավելացման կամ նվազեցման դեպքում:

(բ) Մակարդակ 3-ի իրական արժեքի պարբերական գնահատումների գործընթացներ

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում իրական արժեքի գնահատումները պարբերաբար դիտարկվում են Բանկի հաշվապահական հաշվառման և ֆինանսական վարչությունների կողմից՝ որոշում կայացնելով գնահատման մեթոդի ելակետային տվյալների վերլուծության և օգտագործվող գնահատման մեթոդի համապատասխանության վերաբերյալ: Մակարդակ 3-ում գործիքները գնահատվում են գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի զուտ բերված արժեքով՝ օգտագործելով յուրաքանչյուր ֆինանսական գործիքի առանձնահատկությունների հիման վրա որոշված զեղչման դրույքները: Անհրաժեշտության դեպքում Խմբի կողմից կիրառվում է հետադարձ թեստավորում:

(գ) Ակտիվներ և պարտավորություններ, որոնք չեն գնահատվում իրական արժեքով, սակայն որոնց համար կատարվում է իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտում

Ստորև ներկայացված են իրական արժեքով չգնահատվող ակտիվների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի վերլուծությունն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.				31 դեկտեմբերի 2016 թ.			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական ակտիվներ								
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով								
- Նոստրո հաշիվներ	–	287,195,009	–	287,195,009	-	391,056,963		391,056,963
- ժամկետային ավանդներ	–	33,757,440	–	33,603,980	-	28,980,855	-	29,028,319
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	–	3,118,396	–	3,118,396	-	2,914,810	-	2,914,810
- Հետգնման պայմանագրեր	–	14,533,961	–	14,533,961				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով								
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	–	36,918,863	–	36,918,863	-	45,707,770	-	45,707,770
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	-	123,846,060	-	122,810,147	-	106,004,276	-	105,894,951
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	-	67,704,479	-	70,673,468	-	58,925,041	-	61,258,612
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	-	49,744,423	-	49,852,349	-	50,163,151	-	50,364,096
- Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	-	-	20,102,861	23,925,036	-	-	9,881,947	13,791,080
- Այլ վարկեր	-	3,131,405	-	3,328,662	-	6,995,062	-	7,324,837
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումային արժեթղթեր								
- Պետական պարտատոմսեր	4,565,264	-	-	4,566,164	-	-	-	-
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	10,663,568	-	-	10,749,711	11,654,715	-	-	11,655,737
- Այլ արժեթղթեր	16,732,246	-	-	16,774,068	19,776,585	-	-	19,775,544
Ընդամենը	**31,961,078**	**619,950,036**	**20,102,861**	**678,049,814**	**31,431,300**	**690,747,928**	**9,881,947**	**738,772,719**

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ֆինանսական և այլ հաստատություններում արտերկրյա և տեղական արժույթով հաշիվների և ավանդների, ԱՄՀ-ին վճարվելիք գումարների և այլ փոխառու միջոցնե-

րի հաշվեկշռային արժեքը մոտարկում է դրանց իրական արժեքին: Իրական արժեքի հիերարխիայում այդ ֆինանսական պարտավորությունները ներառված են մակարդակ 2-ում:

Ստորև ներկայացված են իրական արժեքով չգնահատվող պարտավորությունների հաշվեկշռային արժեքը և իրական արժեքի դասակարգումն ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակի.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.		31 դեկտեմբերի 2016 թ.	
	Մակարդակ 2	Հաշվեկշռային արժեք	Մակարդակ 2	Հաշվեկշռային արժեք
Ֆինանսական պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ				
Պարտավորություններ արտարժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	1,242,391	1,242,391	1,195,241	1,195,241
Պարտավորություններ տեղական արժույթով				
- Կառավարության ընթացիկ հաշիվներ	45,210,833	45,210,833	47,104,499	47,104,499
- Ժամկետային ավանդներ	115,310,788	115,325,158	135,165,735	135,211,272
- Կառավարությունից ստացված վարկեր	965,468	965,468	1,609,773	1,609,773
- Թողարկված պարտատոմսեր	5,018,023	4,751,824	8,980,647	8,788,038
Ընդամենը	**167,747,503**	**167,495,674**	**194,055,895**	**193,908,823**

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 2-ում և մակարդակ 3-ում իրական արժեքները գնահատվել են՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների մեթոդը: Գործող շուկայում չգնանշված՝ լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է որպես դրանց հաշվեկշռային արժեքին հավասար: Չգնանշված՝ ֆիքսված տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմք ընդունելով ապագա դրամական միջոցների հոսքերի զեղչման մեթոդը՝ կիրառելով համանման վարկային ռիսկ և մարման ժամկետ ունեցող նոր գործիքների համար շուկայում գործող տոկոսադրույքները:

30. Ռիսկերի կառավարում

Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Ռիսկերի կառավարման այդ գործընթացը չափազանց կարևոր է Խմբի հիմնական գործառույթների իրականացման համար, և Խմբում յուրաքանչյուր անհատ հաշվետու է իր պարտականություններին առնչվող ռիսկերի ազդեցության մասով: Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային, իրացվելիության և շուկայական ռիսկերի: Վերջինս ներառում է առևտրային և ոչ առևտրային ռիսկեր: Խմբի գործունեությունը ենթարկվում է նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ վերահսկման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են Խմբի կողմից ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

Ռիսկերի բացահայտման և վերահսկման վերջնական պատասխանատվությունը կրում է Խորհուրդը, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

Խորհուրդը

Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ միջազգային պահուստները ոչ ռեզիդենտների նկատմամբ Բանկի պահանջներն են՝ արտահայտված ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են Խմբի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում: Բանկը պահուստների կառավարումն իրականացնում է Օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով Խորհրդի կողմից հաստատված գործիքներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարային/առևտրային անհավասարակշռությունները ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Բանկը պահուստներն օգտագործում է ՀՀ Կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

2007 թվականից սկսած Բանկը, որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերում գոյություն ունեցող միջազգային լավագույն փորձը, սահմանել է միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Խմբի կողմից ներդրվել է որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար, իսկ ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշների ընտրության իրավասությունը պատվիրակվել է Բանկի ներդրումային հանձնաժողովին: Պորտֆելի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշների և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

Կառավարում և վերահսկողություն

Ըստ Բանկի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական վարչությունը: Ֆինանսական վարչության բաժիններից մեկը՝ Արտաքին շուկաներում գործառնությունների բաժինը, իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Նույն վարչության Միջազգային ռիսկերի կառավարման բաժինը պատասխանատու է ռիսկերի գնահատման, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշների մշակման, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման և հաշվետվությունների ներկայացման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալը: Հանձնաժողովը նախկինում բացառապես խորհրդատվական մարմին էր, սակայն պահուստների կառավարման եռամակարդակ համակարգի ներդրումից հետո վերջինիս շնորհվել է որոշումներ կայացնելու իրավասություն:

Պահուստների կառավարման կատարողականի վերաբերյալ Ֆինանսական վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ Խորհրդին: Բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ Կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն Օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման պայմաններում եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով: Այս նպատակով Բանկի Ֆինանսական վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշների նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար Բանկի Խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշները ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբն իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային պահուստների վարկային որակը գնահատելու համար Բանկը գնահատում է գործընկերների վարկունակությունը՝ հիմք ընդունելով միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհված վարկանիշները:

Խումբը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պետական մարմինների, ֆինանսական կազմակերպությունների և վերազգային կազմակերպությունների թողարկած արժեթղթերի համար: Այդ վարկանիշները չեն կարող ցածր լինել որոշակի սահմանված նվազագույն մակարդակից, որը պարբերաբար վերանայվում է:

Վարկային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա թույլ է տալիս գնահատել ընկերության անվճարունակության հավանականությունը: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող վարկանիշների բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և վարկային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Վարկային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ այլ վարկային ապահովման

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության տարրերի (ներառյալ՝ ածանցյալ գործիքների)՝ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը, նախքան գլխավոր հաշվանցման և գրավադրման պայմանագրերի միջոցով ռիսկի նվազեցումը, լավագույնս ներկայացված է դրանց հաշվեկշռային արժեքով:

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, հաշվեկշռային արժեքները ցույց են տալիս ընթացիկ, բայց ոչ առավելագույն վարկային ռիսկին ենթարկվածությունը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

Ֆինանսական գործիքների յուրաքանչյուր դասի՝ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածության մանրամասների համար անհրաժեշտ է դիտարկել համապատասխան ծանոթագրությունները:

Վարկային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի

Խմբի ֆինանսական ակտիվները, բացառությամբ բաժնային ներդրումների, դասակարգվում են ըստ Խմբի գործընկերներին Fitch IBCA, Moody's և Standard & Poor's վարկանշային գործակալությունների կողմից շնորհված վարկանիշներից նվազագույնի: Ստորև ներկայացված են վարկանիշներն ըստ Moody's վարկանշային գործակալության կոդերի՝ օգտագործելով Bloomberg տեղեկատվական համակարգի վարկանիշների համապատասխանության աղյուսակը: AAA+ վարկանիշն օգտագործվում է չափազանց հուսալի ֆինանսական հաստատությունների, ինչպիսին Միջազգային հաշվարկների բանկն է (BIS), նույնականացման համար:

հազար ՀՀ դրամ

	Վարկային վարկանիշ	31 դեկտեմբերի 2017 թ. Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում	31 դեկտեմբերի 2016 թ. Գումար	%-ը ֆինանսական ակտիվներում
Ֆինանսական ակտիվներ՝ ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված					
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով					
- Նոստրո հաշիվներ	P-1	286,106,719	84.5	387,653,933	91.6
	P-2	–	0.0	2,536,092	0.6
	Վարկանիշ առկա չէ	1,065,540	0.3	829,258	0.2
	NP	22,750	0.0	37,680	0.0
- ժամկետային ավանդներ	P-1	27,355,880	8.1	22,341,229	5.3
	Վարկանիշ առկա չէ	6,248,100	1.9	6,687,090	1.6
- Հակադարձ հետգնման պայմանագրեր	P-1	14,533,961	4.3	-	0.0
- Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ և տոկոսադրույքի ֆյուչերսի պարտադիր մարժա	P-1	3,118,396	0.9	2,914,810	0.7
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		**338,451,346**	**100.0**	**423,000,092**	**100.0**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ					
- Պետական պարտատոմսեր	Aaa	322,084,178	45.6	239,537,627	40.4
	Aa1-Aa3	24,755,725	3.5	33,038,691	5.6
	A1	–	0.0	4,853,108	0.8
- Պետական գործակալությունների պարտատոմսեր և այլ արժեթղթեր	Aaa	42,460,098	6.0	107,076,919	18.0
	Aa1-Aa3	34,739,284	4.9	27,615,942	3.8
	A1-A3	4,859,913	0.7	4,956,437	0.8
- Այլ արժեթղթեր	Aaa	207,512,790	29.3	106,958,695	18.0
	Aa1-Aa3	56,124,543	7.9	67,604,108	12.2
- Փողի շուկայի գործիքներ	Վարկանիշ առկա չէ	14,524,124	2.1	-	0.0
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba2	-	0.0	2,352,333	0.4
Ընդամենը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ		**707,060,655**	**100.0**	**593,993,860**	**100.0**
Վաճառքի համար մատչելի ակտիվներ՝ բացառությամբ բաժնային ներդրումների					
- ՀՀ Կառավարության պետական արժեթղթեր	Ba2	17,521,378	19.2	21,204,072	21.0
- Կառավարության կողմից թողարկված մուրհակ	Ba2	73,810,843	80.8	73,810,843	73.0
- Կորպորատիվ պարտատոմսեր	Վարկանիշ առկա չէ	-	0.0	6,111,734	6.0
Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ՝ բացառությամբ բաժնային ներդրումների		**91,332,221**	**100.0**	**101,126,649**	**100.0**
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ					
- Պետական պարտատոմսեր	Aa1-Aa3	4,566,163	14.2	-	0.0
- Պետական գործակալությունների պարտատոմսեր	Aaa	–	0.0	1,811,606	5.8
	Aa1-Aa2	10,749,712	33.5	9,844,131	31.3
- Այլ արժեթղթեր	Aaa	16,774,068	52.3	17,005,568	54.1
	Aa1	-	0.0	2,769,976	8.8
Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ		**32,089,943**	**100.0**	**31,431,281**	**100.0**

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված ընթացիկ հաշիվներն ու ժամկետային ավանդները կազմել են համապատասխանաբար 551,368 հազար ՀՀ դրամ և 6,248,100 հազար ՀՀ դրամ գումարի չափով (2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 459,005 հազար ՀՀ դրամ և 6,687,090 հազար ՀՀ դրամ) և հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպությունների՝ տեղական առևտրային բանկերում ընթացիկ հաշիվներ և ներդրած ավանդներ:

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկանիշ չունեցող վարկային խմբում ներառված փողի շուկայի գործիքները՝ 14,524,124 հազար ՀՀ դրամ արժեքով (2016 թ. դեկտեմբերի 31-ին՝ 0 ՀՀ դրամ), հանդիսանում են Միջազգային հաշվարկների բանկի կողմից թողարկված արժեթղթեր, և համարվում է, որ ունեն ցածր վարկային ռիսկ:

2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 6,111,734 հազար ՀՀ դրամ արժեքով չվարկանշված կորպորատիվ պարտատոմսերը հանդիսանում են Խմբի դուստր կազմակերպություններից մեկի ներդրումները տեղական ներդրումային և զարգացման հիմնադրամներում:

հազար ՀՀ դրամ

		31 դեկտեմբերի 2017 թ.		31 դեկտեմբերի 2016 թ.	
	Վարկային վարկանիշ	**Գումար**	**%-ը ֆինանսական ակտիվներում**	**Գումար**	**%-ը ֆինանսական ակտիվներում**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով					
- Վարկեր բանկերին և ֆինանսական կազմակերպություններին KfW-ի, Համաշխարհային բանկի, Ասիական զարգացման բանկի և Եվրոպական ներդրումային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	6,448,926	5.3	7,601,310	7.2
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	116,361,221	94.7	98,293,641	92.8
Ընդամենը		**122,810,147**	**100.0**	**105,894,951**	**100.0**
- Հիփոթեքային վերաֆինանսավորում	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	3,526,397	5.0	1,429,870	2.3
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	67,147,071	95.0	59,828,742	97.7
Ընդամենը		**70,673,468**	**100.0**	**61,258,612**	**100.0**
- Առևտրային բանկերում տեղաբաշխված ավանդներ և թղթակցային հաշիվներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	11,167,490	22.4	4,181,922	8.3
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	38,684,859	77.6	46,182,174	91.7
Ընդամենը		**49,852,349**	**100.0**	**50,364,096**	**100.0**
- Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	36,918,863	100.0	45,707,770	100.0
Ընդամենը		**36,918,863**	**100.0**	**45,707,770**	**100.0**
- Ներդրումներ՝ դասակարգված որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր	Մարվել են հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո	580,036	2.4	389,951	2.8
	Վճարման ենթակա չեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ	23,345,000	97.6	13,401,129	97.2
Ընդամենը		**23,925,036**	**100.0**	**13,791,080**	**100.0**
- Այլ վարկեր		3,328,662	100.0	7,324,837	100.0
Ընդամենը		**3,328,662**	**100.0**	**7,324,837**	**100.0**
Ընդամենը բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով		**307,508,525**	**-**	**284,341,346**	**-**

Բանկը որոշումներ է կայացնում տեղական բանկերում և ֆինանսական կազմակերպություններում միջոցների տեղաբաշխման վերաբերյալ՝ հաշվի առնելով իր՝ որպես բանկային ոլորտի կարգավորողի և վերջին ատյանի վարկատուի դերակատարումը և, հետևաբար, չի շնորհում վարկանիշներ տեղական բանկերին և ֆինանսական կազմակերպություններին: Այսպիսով, տվյալ ակտիվների վարկային որակի վերլուծությունը սահմանափակվում է համապատասխան գործարքի փուլով:

Արժեզրկման գնահատում

Ֆինանսական ակտիվների արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օր, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների խախտման դեպքեր: Խումբն արժեզրկման գնահատումն իրականացնում է երկու պահուստների մակարդակով՝ անհատական և խմբային հիմունքներով գնահատվող պահուստներ:

Անհատապես գնահատվող պահուստներ

Խումբը սահմանում է Խմբի ֆինանսական ակտիվներում յուրաքանչյուր անհատապես նշանակալի ակտիվի պահուստի ստեղծման անհրաժեշտությունն անհատապես: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները՝ բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման իրացման արժեքը, ինչպես նաև ակնկալվող դրամական միջոցների ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ

Անհատապես էական չհանդիսացող վարկերի, ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշներ չունեցող ֆինանսական ակտիվների գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում՝ յուրաքանչյուր վարկային պայուսակ դիտարկվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պայուսակի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշների բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պայուսակի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, համապատասխան մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի այն, որ պահանջվում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծումը, ինչպես նաև ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային բանկերի հետ Խումբն ուներ հակադարձ հետգնման պայմանագրեր, որոնք ներառված են հաշվանցման գլխավոր համաձայնություններում, և որոնք դեֆոլտի դեպքում ենթակա են կատարման: Խումբը կատարել է նաև մարժային ավանդներ, որոնք գրավ են հանդիսանում իր չհատուցված ածանցյալ գործիքների համար: Դեֆոլտի դեպքում հավատարմագրային կառավարիչը կարող է մարժային ավանդի հետ հաշվանցել Խմբի պարտավորությունները:

Ստորև ներկայացվող աղյուսակում ներառված են հաշվանցման ենթակա իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ նմանատիպ պայմանագրերի առարկա (ISDA, RISDA և այլն) հանդիսացող ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները, որոնք չեն հանգեցնում հաշվանցման ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում:

հազար ՀՀ դրամ

2017 թ. դեկտեմբերի 31	Ֆինանսական գործիքներ	Ֆինանսական գործիքներ մասին հաշվետվությունում չհաշվանշվող գումարներ	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ			
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	51,452,824	–	51,452,824
Ընդամենը	**51,452,824**	**–**	**51,452,824**

2017 թ. դեկտեմբերի 31	Ֆին. վիճակի մեջ ներկայացված զուտ գումարներ	Ֆին. վիճակի մեջ հաշվեգրման ենթակա չեղարկման իրավունքով հաշվանշվող գումարներ	Ֆին. վիճակի մեջ ներկայացված ակտիվների/պարտավորությունների համախմբված գումար	Ֆինանսական գործիքների հետ կապված ստացված/տրամադրված ֆինանսական միջոցների գրավ	Զուտ գումար
Ֆինանսական ակտիվներ					
Հետգնման պայմանագրեր և այլ մեկօրյա միջոցներ	45,707,770	–	45,707,770	45,707,770	–
Ընդամենը	**45,707,770**	**–**	**45,707,770**	**45,707,770**	**–**

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորությունները ըստ աշխարհագրական կենտրոնացման.

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.				31 դեկտեմբերի 2016 թ.			
	Հայաստան	**ՏՀՋԿ**	**ԱՊՀ և այլ երկրների բանկեր**	**Ընդամենը**	**Հայաստան**	**ՏՀՋԿ**	**ԱՊՀ և այլ երկրների բանկեր**	**Ընդամենը**
Ակտիվներ								
Կանխիկ դրամ	45,575,878	–	–	**45,575,878**	24,771,453	-	-	24,771,453
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	6,799,467	331,114,957	536,922	**338,451,346**	7,146,095	415,433,695	420,302	423,000,092
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	307,508,525	–	–	**307,508,525**	284,341,346	-	-	284,341,346
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	–	707,060,655	–	**707,060,655**	2,352,333	591,641,527	-	593,993,860
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	–	202,928	–	**202,928**	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	92,039,044	2,321,188	–	**94,360,232**	101,788,443	2,209,431	-	103,997,874
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	–	32,089,943	–	**32,089,943**	-	31,431,281	-	31,431,281
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	–	92,296,129	–	**92,296,129**	-	85,480,295	-	85,480,295
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	76,133,890	–	–	**76,133,890**	77,089,263	-	-	77,089,263
Այլ ակտիվներ	15,254,120	227,616	97,272	**15,579,008**	13,492,197	1,530,962	80,808	15,103,967
Ընդամենը ակտիվներ	**543,310,924**	**1,165,313,416**	**634,194**	**1,709,258,534**	**510,981,130**	**1,127,727,191**	**501,110**	**1,639,209,431**
Պարտավորություններ								
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	516,094,481	–	–	**516,094,481**	455,401,582	-	-	455,401,582
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	564,189,843	411,900	303,576	**564,905,319**	587,465,855	13,072	210,505	587,689,432
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,184	–	–	**13,184**	28,177	51,773	-	79,950
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	162,743,850	–	–	**162,743,850**	185,120,785	-	-	185,120,785
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	291,752,144	–	**291,752,144**	-	279,123,932	-	279,123,932
Այլ փոխառություններ	–	147,200,496	8,381,125	**155,581,621**	-	108,188,703	5,004,020	113,192,723
Թողարկված պարտատոմսեր	4,751,824	–	–	**4,751,824**	8,788,038	-	-	8,788,038
Այլ պարտավորություններ	4,796,663	238,603	111,955	**5,147,221**	4,212,549	222,670	-	4,435,219
Ընդամենը պարտավորություններ	**1,252,589,845**	**439,603,143**	**8,796,656**	**1,700,989,644**	**1,241,016,986**	**387,600,150**	**5,214,525**	**1,633,831,661**
Զուտ ակտիվներ	**(709,278,921)**	**725,710,273**	**(8,162,462)**	**8,268,890**	**(730,035,856)**	**740,127,041**	**(4,713,415)**	**5,377,770**

Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պարտավորությունները վերջիններիս մարման ժամկետում: Բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման, Կառավարության արտաքին վճարումների սպասարկման, ինչպես նաև ներքին շուկայում ազգային արժույթի կտրուկ տատանումների հարթեցման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է կանխիկի և իրացվելիության ծավալների ճիշտ կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները, ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշների ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 և 2016 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտավորությունները՝ ըստ մնացորդային պայմանագրային ժամկետայնության: Ժամկետայնության աղյուսակում բացահայտված պարտավորությունների գումարները պայմանագրային չզեղչված դրամական միջոցների հոսքեր են: Այդ չզեղչված դրամական միջոցների հոսքերը տարբերվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված գումարից, քանի որ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներառված գումարը հիմնված է զեղչված դրամական միջոցների հոսքերի վրա: Ածանցյալ ֆինանսական գործիքները ներառված են վճարվելիք կամ ստացվելիք պայմանագրային գումարներով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբն ակնկալում է մինչև մարման ժամկետը փակել ածանցյալի դիրքը, որի դեպքում ածանցյալները ներառվում են՝ ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.						
	Ցպահանջ և 1 ամսից քիչ	1-ից մինչև 3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի	Առանց մարման ժամկետի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	516,094,481	–	–	–	–	–	**516,094,481**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	559,721,795	56,259	462,922	6,750,261	–	–	**566,991,237**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,184	–	–	–	–	–	**13,184**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	51,898,136	66,768,538	45,099,381	331,715	–	–	**164,097,770**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	–	611,419	17,610,445	95,421,483	36,824,739	149,255,083	**299,723,169**
Այլ փոխառություններ	570,500	23,842	11,842,946	67,146,556	98,630,305	–	**178,214,149**
Թողարկված պարտատոմսեր	–	–	495,060	5,133,660	–	–	**5,628,720**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,128,298,096**	**67,460,058**	**75,510,754**	**174,783,675**	**135,455,044**	**149,255,083**	**1,730,762,710**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.						
	Ցպահանջ և 1 ամսից քիչ	1-ից մինչև 3 ամիս	3 ամսից մինչև 1 տարի	1-ից մինչև 5 տարի	5 տարուց ավելի	Առանց մարման ժամկետի	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	455,401,582	-	-	-	-	-	**455,401,582**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	584,461,402	47,434	2,472,976	1,327,832	-	-	**588,309,644**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,950	-	-	-	-	-	**79,950**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	53,700,664	97,147,271	35,248,064	1,028,752	-	-	**187,124,751**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	-	372,121	14,269,746	87,065,212	42,462,439	140,854,294	**285,023,812**
Այլ փոխառություններ	498,237	-	7,211,169	45,150,654	76,986,933	-	**129,846,993**
Թողարկված պարտատոմսեր	-	-	4,782,360	5,628,720	-	-	**10,411,080**
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**1,094,141,835**	**97,566,826**	**63,984,315**	**140,201,170**	**119,449,372**	**140,854,294**	**1,656,197,812**

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Խմբի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի, տոկոսադրույքների և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների: Բացի արտարժույթի կենտրոնացման ռիսկից, Խումբը շուկայական ռիսկի զգալի կենտրոնացում չունի:

Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյունքում:

Եռամակարդակ կառավարման ներքո Բանկի Խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: Այն նաև սահմանում է պայուսակի օպտիմալացման սկզբունքները: Բանկի Խորհրդի՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս՝ երեք տարի) և 95% հավանականությամբ ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով՝ ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշների ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշների սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սպրեդների վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Բլեք-Լիթերմանի և Մարկովիցի մոդելների միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ինչ վերաբերում է ռիսկի մոնիթորինգին, ապա ֆինանսական վարչության ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից կիրառվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք ցուցանիշներ. Ռիսկային արժեքի մեթոդ (VaR), Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սպրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 2017 և 2016 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի մարման ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	2017 թ.		2016 թ.	
	Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.	Ազդեցությունը սեփական կապիտալի վրա	Եկամտաբերության կորի փոփոխությունը, բ.կ.	Ազդեցությունը սեփական կապիտալի վրա
ՀՀ դրամ	+160	(995,556)	+370	(2,831,725)
ՀՀ դրամ	-350	2,717,165	-370	3,901,482

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է 2017 և 2016 թվականների դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական ակտիվները իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից: Ներկայացված գումարներն արտահայտված են աղյուսակում նշված արժույթներով:

Արժույթ	2017 թ.		2016 թ.	
	Բազիսային կետերի փոփոխություն	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)	Բազիսային կետերի փոփոխություն	Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների և սեփական կապիտալի զուտ արդյունքի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	+/-50	(2,627,873)/2,627,873	+/-50	(2,138,813)/2,138,813
Եվրո	+/-50	(775,900)/775,900	+/-25	(812,525)/812,525

2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ունի նաև լողացող տոկոսադրույքով չմարված պարտավորություններ:

Աղյուսակը ներկայացնում է 2017 թ. դեկտեմբերի 31-ի և 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է՝ ելնելով Խմբի կողմից ստացված փոխառությունների տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	2017 թ.		2016 թ.	
	Բազիսային կետերի փոփոխություն	Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)	Բազիսային կետերի փոփոխություն	Զուտ տոկոսային ծախսի աճ/(նվազում) և սեփական կապիտալի նվազում/(աճ)
ԱՄՆ դոլար	+/- 110	239,464/(239,464)	+/- 50	115,494/(115,494)
ՀՓԻ	+/- 50	627,273/(627,273)	+/- 20	217,417/(217,417)

Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ 3-ում ներառված իրական արժեքի գնահատման մեթոդի համար օգտագործված ելակետային տվյալների զգայունությունը բացահայտված է Ծնթգ. 29-ում:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Բանկի Խորհուրդը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով կանոնակարգերի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ՀՀ դրամի նկատմամբ կիրառված փոխարժեքների ողջամտորեն հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

հազար ՀՀ դրամ

Արժույթ	2017 թ.		2016 թ.	
	Փոխարժեքի աճ (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)	Փոխարժեքի աճ (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	3.50%	21,648,693	6.00%	32,539,996
Եվրո	13.70%	16,035,808	11.00%	11,414,925
Բրիտանական ֆունտ	10.00%	3,815,183	12.00%	4,190,279
Ճապոնական իեն	8.50%	2,023,396	13.00%	3,139,391
Ռուսական ռուբլի	20.00%	18,287	21.00%	26,420
ՀՓԻ	6.50%	(13,509,498)	8.25%	(16,388,432)

հազար ՀՀ դրամ

Արժույթ	2017 թ.		2016 թ.	
	Փոխարժեքի նվազում (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)	Փոխարժեքի նվազում (%)	Շահույթի և սեփական կապիտալի աճ/(նվազում)
ԱՄՆ դոլար	-3.50%	(21,648,693)	-6.00%	(32,539,996)
Եվրո	-6.30%	(7,374,131)	-11.00%	(11,414,925)
Բրիտանական ֆունտ	-10.00%	(3,815,183)	-17.00%	(5,936,229)
Ճապոնական իեն	-8.50%	(2,023,396)	-13.00%	(3,139,391)
Ռուսական ռուբլի	-20.00%	(18,287)	-17.50%	(22,016)
ՀՓԻ	-5.50%	11,431,113	-8.25%	16,388,432

Փոխարժեքների ակնկալվող փոփոխությունը որոշվել է Խմբի կողմից՝ վերլուծելով տարեկան ստանդարտ շեղումները՝ հիմք ընդունելով համապատասխան փոխարժեքների պատմական շուկայական տվյալները:

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին՝ յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է և արտարժույթի պահանջարկի խթանման հիմնական գործոնը: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

Գործառնական ռիսկ – հսկողություն դուստր ընկերությունների նկատմամբ

Ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 2-ում, Բանկն ունի կապիտալ ներդրումներ մի քանի դուստր կազմակերպություններում, որոնք ներգրավված են ֆինանսական հատվածի զարգացման և ենթակառուցվածքային գործունեության մեջ: Նման ներդրումների նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության ֆինանսական հատվածի զարգացմանը, ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեությունը, որը, ինչպես նշված է Օրենքում, Բանկի նպատակներից մեկն է:

Բանկը դուստր կազմակերպությունների գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է հետևյալ կերպ.

- Բաժնետերերի ժողովներին մասնակցություն:
- Դուստր կազմակերպությունների ղեկավարների նշանակում (յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակվում է բաժնետերերի կողմից, և յուրաքանչյուր դուստր կազմակերպության Տնօրենների խորհուրդը նշանակում է Գործադիր տնօրեններ):
- Առնվազն յուրաքանչյուր տարի դուստր կազմակերպությունների գործունեության արդյունքների վերլուծություն՝ ֆինանսական տեղեկատվության դիտարկման միջոցով, ներառյալ դուստր կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտի արդյունքների դիտարկումը:
- Դուստր կազմակերպությունների հետագա ռազմավարական զարգացման վերլուծություն, անհրաժեշտության դեպքում նաև ներդրումների դադարեցման ռազմավարության մշակում:
- Ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա դուստր կազմակերպությունների գործունեությունների վերանայում Բանկի ներքին աուդիտի աշխատանքների շրջանակում:

2015 թվականին Բանկը որդեգրել է քաղաքականություն՝ ակտիվացնելու բանակցությունները հնարավոր ինստիտուցիոնալ ներդրողների հետ՝ դուստր կազմակերպություններում Բանկի ներդրումների օտարման ուղղությամբ:

31. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակներում ներկայացված է հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում կամ ավելի ուշ փոխհատուցվող կամ մարվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2017 թ.		
	Ընթացիկ	**Ոչ ընթացիկ**	**Ընդամենը**
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	45,575,878	–	**45,575,878**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	333,610,346	4,841,000	**338,451,346**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	707,060,655	–	**707,060,655**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	110,217,371	197,291,154	**307,508,525**
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	202,928	–	**202,928**
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	78,370,115	15,990,117	**94,360,232**
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	28,804,391	3,285,552	**32,089,943**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	3,498,833	88,797,296	**92,296,129**
Հիմնական միջոցներ	–	73,096,780	**73,096,780**
Ոչ նյութական ակտիվներ	–	3,037,110	**3,037,110**
Այլ ակտիվներ	13,021,003	2,558,005	**15,579,008**
Ընդամենը ակտիվներ	**1,320,361,520**	**388,897,014**	**1,709,258,534**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	516,094,481	–	**516,094,481**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	559,657,039	5,248,280	**564,905,319**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	13,184	–	**13,184**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	162,422,906	320,944	**162,743,850**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	16,529,679	275,222,465	**291,752,144**
Այլ փոխառություններ	9,698,462	145,883,159	**155,581,621**
Թողարկված պարտատոմսեր	41,224	4,710,600	**4,751,824**
Այլ պարտավորություններ	5,111,688	35,533	**5,147,221**
Ընդամենը պարտավորություններ	**1,269,568,663**	**431,420,981**	**1,700,989,644**
Զուտ դիրք 2017 թ. դեկտեմբերի 31-ին	**50,792,857**	**(42,523,967)**	**8,268,890**

հազար ՀՀ դրամ

	31 դեկտեմբերի 2016 թ.		
	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընդամենը
Ակտիվներ			
Կանխիկ դրամ	24,771,453	-	**24,771,453**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով	420,580,392	2,419,700	**423,000,092**
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	593,993,860	-	**593,993,860**
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ և ներդրումներ տեղական արժույթով	122,329,202	162,012,144	**284,341,346**
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	82,129,257	21,868,617	**103,997,874**
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	16,284,401	15,146,880	**31,431,281**
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	1,685,591	83,794,704	**85,480,295**
Հիմնական միջոցներ	-	75,507,181	**75,507,181**
Ոչ նյութական ակտիվներ	-	1,582,082	**1,582,082**
Այլ ակտիվներ	12,260,003	2,843,964	**15,103,967**
Ընդամենը ակտիվներ	**1,274,034,159**	**365,175,272**	**1,639,209,431**
Պարտավորություններ			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	455,401,582	-	**455,401,582**
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	586,741,152	948,280	**587,689,432**
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	79,950	-	**79,950**
Պարտավորություններ Կառավարության հանդեպ	184,157,954	962,831	**185,120,785**
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	13,468,438	265,655,494	**279,123,932**
Այլ փոխառություններ	5,830,566	107,362,157	**113,192,723**
Թողարկված պարտատոմսեր	4,077,438	4,710,600	**8,788,038**
Այլ պարտավորություններ	4,401,304	33,915	**4,435,219**
Ընդամենը պարտավորություններ	**1,254,158,384**	**379,673,277**	**1,633,831,661**
Զուտ դիրք 2016 թ. դեկտեմբերի 31-ին	**19,875,775**	**(14,498,005)**	**5,377,770**

32. Ֆինանսավորման գործունեության արդյունքում առաջացող պարտավորությունների փոփոխություն

	Ընդամենը պարտավորություններ ֆինանսական գործունեությունից
Հաշվեկշռային արժեք 2015 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**355,133,156**
Ստացված վարկեր	38,898,587
Մարված վարկեր	(7,998,714)
Արտարժույթի վերագնահատում	(10,852,539)
ԱՄՀ բաժնեմաս՝ վճարված մուրհակի միջոցով	18,622,225
Այլ	123,713
Հաշվեկշռային արժեք 2016 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**393,926,428**
Ստացված վարկեր	52,568,044
Մարված վարկեր	(23,274,235)
Արտարժույթի վերագնահատում	24,703,243
Այլ	375,753
Հաշվեկշռային արժեք 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**448,299,233**

«Այլ» տողը ներառում է հաշվեգրված, սակայն դեռևս չվճարված տոկոսները: Խումբը վճարված տոկոսները դասակարգում է որպես դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից:



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ